

ԱԳԻՆ ԺԱ. ՏԱՐԻ 1972 ՀՈԿՏԵՄԲԵՐ ԹԻՒ 10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ . . . . . Գիրք քառսի ու լոյսի...

Ց. ՄԱՆՈՒԿԵԱՆ . . . . . Խորհուրդ

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ . . . . . Ցասում

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ . . . . . Երախին մէջ առասպելի փրփուրին...

Պ. ԳՈՒԲԵԼԵԱՆ . . . . . Գուլային ազջիկը

Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ . . . . . Ձգողութեան դաշտեր

... . Սոլժենիցինի պոռթկումը

ԱԼ. ՍՈԼԺԵՆԻՑԻՆ . . . . . Նապէլեան ճառ (Թարգմ. Լ. Մ.)

Ն. ՁԱՐԽՈՒՏԵԱՆ . . . . . Ժերաք տը Ներվալ

Ա. ՏՕՆՈՅԵԱՆ . . . . . Տագնապահար երիտասարդութիւնը

Մ. ԷԼՍԻՆ . . . . . Ժան Ժրնէ (Թարգմ. Է. Սարաճեան)

Բազմն

ԱՅՍԱՓԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԱ. ՏԱՐԻ, ԹԻՎ 10 — ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1972 — ՊԷՅՐՈՒԹ

Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Հայը, ըլլայ հեթանոս, ըլլայ քրիստոնեայ, ըլլայ անհաւատ, ըլլայ քերթահաւատ, ունի գեղագոյն կրօն մը, որ յաւիտենական է, ընդհանրական է, գերիվեր·— Ազատասիրութիւնը:

Ինչ կ'արժեն մարդկային գիտութեան մեծագործութիւնները, հրթիռներու արձակումները անհունին մէջ, երբ տակաւին մարդը ազատ չէ անցնելու սահմանէ սահման, երկրի վրայ:

ԳԻՐՔ ՔԱՌՍԻ ՈՒ ԼՈՅՍԻ...

ՏԵՍԻԼ

(ՊԱՏԿԵՐԱՇԱՏ — ՊԱՏԳԱՄԱՆԻ)

Սեպտեմբերի երեկոյ մըն էր:

Սենեակիս մէջ մինակ էի ու տրտում:

Ամբողջ օրը ապատած էի նամակի մը, որ պիտի դար հեռուէն, հաղորդելով աւետիս մը կամ ձախորդութիւն մը:

Գիրը չէի ընդունած։

Կանուխէն մտած էի անկողին, տագնապահար, տենդահար։

Տագնապը կը տեւէր ամէնքէ է վեր։ Կար անել մը՝ արգելքներով նորանոր։ Ճակատագիրը անգամ մը եւս դրած էր դիս լաբիւրինթոսի մը մէջ, ու կը ապաէի, որ յանկարծ, ըստ իր սովորութեան, բանար ապահով մը լոյսի։ Այդ տագնապէն տպաւորուած՝ հոգիս կ'ուտէր մարմինս, ու մարմինս կ'ուտէր հոգիս։

Մերթ մէջս կը զգայի լերան չափ ծանրութիւն։ Ասուծմով դեռ կանդուն էի, տակաւին կանգուն էր կորովիս կոթողը, Ասուծմով։

Կը թաւալէի յոյսէն դէպի վհատութիւն, եւ դարձեալ դէպի յոյս։

Դէպք մը, մեր ընտանիքին վերաբերող ու միանգամայն մաս կազմող հայկական ողբերգութեան, ինը ամիսէ ի վեր, կը յուզէր մեզ խորապէս։ Կը ջանայինք կատար հանել կարգադրութիւն մը։ Մեր ձեռնարկները ձախորդ կ'ելնէին։ Անգամ մը եւս կ'անդրադառնայինք այն չարիքներուն, որոնք գործուեցան օտարներու, նոյնիսկ Հայերու կողմէ, Հայերուն դէմ։ Չարիքներ, որոնք կը շարունակուին տարբեր ձեւերով, ու մեզ կ'ալեկոծեն հիմնապէս։ Ինը ամիսէ ի վեր, մեր էութիւնը լեցուած ու յորդած էր այդ ցաւալի խնդրով, եւ որուն կարգադրութեան յապաղումով կը դառնար առաւել եւս ցաւալի։

Մինակ էի ու մելամաղձոտ...

Ամէն շաբթու մէջ, դիշեր մը կը մնամ մինակ, եւ անեակիս առանձնութեան զոյը, եւ զիս շրջապատուած կը զգամ խումբ մը սիրելի մեռելներու ուրուականներով։ Նոյնիսկ երբեմն ինծի կը թուի, թէ կը զգամ անոնց չափազանց մերձաւորութիւնը, երբ պառկած եմ մահուանդ։ Կը հակին, կը հակին վրս, բարեացակամ պահպանութեամբ։ Ուժգնօրէն ինծի կը թուի, թէ մտերիմ մեռելներս կը յաճախեն, յանուն բարեհաճութեան, փափաքելով զիս զգուշացնել չարաչար գործէ, պաշտպանել յոգնութենէ, հիւանդութենէ, կամ ներշնչել, թելադրել, յորդորել, հոգեզինել։ Տասնեակ տարիներէ ի վեր, դժբախտութեան եւ առանձնութեան օրերուս, եւ զիս կը զգամ յաճախուած բարեբար ուրուականներէ։ Գիշերը զիս կը տանի անցեալին, իսկ անցեալացած դէմքեր կը խուժեն դէպի ներկան, կը պաշարեն զիս սիրողաբար, կամ կը մտնեն յիշողութեանս հիւրասրահը...

Պառկած կը դիտէի երկինքը։

Կը լսէի հեռուներէն՝ հովին ոռնալը, նման գայլի։ Երկնամարին կանաչորակ դաշտերէն կը փախչէին ոսկեգոյն ամպերը՝ ահաբեկած ոչխարներու պէս։

Զարագուշակ էր հովին ձայնը, բայց ան եղաւ եղերական օրոր, ու եւս յաղողեցայ յաղթահարուիլ քունէն։

Երբ արթնցայ, ժամը առաւօտեան չորսուկէսն էր։

Կատղած էր փոթորիկը։ Այս անգամ գայլերն էին, որոնք կը փախչէին երկնի վրայէն, հալածուած մռնչող առիւծներէ։

Տեսած էի անօրինակ ու երկար երազ մը։ Ի՞նչ երազ էր խորհրդանշական. տեսի՞լ էր...

Ամենայն ինչ մոռցած, երազիս տպաւորութեան տակ էի, մասամբ զարմանահար, ամբողջովին զմայլահար։

Շուարած կանգնած էի, երկու ձեռքով գոնաջ կլուխս, ու կը մտածէի.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZU... - ՀՍՍՀ

— Սա գանկիս մէջ, սա ուղեղիս մէջ, որքան տարաբնական տեսիլ էր Երազս, որուն եղայ հանդիսատես եւ ականջդիր։ Այդ տարաբնական տեսիլով կարելի էր լեցնել աշխարհի քառորդը, մինչդեռ ան իր ծաւալուն եւ յարափոփոխ տեսարանները բացաւ բջիջներուն մէջ ուղեղիս...

Որոշապէս կը յիշէի Երազս, սկիզբէն մինչեւ վախճան։

Պիտի պատմեմ պարզեւչտորէն։ Եւ եթէ գտնուին սկեպտիկներ, որոնք չհաւատան, պիտի չմեղադրեմ զիրենք, քանզի Երազս անօրինակ է, եւ գուցէ ես ալ տարակուսէի՝ եթէ ուրիշ մը պատմէր ինծի։

Կ'ընդգծեմ, որ երեւակայուած Երազ մը չէ այս, այլ իրականութիւն է իբրեւ երազ։ Եւ որեւէ անվայել նկատումով չէ, որ կ'արձանագրուի։ Ուրեմն կը ինդրեմ, որ ոչ ոք կասկածի կամ դայթակղի։ Եթէ կ'արձանագրեմ այս Երազը՝ առաւելապէս իր պատգամներուն համար է, որոնք, անտարակոյս, չէի կրնար տալ բառ առ բառ, ինչպէս նաեւ առանց պատկերներու։ Կարեւորը իմաստին հանդէպ հաւատարմութիւնն է։

Պատմելէ առաջ Երազս, կը փափաքիմ խօսիլ ուրիշ Երազի մը, եւ ընդհանրապէս երազներու մասին։ Տղայութեանս շրջանին, երազիս մէջ տեսայ մարմար աստիճաններով, անվերջանալի սանդուխ մը, որ կը բարձրանար, կը բարձրանար մինչեւ երկին։ Տարիքիս համար շատ յոգնեցուցիչ այդ մարմարակերտ, լայն սանդուխէն սկսայ բարձրանալ։ Իւրաքանչիւր մարմար աստիճան ունէր կապտորակ երակ մը։ Ես յատկապէս կը կոխէի մարմարներուն այդ կապտաւուն երակներուն վրայ, ու կը տեսնէի, որ անոնք օձեր են եւ կը ճզմուին ոտքերուս տակ։ Չէի վախնար, ընդհակառակն, հանդարտ հաճոյքով մը կը կոխոտէի այդ օձերը։ Վերջապէս, սանդուխին յաջողցաւ սրահ մը, ու ես տեսայ անպատմելի շքեղութեան մէջ, մեր երկնաւոր Հայրը, որ նստած էր բարձրադիր գահու մը վրայ, եւ զգեստաւորուած էր պատարագուոր արքեպիսկոպոսի մը նման։ Շրջապատուած էր շքախումբով։ Իր մօտ կեցողները հաւանաբար սուրբեր էին. մարգարէներ, առաքեալներ, հայրապետներ, մարտիրոսներ, ճգնաւորներ։

Գլուխը ունէր գոհարակուռ չափալիճակ, եւ կը խօսէր իր շուրջը, աստիճաններու վրայ կանգնած արքայազնակներուն։ Բոլորն ալ կը գտնուէին լուսոյ ջրվէժի մը ներքեւ։

Իսկ ես զմայլահար կանգնած էի Աստուծոյ առջեւ, քիչ մը քովնտի։ Երբ առաւօտուն Երազս պատմեցի մայրիկիս, անոր դէմքին վրայ ծաղկեցաւ ու ծաւալեցաւ լուրջ ժպիտ մը եւ բան.

— Լաւ երազ է, տղա՛ս, շատ լաւ երազ է, ամէնէն լաւն է տեսածդ...

Տարիներ յետոյ, երբ առաջին անգամ ըլլալով երազահան մը անցաւ ձեռքս, անմիջապէս փափաքեցայ կարդալ, թէ ինչե՞ր գրուած են «Աստուած» բառին դիմացը։ Գրքին սկիզբն էր սրբազնասուրբ բառը, ու կը խոստանար բարեմասնութիւններ, որոնք մէկիւրէն էջ լեցուցած էին։

Այնուհետեւ, յաճախ, ընկերներուս կ'ըսէի, երբ կը խօսուէր երազի մասին.

— Գիտէ՞ք, ես երազիս մէջ տեսած եմ Աստուածը...

Ըսել կ'ուզէի, թէ ես արժանացած էի տեսնելու լաւագոյն երազը, թէ պիտի օժտուէի բացառիկ բարեմասնութիւններով, կամ արդէն իսկ օժտուած էի։

Եւ հիմա, եթէ մէկը ինծի հարցնէ, թէ երազս իրականացա՞ւ, յուզուելով եւ համեստութեամբ պիտի պատասխանեմ։

— Այո՛, բարեկամ, իրականացաւ։ Ինչպէս իրականացան մօրս կողմէ տեսնուած այնքան երազներ իմ մասիս։ Ամէն բանէ առաջ, ըսեմ, որ ծնած եմ, չուտափոյթ մահուան դատապարտուած։ Մի՛ մանրամասնութիւն պահանջէք ինձմէ։ Ապրած եմ, որովհետեւ Աստուած բարեփոխեց ճակատագիրս ծնունդէս քիչ առաջ։ Ասկէ զատ, շարունակելով խոստմանութիւնս, ըսեմ նաեւ, որ հինգ-վեց անգամ ապաստուած եմ ատոյգ մահէ։ Կը զգայի, որ Աստուծոյ պահպանիչ աչքը գլխուս վրայ է, իբրեւ լուսեղէն հովանի։ Ապա, տրուեցաւ ինծի թ՛նչ որ խնդրեցի։ Զեմ խօսիր այլ շնորհներու համար։ այդ մասին պէտք է դատուիլ ուրիշներէն, երբ ես ըլլամ ընդմիշտ բացակայ։ Երբ մարին կրքերը։ Բայց, հաւատա՛, բարեկամ, Աստուծոյ հրաշքն է տակաւին ապրիլս, հակառակ անխոհեմութիւններուս եւ մեղանչումներուս։

Եւ այս անգամ, նոր Երազով մը տեսայ Աստուածամայրը եւ ուրիշ Մայր մը եւ բոլոր ժամանակներու ամենայն Հայոց լուսաբաբաչնը։

Արժանացայ տեսնելու աստուածատաք այդ Երազը, հակառակ մարդկային մեղքերուս։ — Թերահաւատութիւններ, տարակոյսներ, ջղայնութիւններ, վարանումներ, փհատութիւններ, ցանկութիւններ, որոնց ընթացքին հաւատքս — եւ անոր հետ հոգիս — կը պզտիկնար ու կը պղտորէր։

Կը կարծէի, թէ տեսլական Երազի կ՝արժանանան միայն մաքուրները, մանուկ, մեղրածորան հոգիները, թէ իմինիս նման հասուն հոգի մը, ինկած կեանքի մը փուչերով ու փոշիներով առլի, չի կրնար ըլլալ տեսլական Երազի մը արժանի։

Անցեալը — անանցանելի անհուն քաոս — որուն մէջ մաղուած ու թաղուած են շատ բաներ։ եւ երբեմն այդ անյատակ դեղեղմանը կ՝ենթարկուի խորունկ շարժի, եւ պոռթկումով կամ պեղումով իրմէ մեղի կը մատուցուին բրածոներ, բեկորներ, արձաններ, ափնիներ, եւ մերթ ալ տաճարներ ու տեսիլներ։

Կան կամաւոր պեղումներ, ինչպէս՝ պեղումներ ակամայ։ Կան պեղումներ, հոգի, նաեւ հոգիի։ Երբեմն Անցեալը կը յայտնուի, կը յորդի հոգիներու մէջ, մերթ իրապաշտութեամբ, մերթ ալ խորհրդանշական կերպով։ Մնացողները մեկնածներուն թանգարաններն են յաճախ։ Եւ ուրուականները մեր մէջ կը գործեն, կը բանան մէկ քանի քողեր՝ հազարաթող Գաղտնարանէն, մեզի ուսուցանելու կամ աւելի չփոթեցնելու համար։ Ուրուականները կը զբաղին ալ, կը զբօսնուն ալ։ Բայց թելերուն, բիւրաւոր թելերուն ծայրը կեդրոնին մէջ է։

Եթէ կեանքը երազ է, երազանքն ալ կեանք մըն է։ Ոմանք կ՝ապրին կեանքին երազը, ոմանք ալ կ՝ապրին առաւելապէս երազանքին կեանքը։ Երկուքը փոխն ի փոխ ապրողները կը հասուննան աւելի, կ՝ելնին որոշ չափով, ընթանալով իրականութեան եւ իտէալականին զուգահեռական գիծերէն։ Արուեստագէտը պարտի ելեւէջել այդ երկու գիծերուն ընդմէջ, ճանչնալու համար լման կեանքը, ճախրելու համար երազանքին մէջ, ծանօթանալու համար աշխարհին, որ անտեսանելի աշխարհ մը ունի իր մէջ։ Երազանքը կեանքին աննիթական մասն է, ինչպէս հոգին մասունքն է մարմինին, մասունք անտեսանելի։

Տեսիլը կարկառուն ու կոթողական տաճարն է երանելի Երազին։

Ճանչցայ գրանատեղծներ, որոնք լուր չունէին երազանքին գոյու-

թենէն։ Անոնք հոստատուն ու հանդարտ կերպով դամուած էին գետնին վրայ։ Ցիլդ այդ պատճառով՝ դատապարտուած էին մնալու իրենց դանուած տեղը, անընդունակ քայլի ու թռիչքի, եւ խաչելութեան խարկանքով։

Երազանք ու երեւակայութիւն, զգացում ու մտածում՝ նախանիւթերն են արուեստին. անոնցմով է, որ արուեստագէտը կը ստեղծէ իր երկը, տնոր տալով ձեւ ու ձայն, խորք, խոյանք, եւ լոյս ու չունչ։

Երազներին կ'երթանք կամուրջագէս։ Երազը կու գայ մեր կամքէն անկախ գրեթէ։ Երազանքը հոգեմն է, երկինքն է, կանանչն ու կապոյտը կեանքին։ Եթէ վերցուին այդ հոգեմն ու երկինքը՝ կեանքը կը դառնայ, ոմանց համար մանուանդ, քարակոյտ ու քաոս։

Իտէալին երազը ու երեւակայուած երազանքը կը գեղեցկացնեն, կը քաջալերեն կեանքը ու դայն կ'դնեն տանելի։ Մարդ միշտ ձգտումն ունի երկնքէն մաս մը վերածելու երկրի, կամ երկրէն մաս մը հաստնելու երկինք։ Երազանքը այն միակ աշխարհն է, ուր բացարձակ է ազատութիւնը, ուր կը լայնանան ցանկութիւնները, ուր մենք դերծ ենք մեր ճակատագրէն, ուր մե'նք կը տնօրինենք ամենայն ինչ գրեթէ, ուր գժուար թէ ուժ մը կարենայ արգելք մը յարուցանել մեր առջեւ։

Իսկ տեսիլը՝ գալոց մէկ Մատեանին մէկ մասին յաճախ խորհրդանշանական պատկերահանդէսն է, որ Ապագայէն կը հասնի մեզի, մարգարէական հաղորդակցութեամբ, աստուածային առաքումով, իբրեւ պատկերապատգամ։ Հոգին հարկ է ըլլայ առնուազն սրբազան սրտմտութեան մը ալեկոծութեան մէջ, որ մարդ արժանանայ տեսիլի։

Մեծ երազը կամ տեսիլը՝ խորունկ պեղում մըն է, բարձրագոյն բրիչով։ Հոգեկան հողաշերտերէն դուրս եկող՝ գալոց գէպքի մը երեւումն է։

Երբ մարդ եղերական վիճակի մը մէջ է, կամ երբ կ'ապրի ուժգնորէն՝ հաւաքական եղերականութիւն մը՝ կը դառնայ դէրզայուն, ու քունի մէջ, ներքին ու արտաքին եւ վերին աւագ զրկիներուն ենթակայ։ Ալեկոծութիւն մը պատճառ կը դառնայ, որ հեղուկ կամ հաստատուն կոհակները զագաթնան, ու անոնցմէ յայտնուին պատկերներ, որոնք ունին խորհուրդ, իմաստ, գուշակութիւն։

Ցաճախ արթնութեան մէջ երեւակայուած, երազուած, ապրուած կամ մտատանջութիւն պատճառած նիւթ մը՝ կը վերածուի երազի։ Ատոր համար, երազներով մասամբ ճանչնալ կարելի է մէկու մը ներքին կեանքը, զազանաշխարհը. թէ ի'նչերով կը զբաղի, ի'նչերու կը ցանկայ, ի'նչի կը ձգտի։ Առհասարակ այրերու երազներուն մէջ կան կիներ, իսկ կիներու երազներուն մէջ կայ սէրը։

Մարգարէական երազները, որոնք ապագային մասերն են, կ'ապացուցանեն, որ գալոց կեանքը նախասահմանուած է, որ ճակատագիրը կը մնայ անհերքելի։

Անտարակոյս, երազին ու տեսիլին ծննդեան կամ կազմութեան պատճառները՝ մարդուս ներքին մութ լաբիւրինթոսին մէջ կը մնան զաղտնի։ Սակայն, այդ լաբիւրինթոսին երազին պատկանող մասերուն վրայ զետեղուած են որոշ լոյսեր, չարունակելու համար զննութիւնը։

Մարդ եթէ յաճախ՝ երազի մէջ տեսնուած դէմքերն ու դէպքերը կը գտնէ իր ապրումներուն մտերիմ, երբեմն ալ կը տեսնէ այնպիսի երազներ, որոնց պատկերներուն ու պարունակութեան եւ իր անձին միջեւ առընչութիւն մը գտնել՝ կ'ըլլայ անկարելի։

Իսկ տեսլական երազներուն յայտնութիւնը, անկասկած, տէրունական տնօրինութեամբ է, որով մեր՝ գերբնականին անքննելի խորհուրդներէն։

Ըսենք նաեւ, որ մարդուս ներքնատունը լեցուն է բիւրաւոր պահերու եւ պատկերներու, յուզումներու եւ յիշատակներու խառնակոյտով. տեսակ մը մթերանոց հնութիւններու, կամ պրոֆանքէօրի խճողուած խանութ։ Անցեալին պատկանող այդ մասնիկները ենթակայ են ոլորումներու եւ շարժի, ինչպէս նաեւ վերբերումի։ Այդ անձնական թանգարանը մերթ մասամբ միայն կը բացուի ուրիշներուն առջեւ։ Անծանօթ, խորհրդաւոր բեմադրիչ մը այդ պրոֆանքէօրի պարունակութենէն, նաեւ մեր ցանկութիւններէն, դաւերէն, մեր փափաքներէն ու պապակներէն կ'առնէ անհրաժեշտը, եւ մեր ներքին տեսողութեան ու նկրհող լսողութեան եւ յիշողութեան առջեւ կը բեմադրէ երազի խաղեր, յաճախ մեղի ալ դեր մը տալով։ Այդ երազախաղերը մերթ կը բեմադրուին իրապաշտօրէն, մերթ ալ խորհրդանշական կերպով։ Յաճախ եթէ այլանդակութիւններ են, մերթ ալ են ներկայանալի։ Եւ երկարաշունչ ու ճոխ են՝ խիստ հագուստէպօրէն։ Երկարաեւ երազախաղ մը, որուն մանրամասնութիւններն անգամ կը դրոշմուին մեր յիշողութեան մէջ, որուն պատկերներուն մէջ պատգամ մը կ'աղաղակէ, կը կոչուի հոգեսիլքէ, որ լուսեղէն լրջութիւն մըն է, հրաշալի յայտնութիւն մը։ Ահա այսպիսի երազի մը եղայ արժանի։

Որեւէ յաւակնութեամբ չէ, որ խօսեցանք երազի մասին ու տեսիլի։ Հոգեկան պահանջի մը, պարպումի մը ենթարկուեցանք միայն, արտայայտելով մեր հաւատքը, համոզումը, փորձառութիւնը։

***

Եւ արդ պատմեմ երազս, որ երկար երկունքի մը, անդիտակից երէկունքի մը արդասիքն է. տակնուվրայ արուած տեսիլ, կամօքն Աստուծոյ։ (Երբ բնութեան մէջ մասունքին մէջ իսկ կարելի է դտնել Աստուածութիւնը, երեւոյթի մը մէջ աւելի հեշտ է հասատել Հաստիչին ներկայութիւնը։) Ինչպէս չինարար շարժ մը, որ ալեկոծութենէ մը յետոյ ի յայտ կը բերէ, հանդարտած ջուրերուն վրայ, հրաշագեղ հոգամաս մը, իրրեւ կղզի, որ շոտով կը պճնուի թաւուտներով ու թռչուններով։

Կը պտնուէի տարածուն սրահի մը մէջ, որ լեցուն էր հայ հանդիսականներով։ Թէեւ սրահը արդիական էր, նոր ու պարզ, սակայն չկային աթոռներ։ Ամէն ոք կանգնած էր։

Առաջին շարքին վրայ էի, մերձ կեդրոնին։

Բեմը չունէր վարագոյր, ու մինչ հազիւ երեք-չորս քայլ անդին էր։

Ոչինչ դիտէի, ինչո՞ւ անտեղ էի, թէ ի՞նչ պիտի կատարուէր, թէ ով ի՞նչ պիտի ըներ։

Հարցական հայեացքով նայեցայ քովս կեցողին, որ յամրաձայն պատասխանեց.

— Մայր Հայաստանը պիտի պարէ...

— Ի՞նչ...։ Եւ ի՞նչ պիտի պարէ...

— «Հայոց Պատմութիւն» պարը։

Զարմանքս զեղումի մէջ էր։

Մէկը ուարկեց.

— Բայց Մայր Հայաստանը մարմին չէ։ Պարը հոդերուն է, սակայն մարմնին արուեստն է։ Խորհրդանշան մը, խաչ մը, ուրուական մը, ոգի մը կը պարէ՞ միթէ...

Ուրիշ մը պատասխանեց.

— Ոգին յաւիտենական է. եւ ի՞նչ որ յաւիտենական է՞ շարժում է. ու շարժումը պար է, երբ ռճաւորուած է։ Հայաստանի Ոգին պիտի գայ մարմնացեալ։ Նախ ինք իր կեանքին պարը պիտի կաքաւէ, որպէսզի իր ողջ զաւակները չկորսնցնեն շարժումին հայկական հարազատ ոճը, ինքնատպութիւնը։ Եւ որպէսզի մենք մեր հոդիներով պարենք՝ մեր պատմութեան մէջ, եւ ապա քալենք դէպի Ապագան, որ պատկէն ըլլայ Անցեալին, իր բարեմասնութիւններով, միայն իր բարեմասնութիւններով։

Մէկը մենախօսողի մը պէս ըսաւ.

— Հայաստանն ու Հայերը... Քառուղիի մը վրայ մեկուսացած բարձրութիւն, լաբիւրինթոս լեռներու, բարձրաբերձ բարդերու մէջ լիճեր, գետեր ու գաչտեր։ Վեհափառ լեռներուն վրայ Աստուած, ձիւն, լոյս ու լռութիւն։ Պետերու պար, պետականութեան պակաս, կեդրոնախոյս նախարարութիւններ, տեղացիներու տարաբերութիւններ, գիւղացիներու դալիթեր, ազատներու տեղափոխութիւն ու անհիսում, դրացիներու ներթափանցումներ։ Հայրենի հողուն փարածները կը մարտնչին, կը մարտիրոսանան։ Ու Մեծ Աղէտը։ Մնացորդացը ցրուած ի սփիւռս աշխարհի։ Մայր Հայաստանը հ՝ըլլայ աստանդական, ու անուեստանելի կերպով հ՝այցելէ իր հեռաւոր, իր հեռացած զաւակներուն...

Մէկը պատասխանեց մենախօսողին.

— Կը հաւատամ Բախտին։ Գիտեմ, որ Հայոց մեծագոյն պակասը՝ զրկուած ըլլալն է Բախտէ։ Կը հաւատամ, սակայն, որ կարելի է բարեփոխել Բախտը, յամառ ու յարատեւ աշխատութեամբ եւ կամօքն Աստուծոյ...

Ցանկարծ, հասակաւոր կին մը, անկիւնէ մը ցատկեց բեմին վրայ։

Կը նմանէր չափահաս արուեստագիտուհիի։ Վարպետ էր (իր մուրքէն ըլլաւ յայտնի), ու տառապած եւ գեղանի։

Իր վրայ կը կրէր հնադարեան պատառուն պարեգօտ մը, որուն ծայրամասերը կերուած էին տարիներէն ու տատասկներէն։ Սրունքներն ու ոտքերը մերկ էին։ Ունէր առատ եւ կիսախոպոպ վարսեր։ Մանաւանդ՝ մեծ ու մեղրածորան աչքեր, որոնց մէջ, մերթ, հուրը կը վառէր, նման արքայական գոյգ կանթեղի։

Անհուն համակրանքով կը նայէի Հայուհիին, որ Մայր Հայաստանն էր։

Ան, արմանացեալ բեմին վրայ, կը նայէր առաջ, կը նայէր վեր, հեռաւոր կէտի մը, հերոսական կամքի մը վճիռը իր ազատագրման դրոշմած։

Բայց հակառակ իր անշարժ մարմնին, նկատեցի, որ իր ոտանքները կը շարժէին արդէն արագօրէն ու կը քալէր, կը քալէր...

Ցանկարծուտա, ցնցուեցաւ ամբողջ մարմնով, եւ սկսաւ անտեսանելի նուագախումբի մը հնչել ու հոսել երաժշտութիւն մը, որ մոգական զօրքով մեզ փոխադրեց հայրենիք...

Մայր Հայաստան կը պարէր ու կը պայքարէր...

Ինք չէր, որ կը հետեւէր երաժշտութեան, այլ երաժշտութիւնն էր, որ կը հետեւէր իրեն։

Մօտս կեցողներէն մէկը ըսաւ.

— Իր մեծ ստղանդին վրայ աւելցուցած է ուրիշ մեծ ստղանդ մը.

— Մեծ Տառապանքը։

Իր պարած առեն, դէմքը այնքան խօսուն էր, որ կարելի էր կարդալ պարած պատմութիւնը։

Ա՜հ, այդ Հայոց Պատմութիւնը... Իր բազմաթիւ գլուխներէն շատերը կարդալու համար՝ դժուար, շատ դժուար ունեցած եմ անհրաժեշտ պաղարիւնութիւնը։ Երբ ես կարդալու իսկ քաջութիւնը չեմ ունեցած, կը զարմանամ, որ նախնիքս այդ պատմութիւնը ապրելու, ապրելով տառապելու, տառապելով պայքարելու դերագոյն քաջութիւնը ինչպէ՞ս են ունեցած։

Ցաւախ, այնքան յաւախ, չեմ կրցած դարձնել մատեանին թերթերը, որովհետեւ չափազանց աղեխարշ էր նիւթը, սրտակեղէք, սրտաճմլիկ...

(Ճիշդ ատոր համար ձեռնարկեցի մեր վերջին երկու հարստութիւններուն (Բագրատունիներուն եւ Ռուբինեաններուն) գրել պատմութիւնները, առանց սրոգելու ողբերգական մասերը, բայց ջանալով այնպէս մը ներկայացնել դէմքերն ու դէպքերը, որ պատմութեան ընթերցումը դառնայ սրբատպնդիչ, որով հաճելի։ Ողբերգական մասերուն մէջ իսկ կարկառելով Հայութեան հոգեկան մեծութիւնները։ Եւ մերթ իրականութեան ընդելուզելով հրաշալին ու մտամբ վէպը, աւելի մօտենալու համար իրականութեան։)

Անկարող եմ նայելու պատկերի մը, որ վիրաբուժական գործողութիւն մը կը ցուցնէ... Ուրեմն ինչպէ՞ս կրնայի նայիլ համայնապատկերի մը, ուր արենակիցներս կը կոտորուէին անխնայ...

Երբ ըլլամ շարժանկարի սրահի մը մէջ, ու երբ պաստառին պատկերը ներկայացնէ վիրաբուժական գործողութիւն մը, իսկոյն կը փակեմ աչքերս, մինչեւ որ կինս քովէս թեւը թեւիս դպցնէ, հասկցնելով, որ անցաւ այդ արիւնոտ տեսարանը, ու կրնամ բանալ աչքերս։

Մայր Հայաստանին պարը յաւախ այնքան էր սրտառուչ, այնքան էր սրտակեղ, որ ես կը փակէի աչքերս...

Քովս կեցողները ըմբռնած էին աչքերս ափերով գոցելուս պատճառը, եւ երբ աղեխարշ տեսարանը աւարտէր, իրենց թեւով կը հպէին ինծի, լուր տալով որ ա՛լ կրնամ դիտել պարը. ճիշդ այնպէս՝ ինչպէս կ՚ընէ կինս, շարժապատկերի սրահին մէջ։

Ու կը բանայի աչքերս։

Կը տեսնէի Մայր Հայաստանը խանդավառութեան մէջ։

Մերթ օդէն կը խլէր ջահ մը ու անով կը պարէր։ Սլացիկ ջահ մրն էր, նոյնքան սլացիկ բոցով։ Ջահապարը հրեղէն էր. ինքն ալ կը ջահանար ու կը բոցավառէր...

Մերթ ալ օդէն կը խլէր դրօշ մը ու կը պարէր անով։ Մեծատարած դրօշ մըն էր, որ կ՚ըլլար հուր, հով, հանդերձ, ու կը դառնար հաղարումէկ խաղերով...

Մերթ ալ կը պարէր ջահը ըրած դրօշ ու դրօշը՝ ջահ։

Երբեմն ժամանակէն առաջ կը բանայի աչքերս, քաջութիւն մը ի գործ դրած... Ու կը տեսնէի անոր նուհատակի պարը, անոր վէրքերը հոգիին մէջ ու մարմնին վրայ։ Անոր բեռնաբարձ քալուածքը, անոր կքումները, ան-

կումները... կը կարծէի, որ մեռաւ... Բայց ան մոխիրներէն կը ծնէր, նման փիւնիկ թռչունին...

Եւ յանկարծ, կը վերածուէր արծիւի։ Մերթ կը դառնար գառն Աստուծոյ։ Գերի։ Ու մէկէն կ'ըլլար խոյ։ Կ'ըլլար իշխան, թագաւոր, դարձեալ հպատակ ու գերի։ Ցաճախ ըմբոստ ու լծարձակ եւ արքայ։ Միշտ պաշտպանուող, ազատատենչ ու գործունեայ։ Երբեք դաժան կամ թշնամի։ Բայց ինքնապաշտպանութեան մէջ կորովի ու կատաղի...

Մայր Հայաստա՜նը...

Դարաւոր Ցորուհի, որուն ճակատագրին մէն մի տառը տպուած է խաչով։

Հազարումէկ գերագոյն Գողգոթաներու մարտիրոս գեղուհին...

Որ տեսաւ իրերայաջորդ ազգաներ, աւերումներ եւ ուսարառութիւններ, տակաւին երկրաշարժներ ու ջրհեղեղներ։ Զարնուեցաւ սարսափներէ, որածութիւններէ ու սադրանքներէ։ Դրախտավայրին մէջ ճանչցաւ կմախքէմ սովը, քանի անգամ քանի։ Իր մորթին վրայ ու մինչեւ ծուծերուն մէջ զգաց բարբարոսներուն գազանութիւնները եւ քաղաքակրթուածներուն բարբարոսութիւնները

Եղաւ նահատակութեան բարձրագոյն խորհրդանիշ...

Եղաւ Մայր Թափառական, Թափառական Հայուհի...

Ու գարերով թաւալեցաւ ու թափառեցաւ հայաշխարհին մէջ, քաւելով իր անմեղութեան մեղքը, թափառեցաւ մէկ ծայրէն միւսը, մէկ ծագէն միւսը, դաւառէ դաւառ, դիւղէ դիւղ, յանուն Լոյսի, յանուն Ազատութեան, յանուն Աստուծոյ...

Տեսաւ իր զաւակներուն գաղթերը ու մեր աշխարհին ամայութիւնները...

Թափառելով Հայաստանի մէջ, տարածեց իր շուքը ի սիրուս աշխարհի պոնդխատած իր որդիներուն վրայ, անոնց հոգիներուն մէջ...

Անոնք՝ որոնք խրատեցան այդ շնչաւոր շուքէն, կորան, յաճախ դաղրած մարդկութենէ...

Քանզի Մայր Հայաստանը իր դժբախտութեան ու թշուառութեան մէջ իսկ մնաց մեծհոգի։

Մայր Հայաստանը կը պարէր իր պատմութիւնը. հերոսական ու մարտիրոսական իր պատմութիւնը...

Կը պարէր մերթ արիւններով, մերթ արտասուքներով ու միշտ քրտինքներով...

Կը թեթեւէր, կը թրթռար, կը թեւածէր...

Մահուան մէջ իսկ կը հասունցար ու կը համբարնար...

Իր սրունքները բռնուած էին յաւիտենական շարժումէ։ Իր սրունքները մերթ ուղիղ էին, մերթ կքած, մերթ շեղ ու մերթ անկենդան... սակայն, յանկարծ, ստացած նոր աւիւն, կը բոցավառէին աւիշով, անիւով ու ծղիներով։

Մայր Հայաստանը կը քալէր... Իր քալուածքով մերթ զինուոր էր, մերթ խաչակիր, միշտ թափառական ու միշտ յառաջընթաց...

Ոչ ոք իր ճակատագրին ընծայած արագութեամբ ճանչցած է հարբատութիւնն ու աղքատութիւնը։ Ադէտի մէկ հարուածով կը գլորէր հիքութեան մէջ, ու հանճարեղ թռիչքով մը կը վերսկսէր հարստանալ։

Մայր Հայաստանը իր երկարաչունչ մենապարի ընթացքին, կը սըլայէր իրական խոցերով, կը նեռահարուէր, կը նիզակահարուէր, կը խարանուէր, կը խաչուէր... Կը հոսէր արիւնը, խառնուած իր արտասուքներուն եւ քրտինքներուն... Վէրքերը կը բացուէին վարդերու պէս ու կը փակուէին անապի... Հարուածներու տակ խակ չէր դադրեր իր լուսապաչառութիւնը... Ու կը շինէր, երբ իր ոսկորները կը կոտորուէին, երբ իր մարմնական շէնքը փուլ կու գար ճարճատելով...

Իր կեաւումը նուիրուած էր պաշտամունքի. եւ իբրեւ սրբազան պար արտակարգ էր ու այլազան, լի անկումներով եւ բարձրացումներով, ինչպէս Պատմութիւն Հայոց։

Իր պարը դարերու զէպքերուն սճաւորեալ նշանացոյցն էր։

Ինծի կը թուէր, թէ հի՛ն, հի՛ն հեքիաթի մը թաղուհին էր, որ եկած, եկած էր հազարամեայ պատմութան պալատներու աւերակներէն, հազարամեայ մատենախօս մենաստաններու մագաղաթներէն, եւ զաբաֆիզմաներով զոյացած գէրեզմաններէն, թաղուած եկեղեցիներու սալաքարերուն տակէն եկած էր, ու կը պատմապարէր ամբողջ անցեալ մը...

Տակաւին ինծի կը թուէր, թէ կը տեսնեմ, մշուշի մը մէջէն, իբրեւ բեմանկարներ, Արարատն ու Արագածը, Արմաւիրն ու Արտաշատը, եւ Անին ու Ախուրեանը, Տուրուբերանի տաճարախումբը, Բիւրակն ու Բարձր Հայքը, Վասպուրականն ու Վարագն ու Վանը, եւ Սեւանէն ու Սիսականէն մինչեւ Սիսուանը...

Ցանկարծ, նուագախումբը սկսաւ որոտալ, զուժկան դուսաններու զոռերով...

Մայր Հայաստանը եղած էր եղերամայր եղկելի...

Ամէնուրեք ու ամէնքէն կ'ընդունէր լսխտեր, եաթաղաններ, հուրեր, հարուածներ... Շրջապատուած էր գազազած դայլերով... Քաղաքներ ու քաղաքներ եւ գիւղեր ու գիւղեր կողոպուտի մէջ ու կոտորածի... Գիշեր ու գիշատիչներ... Ճանապարհներ խաչի եւ անոնց վրայ անվերջ կարաւաններ... Ցիսուսներ ամէն տարիքի... Կարկուտներ կրակէ... Հրդեհները կը լուսաւորեն քառասային գիշերները... Մահերգներ ու գերեզմաններ... Խաչերու խորտակումներ... Կախաղաններ, խարագաններ, հրացաններ ու զորձիքներ տանջանքի...

Ու դայլերը կ'ոռնան.

— Ուրացի՛ր կրօնդ ու տպրէ։

Հայը կը պատասխանէ.

— Ո՛չ։

Ու կը մեռնի մարտիրոսացած։

Գայլերը կ'առաջարկեն.

— Ուրացէ՛ք՝ ի՛նչ որ էիք, որ ձեզ տանինք մեր տունները...

Հայուհիները կը պատասխանեն.

— Ո՛չ։

Ու կ'ըլլան հերոսաբար, նահատակօրէն, սրբօրէն անձնասպան։

Հակառակ, որ ոչ ոք կեանքը կը սիրէ այնպէս՝ ինչպէս Արմէնն ու Արմենուհին։ Քանզի կեանքը առանց Հայութեան, մահէն ալ է սոսկալի։

Կը մեռնին՝ քանզի ենթարկուելը դատապարտեալ է ազգային կոչումին։

Կը մեռնին՝ չապրելու համար անազատ։

Քանդի Հայը, ըլլայ հեթանոս, ըլլայ քրիստոնեայ, ըլլայ անհաւատ, ըլլայ թերահաւատ, ունի դերագոյն կրօն մը, որ յաւիտենական է, ընդհանրական է, գերիվեր է — Ազատասէրութիւնը։

Մայր Հայաստանին արիւնը կը ժայթքէր իր մարմնին ամէն մէկ կողմէն... Կը փորէին մէկ աչքը, ապա միւսը... Կը կարէին ականջները, թեւերը, ոտքերը, նոյնիսկ գլուխը...

Ո՞վ Աստուած իմ, կարելի՞ է, որ մէկը ունենայ այսքան արիւն... Կարելի՞ է, որ մէկը այսքան արիւն կորսնցնէ ու տակաւին ապրի...

Կարաւանները կ'անցնէին կրակներու, կարկուտներու մէջէն...

Մարդ արարածին մարմինը սպաննելէ առաջ, կը հանէին հոգին մաս առ մաս...

Ողջ մանուկները կէր կու տային ձուկերուն, շուներուն եւ առնէտներուն...

Այրերը բաժին կ'ըլլային բորենիներուն ու ագռաւներուն։

Զուարթուններ ու հրեշտակներ ճաշը կ'ըլլային անասուններուն։

Ճանապարհները կը ասլարկուէին կմախքներով։

Հիւանդներն ու ծերունիները կ'իյնային թոպամահ։

Մայրերը քառասուն անգամ կը խելագարէին մեռնելէ առաջ։

Ուժեղները մէկ քանի օրուան մէջ կ'ըլլային հիւծախտաւոր, ու կը կոտորուէին բացօթեայ սպանդանոցներու մէջ, մեռնելէ առաջ հարիւր անգամ հանդիսատես ըլլալով մահուան մանդաղին կատարած հնձումներուն...

Վա՜յ դէպքերուն, քանզի անոնք պիտի ապրէին, ամէն օր մեռնելու համար։

Անհուն տառապանք, անհուն այնքան, որուն առջեւ ամէնէն բարեպաշտներուն կը խախտէր հաւատքը, կը հայէր հաւատքը, ուրանալով գոյութիւնն Աստուծոյ...

Փակեցէք աչքերս։

Եւ սակայն, կը պարէր Մայր Հայաստանը· վի կը լսէի, կը գայլի, հոգեպէս կը տեսնէի իր պարը։

Գլուխս դարձուցի ու նայեցայ չուրջիններուս... Կու լային բոլորն ալ... Հանդիսականներուն դէմքերուն վրայ կը տեսնէի՝ բեմին վրայ տեղի ունեցող ողբապարը...

Կը կարծուէր, թէ ամենայն ինչ վերջացած է, ամենայն ինչ հասած է վախճանական եղերականութեան, ամենայն ինչ թաղուած է ծովածաւալ աւազներուն մէջ, երբ, յանկարծ՝

Հնչեցին փողերը հրաշափառ յարութեան,

Լսուեցան քայլերգներ դերագոյն դուպրի...

Ու ողբերգութենէն ծնաւ գիւցազնամարտ մը...

Սրահը ալեկոծուած էր ոգեւորութենէ... Շուրջիններս ուժգնօրէն կը հրէին բազուկներս...

Բացի աչքերս ու տեսայ Մայր Հայաստանը արշալոյսի մէջ, որ ծածած էր աւերակներու, գերեզմաններու վրայ, եւ ուժաքամ Հայորդիներու...

Եւ արշալոյս մը զգեցած՝ կը պարէր դղրխած...

Հրաշք էր...

Ու մէկը կը փոփսար.

— Ի՜նչ ճակատագիր... Ուր որ դարձած էր՝ հանդիպած էր հրէշի... Իր դէմն էր Անարդարութիւնը, իր աջ կողմն էր Ապերախտութիւնը, ձախ կողմը՝ Մոլեռանդութիւնը, իր կռնակը կեցած էր Անբախտութիւնը, գինքը շրջապատած են միշտ Բռնութիւնները, Սադրանքները, Նախանձները։ Կը գառնար ինք իր վրայ, կ'ընթանար յայսկոյս ու յայնկոյս, սակայն անօգուտ. շրջապատուած էր փոքրոգի ճիւաղներով... Եւ հակառակ այս անհնարին պայմաններուն՝ աշխատեցաւ — ծնաւ, լինեց, ստեղծեց։ Իր հանճարը տնդի մէջ էր ու կը մղէր գինքը գործի... Ի՜նչ ճակատագիր, որուն թանաքին մէջ լոյս խառնուած էր խաւարին...

Մայր Հայաստանը գունագեղ ճառագայթներ բռնած՝ կը պարէր սքրտայոյզ խենթութիւնով...

Վերջապէս, հեռացաւ բեմէն...

Ո՛չ մէկ ծափ, ո՛չ մէկ շշուկ...

Հանդիսականները արձանացած էին իրենց կրած իրերայաջորդ յուզումներէն։ Ոչ ոք կը շարժէր տեղէն։ Ոմանք դեռ կը սրբէին իրենց հուսկ արցունքները խնդութեան ու խռովքի։

Ես բաժնուեցայ այդ արձանախումբէն։ Միայնակ վազեցի դէպի բեմ, անցայ անկէ՝ ուրկէ հեռացած էր Մայր Հայաստանը։

Մէկը տեսայ ու հարցուցի Մայր Հայաստանին ո՛ւր գտնուիլը։

Պատասխանեց.

— Մատուռ գնաց աղօթելու։ Սա զուռնէն դուրս ելլը ու պիտի տեսնես մատուռը...

***

Դիշեր էր։

Ներս մտայ մատուռէն, ուր կը ծփային շղարշներու պէս չամանդաղներ։ Ո՛չ ոք տեսայ աղօթատեղիին մէջ։

Ցայսկոյս ու յայնկոյս կը պլպլային քանի մը մոմեր։

Երկիւղածութեամբ յառաջացայ։

Խորանին կամարէն կախուած կանթեղներուն մէջ կը պսպղային պատրոյգները։

Մտայ դասը, մերձեցայ խորանին ու կանգնեցայ քոմնի։

Ինչ նոր տեսիլի եղայ արժանի...

Մայր Հայաստանը կանգնած էր Աստուածամօր պատկերին առջեւ, ու կ'աղօթէր զլխահակ...

Աստուածամայրը, որ նուիրական նկար էր, եղաւ Ներկայութիւն, մարմնացաւ, շարժեցաւ. շնորհօք, դուրս եկաւ իր շրջանակէն, իջաւ, սահեցաւ, եկաւ կանգնեցաւ Մայր Հայաստանին առջեւ... Բարձրացուց անոր գլուխը, եւ համբուրեց նախ անոր շրթները, ապա ճակատը... Երկար ակնարկով մը սուզուեցաւ անոր աչքերուն ու հոգիին մէջ...

Վերջապէս, Աստուածամայրը գրկեց Մայր Հայաստանը, վերցուց, բարձրացուց սկիհի մը նման, ու դրաւ ի՛ր տեղը, խորանին վրայ, ոսկի շրջանակին մէջ...

Եւ ինքը եկաւ ծունկի, շեղակի դիրքով մը, ու նայուածքը սեւեռեց Մայր Հայաստանի դէմքին...

Ու լսուեցաւ բարի եւ քուրումնաւէտ ձայն մը, որ ըսաւ.

— Բարիք արարելն է պատարագել ու պատարագելն է պաշտել նուիրումով եւ ուշիատութեամբ։ Պարեցիր պատարագելով, անցար երկար ճանապարհներէն օգտակարին ու գեղեցիկին. քալեցիր հերոսաբար, ընթացար նահատակութեամբ։ Հերոսներն ու մարտիրոսներն են՝ որոնք կը հասնին Աստուծոյ, որ է աղատարարն։ Տիրոջ ընծայած Ազատութենէն թեւեցիր դէպի այն Ազատութիւնը, որ մեծագոյն ստեղծագործութիւնն է մարդուն։ Քանի՞ ի՞նչ կ'արժեն մարդկային գիտութեան մեծագործութիւնները, հրթիռներու արձակումները անհունին մէջ, երբ տակաւին մարդը ազատ չէ անցնելու սահմանէ սահման, երկրի վրայ։ Եւ դուն վաղուց գիտակցութիւնը ունեցար, որ մեծագոյն դիւռը, անպերազանցելին՝ Ազատութիւնն է, ու անոր համար բացիր թեւերդ։ Դեւերը զարկին միշտ թեւերուդ։ Դեռ պիտի դարնեն, նոյնիսկ սատկօրէն աւելի։ Բայց միայն Ազատութեամբ կարելի է ըլլալ վարպետը ապագային։ Հակառակ արտաքին ու ներքին ազէնութիւն, չվհատեցար։ Ու մի՛ յուսահատիր յաւիտեան։ Քալէ՛, հակառակ ամէն արգելքի։ Նոյնիսկ եթէ մնաս թեւատ, կորուած ոտքերդ, մտածումով սաւառնէ՛։ Աստուած քեզ կը տեսնէ վերէն. զի դուն զինուորն ես Արքայութեան, որ պիտի աշխարհակալէ հոգիներու մէջ։ Մի՛ մոռնար, որ դո՛ւն ես աստիճանաչափը մարդկութեան։ Մարդկութեան խղճին, հոգեկան յառաջդիմութեան ցոլացումն է քու վիճակդ։ Օրհնեալ ես դու, զի մարդկային սրբութեան աւելի քան կէսն ես դու...

Աստուածամայրը երկնահայեաց սկսաւ աղօթել։

Լսեցի երեք խնդրական բայ.

— ... Սրբադրեա՛, ամփոփեա՛, լուսաւորեա՛...

Տիրամօր ձայնով ու խօսքով՝ մատուռը լեցուեցաւ բոյրերով յամենի եւ շուշանի։

Կանգնած էի դասին ձախակողմեան անկիւնը, ուրկէ կը բարձրանան խորան, ու անյոգ զարմացումով կը դիտէի Աստուածամայրը, իր կատարածը, իր կերպարանքը, իր հանդերձանքը, իր դիմագանձը...

Զգեցած էր կարմիր պարեզօտ ու մանիշակագոյն թիկնոց, գլուխը ծածկուած էր մուր-կապոյտ լաչակով. ձեռքին մէջ կար սպիտակ շուշփայ։ Կարծէք իր հագած կտաւները գործուած էին թելերով գունագեղ ճառագայթներու։

Ու Աստուածամայրը նման էր հրաշածաղիկի, չինուած ծիածանէ։

Երբեք պիտի չմոռնամ իր Ներկայութիւնը, իր նայուածքը, իր դիրքն ու դէմքը...

Քնար էր քաղցրութեան,

Ու մաքրութեան մեղեդի,

Էր բոլորանուէր բարեխօսութիւն,

Ձակատը մարմար միւռոնեալ,

Ցօնքերը թեւեր թռչնակի,

Բերանը փեթակ լուսոյ,

Շրթները համբոյր հաղորդութեան,

Իսկ աչքերը անսպիտ գոհարեղէններ, կերտուած Աստուծոյ ոսկերչատունին մէջ։

Այդ հոգեզոհար աչքերը դարձեալ ուղղուած էին Մայր Հայաստանին, ու կ'սրտայայտէին երազանք ու ճախրանք, եւ քաղցրութիւն ու դիմութիւն, եւ զմայլանք ու զարմանք, ինչպէս նաեւ յարգութիւն։

Իր աչքերէն կախուած էին, իբրեւ օղեր, երկու կաթիլ մարգարիտէ...

(Թո՛ղ ներուի նայուածքիս, որ սեւեռուած էր Աստուածամօր, թէեւ երազի մէջ...

Թո՛ղ ներուին աչքերուս, որոնք տեսան Աստուածամայրը ծնրադիր, աղօթասացութեան մէջ, Մայր Հայաստանին առջեւ...

Թո՛ղ ներուի ինծի, որ կը նկարագրեմ տեսլային Երազս...)

Աստուածամա՛յրը...

Դէմքոյ վերին արքայարանի, բամբիշ բարութեան, թագուհի թողութեան, տիրուհի տառապելոց եւ մայր մեղաւորաց, որ երկնի մէջ ըլլալէ աւելի՝ է երկրի վրայ, քանզի Սիրտ է սիրայորդ, եւ քանզի տիեզերական ներդաշնակութենէն աւելի՝ կը գլուզի երկրային կեանքի անհերդաշնակութիւններով, տագնապներով տառապանքի։ Սկիհն է վիշտերուն, ու վէրքերուն Սպեղանին։ Գաւտելին է ու պաշտպանը պարտուածներուն, եւ յարգութեամբ կը սիրէ տանջահարները։

Աստուածամօր անմոռանալի դէմքը...

Հազարանի վարդի կոկոն, գոհարներով դրուագեալ։

Անոր վերամբարձ ու վշտալի աչքերը ուղղուած էին Մայր Հայաստանին, որ կը ժպտէր... Կը ժպտէր՝ ամենայն ինչ մոռցած, երանութեան երկնաբոլորակի մը մէջէն... Կը ժպտէր քրիստոնէական քաղցրութեամբ...

Կը դիտէի նարահրաշ այդ տեսարանը, յուզումիս ու յափշտակութեանս մշուշներուն մէջէն...

Անդադար կը դիտէի... Եւ տաւելապէս կը նայէի Աստուածամօր, քանզի Ա՛ն էր հերոսուհին համեստութեան, քանզի Ա՛ն էր, որ շրջած էր գիրք ու գեր, քանզի Ա՛ն էր, որ իր խոնարհութեան խորհուրդով՝ կը փայլէր փառքով մը նորալոյս...

Անդուլ կը նայէի Աստուածամօր...

Երբեք չէի տեսած այդպիսի անթառամ թարմութիւն, այդպիսի աղաւնակերպ դիմատնութիւն, կին կուսական եւ մայր մանկանուշ ու տաճարաշէն տիրուհի։

Հոգի՝ յորդած դէմքին վրայ, անսպառ ակ սիրոյ եւ լիութիւն լուսոյ...

Իջան հոյլ մը հրեշտակներ խորանին վրայ, թափահարելով իրենց ոսկեայ ծղիներբ, ու կիսաբոլորակ մը կազմեցին սուրբ բեմին առջեւ։

Հրեշտակներէն մին՝ Տիրամօր գլխուն վրայ դեռեղեց պսակ մը, որ բաղկացած էր աստղերով։

Ապա, այդ պսակազարդ հրեշտակը վերցուց Աստուածամայրը իր ձեռքերով, ու տարաւ դրաւ իր նախկին տեղը, շրջանակին կեդրոնը, ուր կը գտնուէր Մայր Հայաստան...

Եւ յանկարծ, շրջանակը վերածուեցաւ երկուքի, որուն աջակողմեանին մէջ Աստուածամայրն էր, իսկ ձախակողմեանին՝ Մայր Հայաստանը։

Եւ անոնք կը ժպտէին իրարու, քրոջական քաղցրութեամբ։

Մարիամ Աստուածամայրն ու Մայր Հայաստանը քով քովի...

Աստուածամայրը գունագեղ քարերով զարդուած եւ հոգիով ու լոյսով բանուած Սրբուհի...

Մայր Հայաստանը սուգով ու սեւով եւ մարմարով ու մոգութեամբ եւ մանիսով ստեղծուած Մոխրուհի...

Աստուածամօր աչքերը խտացեալ մատեան քրիստոնէութեան — Սրբութիւն ու սէր, նեղոյութիւն ու նուիրում եւ կարեկցութիւն ու կապոյտ...

Մայր Հայաստանին աչքերը խտացեալ մատեան Հայոց Պատմութեան — Տրտմութիւն ու տիսունութիւն, մարտիրոսութիւն ու մարտունակութիւն, աշխատասիրութիւն ու ազատասէրութիւն, գերութիւն ու դըլխակոխութիւն եւ յուզարկաւորութիւն եւ յոյս ու յարութիւն...

Երկուքին աչքերն ալ այրապէս խոր ու խոովիչ եւ հոգիով լորդ...

Տիրամօր աչքերուն մէջ կը հոսէր երկինքը, մինչդեռ Մայր Հայաստանին աչքերուն մէջ կը թաւալէր աշխարհը ի գիշերի, ցայգալոյսով:

Աստուածամայրը իր գլխու աստղապսակէն հանեց երկրորդ մը, ու երկարեց Մայր Հայաստանին, որ առաւ ու դրաւ սրտին վրայ:

Պսակադիր հրեշտակը այդ աստղապսակը դեռեղեց Մայր Հայաստանին գլխուն վրայ:

Ծնրադրեալ հրեշտակները խոնարհեցան: Ապա երկեցին գանձեր փառաբանութեան: Իրենց խմբերկին կ'ընկերակցէին քաղցրալուր քնարներ:

Հրեշտակապետին հրահանգով՝ երկնաբնակները թեւեցին ու դուրս եկան լուսամուտներէն:

Երկիւղածութեամբ յառաջացայ դէպի դասին կեդրոնը, ու երիցս խաչակնքեցի:

Ցանկարծ, զգացի, որ աղօթատեղին կը լեցուի լուսկեաց բազմութիւնով:

Երբ գարձայ, տեսայ, որ մատուռը կը մեծնար, մայր եկեղեցի կը դառնար: Աղօթատեղին կ'երկարէր, կ'ընդարձակուէր, կը լայնար ու կը լեցուէր բարեպաշտներու բազմութեամբ:

Ու բազմութիւնը կը բաղկանար Հայերէ, որոնք սկսան միաձայն երգել եւ ազաղակել.

— Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ

Աստուածամայր...

Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ

Մայր Հայաստան...

Ցուզումէս կը դողայի:

Բուռն փափաքն ունէի միանուագ զրկել այդ ամբողջ բազմութիւնը եւ ողջունել՝ համբուրելով եղբայրօրէն:

Ու բազուկներս բացի...

Ցառաջացայ եւ զրկեցի՝ որքան որ կրնայի պարփակել բազուկներս...

Բոլոր ներկաները հետեւեցան ողջոյնիս: Բազմութիւնը եղաւ միազանգուած ողջագուրում ու համբոյր, մեծազանգուած հուսաք, յոյս եւ սէր:

Ցայնժամ, տեսանք, որ տաճարին տարածութեան մէջէն, մեր վրայէն, թեւանցուկ եւ օդագնաց կ'անցնէին Աստուածամայրը եւ Մայր Հայաստանը, ու իրենց ժպիտներէն կը տեղային վարդեր, շուշաններ, յասմիկներ, մեխակներ...

Ու տաճարը տապանի նման կը բարձրանար օդապարելով...

Վերնատունէն իջաւ վարդապետ մը, Հայոց աւագ լուսարարը, Ս-

Մեսրոպ Մաշտոց, եւ բազմութեան ճիշդ մէջտեղէն ուղի բանալով, յառաջացաւ դէպի խորան։

Ամէն ոք կը դիտէր զինք։

Կանգնեցաւ դասին մէջ, խորանին առջեւ։

Ձեռքին փեսրաշահով՝ ամբողջ խորանին տարածութեան կեդրոնը, վերէն վար՝ չոչոչացուց՝ մեծ խաչ մը ադամանդէ...

Խորանը պերճացաւ խաչ արշալոյսով։

Խաչը կազմող իւրաքանչիւր ադամանդակոյտ կը ներկայացնէր մէկ գիրը Մեսրոպեան այբուբենին։

(Երկու տառ՝ մէկ տող· ու այսպէս չորս տող· ապա ութ տառ՝ մէկ տող, դարձեալ ութ տառ՝ մէկ տող, որոնք կը կազմէին թեւերը խաչին· վերջապէս, մնացեալ գիրերը, տողը երկու տառ։)

Եւ Աստուածամայր ու Մայր Հայաստան վերադառնալով՝ գացին դրկեցին Ս. Մեսրոպը, կիսեցին գմբէթէն մինչեւ դեռին ճառագայթող այդ լուսադիր խաչը, որ կը տրոփէր փայլատակումներով ադամանդէ։

Մայր Մարիամ, Մայր Հայաստան ու Մեսրոպ Մաշտոց սկսան երգելով արտասանել այդ արփիակուն լուսագրութիւնը, իբրեւ գանձ, իբրեւ գեղօն, իբրեւ չարական ու նախանիւթ երգ-երգոցի։

Քիչ յետոյ, բազմութիւնը ձայնակցեցաւ երգեցողութեան։

Հրեշտակները յայտնուելով՝ կամարէն կ'ընկերակցէին քնարով, տաւիղով ու արինգներով։

Ներկաները օժտուած էին հաղադով, զօրացած՝ հուրով, ու անմահացած՝ հոգւով։

Կը շարունակուէր համերգը։

Մեսրոպեան տառերը, իբրեւ լուսատներ ադամանդէ, լուսերգութեան ընթացքին կը փոփոխէին աւելի։

Եւ այբուբենը կ'արձակէր այնքան շառայլ, որ կը լեցնէր հոգեկան գանձարանները։

Ջերմացաւ սիրտս սաստիկ, աչքերս շլացան ու պերճացաւ միտքս։

Կը դիտէի ադամանդէ այբուբենին լոյսերուն էջերը հոգիս մէջ· կը գգայի լոյսերուն էջերը կայծակ առ կայծակ, կաթիլ առ կաթիլ եւ մերթ կոհակ առ կոհակ...

Գիշերային խաւարին մէջէն մեր լուսանաւը կ'ուղղուէր դէպի լեռնաքարափ։

Փոթորկած քաոսին ովկիանին մէջ, տաճարը կը տատանէր, սակայն, կ'ընթանար, զարնուելով ալիքներէն, ու փշրելով զանոնք։ Լոյս մը անցաւ։

Լսուեցան երկարատեւ որոտումներ։

Սկսան ճարճատիլ կայծակներ։

Լսուեցան ձայներ փլուզումի։ Ծանրութիւններ կ'իյնային խաւարին խորխորատներուն մէջ։

Կայծակ մը մտաւ աղօթատեղիին մէջ ու մեծաշառաչ խաղցուց իր հրեղէն սուրերը...

Ամէն ոք ինքնամփոփուած էր ու կ'աղօթէր լռելեայն։

Լուսանաւը ելեւէջելով՝ միշտ կ'ընթանար լեռնաքարափ։

Ա՛լ չէի տեսներ Աստուածամայրն ու Մայր Հայաստանը, սակայն կը գգայի անոնց Ներկայութիւններն անբացակայելի։

Կը տեսնէի վարդապետը, որ յամբաբար վերացաւ թեւաթաց, եւ ինքնայօժար բեւեռուեցաւ իր այբուբենին լուսեղէն խաչին վրայ։

Լուսախաչին վրայ, վարդապետին սիրտը բացուած էր՝ նման վարդի· ու իր կաս կարմիր արիւնը կը հոսէր իր սեւ աչքին ի վար...

Բոլոր ներկաները եկած էին ծունկի:

Հոգիս կը յորդէր մեսրոպեան այբուբենով ու իր լոյսերով...

Եւ աղօթեցի.

— Ս. Մեսրոպ, մենք՝ մնացորդ Հայերս, քեզմով ենք հարուստ... Որքան ըլլանք քեզի հաւատարիմ՝ այնքան կ'ըլլանք հարուստ ու հզօր ու հպարտ... Իսկ առանց քեզի՝ մենք կը կորչինք քաոսի մէջ ու դերեզմանի... Մի՛ լքաներ մեզ, այլ մեզ լուա՛ եւ լուսազարդէ՛...

Աղամանդակուռ այբուբենով կազմուած խաչէն սկսան արձակուիլ, ամէն ուղղութեամբ, կայծե՛ր, կայծե՛ր ու շառայլներ...

***

Ցանկարծ, դանուեցայ տաճարին տանիքին վրայ, որ կամբիկն էր միջնադարեան մեծայաղթ նաւու մը, որ անառագաստ էր ու անղեկ:

Աղօթատեղիին մէջ խմբուած Հայերը՝ խռնուած էին նաւուն վրայ, այս անդամ բաժնուած երկու խումբի:

Կ'ընթանար նաւը այեկոծ քաոսի մը մէջէն: Խաւարին ալիքները մեծաշառաչ կը զարնուէին նաւուն կողերուն:

Աղօթատեղիին ադամանդէ խաչին լոյսերը կը թափէին կատաղի կոհակներուն վրայ ու կ'ելուէջէին:

Նաւը կարծէք կը դանուէր բիւրաւոր վայրի ձիերու քամակներուն վրայ, ու սաստկօրէն կը տատանէր, իյնալով խաւարին խորխորատները ու ելլելով կատարները կոհակներուն:

Հայոցմէ ոմանք կ'այխատէին, ոմանք կ'աղօթէին, շատեր ալ կանգնած էին անտարբեր: Ով ի՛նչ կ'ընէր, ով ի՛նչ կ'ըսէր որոշապէս յայտնի չէր: Խուճապ կար ու խռովք, ինչպէս նաեւ անհոգութիւն:

Խաւարին ալիքներէն մերթ դուրս կ'ելլէին զարհուրելի դէմքերով դեւեր, նման Բելիարի ու Բահաղի եւ ճիւաղի ու ճըկկէռնաւդի եւ հարամանի ու Հիդրայի եւ վանտալի ու վիշապի: Ջուլածոյ էին ու միանգամայն կենդանի: Էին հրէշի հանգոյն հրաշեայ: Ունէին եղջիւրներ, երախներ ու ատամներ ժանիքէ: Անոնք էին վարիչները խաւարակուռ ովկիանին, անոնք էին ալիքները մղողները մեր վրայ: Ցաճախ, կոհակները կը պայթէին նաւուն վերեւ, խաւարելով, խեղդելով մեզ:

Հեռուն, շատ հեռուն, մերթ կը փայլէր միակ աստղ մը, նման անպարան կանթեղի:

Տքացող ու տատանող տապանը կ'ուղղուէր դէպի այդ աստղը, որ ուղեցոյց փարոս էր:

Ոմանք կ'աղաղակէին.

— Դէպի մեր լեռնաքարափները...

Բայց մերթ կ'անհետանար աստղը, ու նաւը կը մոլորէր...

Դեւերը կը հրէին նաւը, փոխելով անոր ուղղութիւնը...

Ոմանք խելագարած, ուրիշներ վհատած կամ ապառած՝ կը նեռուէին համայնակուլ վիհերուն, վանտալներուն, վիշապներուն մէջ...

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUL.Ի-՝ ՀԱՅԻ

Երբ եռեւ դարձայ, տեսայ Մայր Հայաստանը, որ նաւուն յետուստին վրայ կանգնած էր արձանացեալ, թեւաթաց, խորհրդանիշ խաչի, ու մազերը դրօշի պէս հողմածածան... Կը պահէր իր հաւասարակշռութիւնը հրաշքով...

Դեւերն անդուլ ու ամէն կողմէ կը յարձակէին իր վրայ, հանապաղ նահատակելով ղինքը։ Կը սեղմէին կոկորդը, մազիլներ կը մխէին իր կուրծքին ու կողերուն։

Խումբ մը գիժեր կը պաշտպանէին Մայրը, եռ հրելով հրէշները... Անոնցմէ շատեր կը մարանչէին խոստակուած սուրերով ու մարմիններով արիւնլուայ...

Օդին մէջէն ալ կը յարձակէին փամբիրներ, արիւնախանձ վամբիրներ, կը յարձակէին մեր Մօր ու մեր մարտիկներուն վրայ...

Հետզհետէ կը ոստոստնաբ մոլուցքը մրրիկին։ Փոթորիկ մըն ալ կը փրփրէր մեր հոգիներուն մէջ...

Մերթ մեզի կը թուէր, թէ դիւերն ու քաոսը, մրրիկն ու մարտը յաւիտենական են։

Հրէշները կ'ուզէին խաւարով պատանքել Մայր Հայաստանը, ինչպէս նաեւ նաւը եւ նաւաղնացները, որոնցմէ ուրիշներ ալ նետուեցան քաոսին ալիքներուն մէջ։

Աչխարհի բոլոր զօրքերը կամայ-ակամայ կը հարուածէին նաւը՝ սանձազերծ բրտութիւնով։ Նոյնիսկ նաւէն բաժնուածներէն ոմանք կը կրոփահարէին տապանին տախտակները։ Բոլոր Ձար Ոգիները այդ խաւարին խելացնոր խազին մէջ, ունէին մէկ աեռ։— Նաւը խորտակել, եւ ընկղմել խաւարին խորունկ հոլերուն մէջ։

Մարդիկ կ'եռային կամրջակին վրայ, միշտ երկու խումբ կազմած։

Նաւուն կեդրոնական սիւնը գրկած՝ կը դիտէի զեհենական համաչնապատկերը...

Մէկը բաւ.

— Ինչո՞ւ այսպէս է... Ինչո՞ւ հրէշներուն մենաշնորհն է ուժը։ Սուրբերը ո՛չ զէնք ունին, ոչ ալ զրահ։ Կար ժամանակ, երբ Աստուած սուրբերուն իբրեւ զէնք կու տար հրաշագործելու կարողութիւնը։ Հիմա, հրաշքը անցամ հրէշներուն առանձնաշնորհն է. մեզի համար անցած է հրաշքի դարը...

Ուրիշ մը բողոքեց.

— Ինչպէ՞ս թէ անցած է հրաշքի դարը... Այս նաւուն ցարդ խորտակուած չըլլալը՝ մեծ հրաշք մը չէ՞ միթէ...

Ճիւաղները կը յարձակէին անընդհատ... Անոնք կ'երկարէին իրենց դլուխով ու իրանով՝ մինչեւ նաւուն կամրջակը, մինչեւ ցուկը եւ յետուստը... Անոնց մարմիններուն ծայրը չէր երեւեր, մնալով խաւարին ալիքներուն մէջ... Անոնցմէ մէկը կը նմանէր հսկայական կոկորդիլոսի, ուրիշ մը նման էր վիշապի, երրորդ մը՝ կէտի, չորրորդ մը՝ մամութի, հինգերորդ մը՝ օձի... Ճիւաղները թէեւ կը սոսանային հարուածներ, սակայն կը մնային անխոցելի... Սուրերը կը փշրուէին անոնց դարնուելով։

Երկինքը այնքան ամպածրար էր, որ մէկ աստղ իսկ չէր նշմարուեր։ Երբեմն, հեռուն, պահ մը կը տեսնուէր կանթեղանման աստղը ու կը խաւարէր... Մենք այդ աստղին կռնակ դարձուցած էինք ակամայ... Ուղեկորոյս մոլորածներ էինք...

Ճիւաղներէն ոմանք կ'արձակէին լորձունքներ ու լաւաներ, ուրիշներ իրենց նայուածքներէն՝ նետեր ու նիզակներ, այլք իրենց երամէն սուրեր ու հուրեր...

Եւ նաւը կանգնեցուցին:

Հրէշները դադրեցան յարձակելէ:

Հասած էինք ծովապարտէզ կղզիի մը խաբակներուն մօտ: Ցաւարը խարոյկներով պատկերազարդուած էր: Գեհենական լոյսերով կը տեսնէինք կղզին, որ դիւթական ծառաստան մըն էր, համակ հրաւէր:

Ծովեզերը, հրապարակի մը վրայ, բիւրաւոր սատանաներ սարքած էին խելացնոր խրախճանք: Կ'ըմպէին, կ'ազազակէին ու կը թաւալէին աղիճներու հետ: Կը պարէին պոռնիկներ, որոնք մերկ էին յոտիցգլուխ...

Մարմիններու մէջ բռնկած օձեր կը դալարուէին սառակօրէն:

Քանի մը սատանաներ կը սրնդահարէին, իսկ ջատուկներ կը ջութակահարէին՝ գնչուներու վարպետութեամբ:

Ցաղաղած էր խուարին ալեկոծութիւնը:

Սաղայէլը կանգնեցաւ ոտքի: Տիրոջ լռութիւն: Գետը, խարակի մը վրայէն, խօսեցաւ մեզի.

— Դուրս եկէք, այդ տառապանքի տապանէն, ու միացէք մեզի: Կը խոստանամ ձեզի հանգիստ, հաճոյք ու հեշտանք, հանդարտութեան մէջ եւ հարստութեան: Կը քաղցրացնեմ ու կը ջերմացնեմ ձեր հոգիները, որոնց համը պիտի զգաք ձեր քիմքերով: Կը խոստանամ ձեզի՝ ձեր դարերէ ի վեր փնտռածը.— Ազատութիւն: Տակաւին կին ու գինի, փառք ու ոսկի. միակ իմաստները կեանքին: Լքեցէք այդ նզովեալ նաւը, ու միացէք մեզի: Հեքի՞ք է սա ձեր Հայութիւնը, որ անվերջ խաչելութիւն է, որ կը փոխուի իր տանջանքին ու տառապանքին սեռակներով: Լքեցէք այդ անբախտ Մայրը, որուն ստինքներէն արիւն, աչքերէն արցունք ու ճակատէն քրտնիքներ կը հոսին: Միացէք մեզի: Հայութիւնը հրեշտակութիւն է, իսկ հրեշտակավայրը երկինքն է: Հրեշտակաց արքայութիւնը երկրի վրայ չէ: Երկիրը մե՛րն է. ըրէ՛ք նաեւ ձերը: Միացէք մեզի: Ահա խրախ, ահա խաղաղութիւն, ահա դեղեցիկներ, ահա գինի... Մե՛ր տառապիք դեղեցիկի ու գինիի համար. թո՛ղ դեղեցիկներն ու գինիները տառապին ձեզի համար: Եւ տակաւին փառք, ու ոսկի՛, ոսկի՛...

Սատանաները սկսան դեռնէն ափերով ոսկի բարձրացնել ու թափել գետին: Ամէնուրեք կ'երեւէին բլրակուսակ ոսկիներ ու գոհարեղէններ...

Անառակ աղիճներ կը թաղուէին ոսկիներու եւ գոհարներու մէջ...

Նաւազնացներուն աւելի քան կէսը միացաւ սատանաներուն...

Սաղայէլը իր յաղողութենէն ոգեւորուած, նաւուն մէջ մնացողներուն ըսաւ.

— Ինձ Հայեր, դուք չէք կիտեր ձեր պատմութիւնը: Ի՛նչ միայն այն պակուցիչ պատմութիւնը, զոր ապրեցաք զարերով, այլեւ ձեր սկզբնականը: Դուք նախապէս հրեշտակներ էիք, սակայն, ըմբոստացաք՝ տաղտկացած անգործութենէ: Աչխատիլ, լինել, բանիլ կ'ուզէիք. ձեր տենչը անզսպելի էր: Եւ Աստուած, իբրեւ պատիժ ու պատուհաս, ձեզ շպրտեց՝ դեղեցիկ, բայց բնակութեան անյարմար վայր մը: Ցանկալեան դրախտավայր մը: Դուք թէեւ երկնէն երկիր իջած անկեալ հրեշտակներ էիք, սակայն չմոռցաք ձեր հրեշտակային բարութիւնը: Զենէ միայն ա՛յն սակաւութիւնները կրցան երջանիկ ըլլալ, որոնք հրաժարեցան հրեշտակութենէ, դառնալով

մարդակերպ սատանայ։ Մնացեալները՝ Աստուծոյ դատապարտութեամբ հաստատուեցան հայրենիք մը, ուր անպակաս էին կործանումները, թէ՛ այլազգիներու, թէ բնութեան կողմէ։ Ու ձեր չինելու տենդին իբրեւ պատիժ, քանդուեցաւ ինչ որ չինեցիք։ Իսկ դուք քանդուածը վերաշինեցիք, եւ այսպէս շարունակուեցաւ անվերջօրէն, մինչեւ որ դարձաք թափառական։ Եւ արդ, անգամ մը եւս կոչ կ'ուղղեմ ձեզի, որպէսզի միանաք մեզի։ Չի մենք միայն ունինք այն շնորհները, որոնց ձգտեցաք արիւնահոս որոնումներով, կեանքի վայրի անտառներուն մէջ։— Աշխատանք, Ազատութիւն, Անկախութիւն։ Եւ զի ոչ ոք այնքան իրաւունք ունի դառնալու սատանայ, որքան դուք, Հայերդ։ Միացէք մեզի, վրէժ լուծելու համար բոլոր դահիճներէն, որոնք դիմակներ դրած են սուրբի։ Միացէք մեզի, կործանելու համար։ Չի կործանումն ալ է աշխատանք ու հաճոյք մեծ՝ միանդամայն։

Խումբ մը նաւորդներ եւս միացան սատանաներուն։

Խնճոյքը վերսկսաւ յաղթական կանչերով։

Նաւը լրջներուն տրուեցան փառաւոր հանդէրձներ, կիներ, զինի ու ոսկի։ Եւ անոնք մասնակցեցան խրախճանքին, կռնակ դարձուցած նաւուն։

Մերկ ու ամենազեղ պերճաղիճ մը սկսաւ յայրատորէն կաքաւել, տարածուն սեղանի մը վրայ։ Իր զգլխիչ մարմինէն կ'ելլէին կայծեր, երբ կը դառնար հոլապտոյտ։ Այդ պերճաղիճը սկսաւ այնքան արագութեամբ շարժիլ, որ նմանեցաւ բանկած հսկայ հոլի մը, որ կը ճարճատի ու կը բոցավառի։ Կոչնականները կը ծափահարէին, իսկ նուագածուները բոլորուած էին սեղանին շուրջը ու կը հրահրէին պերճաղիճը, որ օդապարելով հեռացաւ, որոտագին բացագանչութիւններու մէջ։

Ապա, այդ պարուհին յայտնուեցաւ մեր նաւուն վրայ, հրաւիրելով նաւորդները լքել տառապանքի տապանը։ Ան խոստացաւ իր մարմինը...

Խումբ մը նաւագնացներ հետեւեցան պերճաղիճին։

Ցայտժամ, շարժեցաւ երկիրը։ Կղզիէն բլուրներ ինկան խաւարին մէջ, սակայն ոչ ոք վնասուեցաւ կոչնականներէն։

Մայր Հայաստանը ողբերգական լռութիւնով կը նայէր հեռացողներուն։ Ան միշտ նաւուն յետուստին վրայ էր ու կոթնած սեւ խաչի։

Սատանայ մը մինչեւ երկինք բարձրացաւ ու հրեղէն փետուրով մը գծեց նշաններ եւ պատկերներ։— Եռանկիւններ, աստղանիշեր, արծիւներ, մահիկներ, մանգաղներ, որոնք ոսկեայ սրբուեցան անծանօթ ձեռքի մը կողմէ...

Սատանան իջաւ, ու գնաց Սաղայէլին ոտքեւ։ Անկէ ստացաւ հսկայ ու հրեղէն սուր մը։ Այդ սուրը մխեց մեր նաւուն ցոուկին։ Սուրին ծայրը նաւուն միւս կողմէն դուրս ելաւ։

Պահ մը դարձեալ դադրեցաւ խրախը։

Սաղայէլը բարձրացաւ խարակի մը վրայ, ու մնացեալ նաւորդներուն ըսաւ.

— Հրեղէն սուրը, որ մխուեցաւ ձեր տառապանքի տապանին ցոուկին, ձենէ ո՛չ ոք պիտի կրնայ հանել, ձենէ ո՛չ ոք պիտի կրնայ մարել։ Սուրը չիկացած է ու անչէջ եւ անչօշափելի։ Այս սուրը յամրաքար ու յարատեւօրէն պիտի այրէ ձեր նաւը, ինչպէս նաեւ ձեզ, եթէ յամառիք մնալ նզովեալ նաւուն վրայ։ Նաւուն կիզուելէն առաջ, հասնելու է քեռնաքարափ։ Ապա թէ ոչ՝ պիտի կորչիք նաւուն հետ։ Երթաք բարով դէպի ձեր լեռնաքարափները...

Տիրեց պահ մը լռութիւն։

Սաղայէլը վերջին փորձ մը ըրաւ՝ մնացեալ նաւորդները չահելու համար.

— Ցիմորներ, միացէք մեզի։ Մենք գիտնականներ ենք ու գիւտարարներ։ Մե՛ր է գիտութիւնը։ Միացէ՛ք գիտութեան, որ կ'աշխարհակալէ, որ պիտի տիեզերակալէ...

Մեր Մայրը պատասխանեց.

— Գիտութեան դաղաթը կրօնն է։ Կրօնն է կատարը, ուրկէ կ'երթանք առ Աստուած։ Հոգիին, հաւատքին խղճակրթութիւնն է կրօնը, որ վեր է բոլոր անպտղաբերութիւններէն։

Ու սկսաւ վէճը։

— Այսօր ամբողջ աշխարհը մե՛ր է, իսկ վաղը պիտի տիրենք տիեզերքին...

— Հայր մեր, եկեսցէ արքայութիւն քո, որպէս յերկինս եւ յերկրի...

— Զուր տեղը կը սպասես այդ թագաւորութեան։

— Քու պետութիւնդ ու քաղաքակրթութիւնդ դիւային դիւթանք են, կեղեւ են անկորիզ, մեռաղ են, մեքենայ ու մահ...

— Մենք կը խորանանք...

— Հոգիպէս մեռեալ...

— Մենք կը թեւածենք...

— Դեւի դաւերով...

— Մենք կը տիրենք...

— Տիրուած Զարիքէն...

— Հեռացէք Հայութենէն, որ կը հալածուի ու կը հալի։ Որ փոքրամասնութիւն է անբաղձալի։ Բազմածին Հայութի՛ւն, որ կոտորուելով, ձուլուելով, այլասերուելով՝ միշտ մնացած է անքանակ, սակաւաթիւ։ Եւ պիտի ուռուի արդ, յայսկոյս ու յայնկոյս եւ ամէնուրեք, պիտի նուազի աւելի... Սպիտակ աղաւնի մը անգամ բաւական է ուտելու համար մնացեալը Հայութեան... Աղաւնի մը ու ագռաւ մը, հա՛, հա՛, հա՛, հա՛...

Մայր Հայաստան աջ թեւը հեռացուց խաչէն ու տեառնապրեց...

Դողացին սատանաները...

Սաղայէլը ցնցումէ մը բռնուած՝ նշան ըրաւ իրեններուն, որոնցմէ քառասուն սատանաներ եկան ու մեր նաւը հրեցին բացը...

Նաւազնացները աղօթեցին ու սկսան գործի։

Ճիւաղները չանձուկերու պէս կը հետեւէին մեր տապանին։

Դաղրած էին յարձակումները, սակայն կը լսէինք հրեղէն ու հակայ սուրին կիզելուն ցած բայց ահաւոր ձայնը, եւ կ'առնէինք անախորժ հոտը...

Ցաղաղանքը ոչնչացումն էր տապանին ու տապանորդներուն։

Զէինք գիտեր, թէ ի՞նչ ուղղութեամբ կը նաւենք։

Ամէն ոք յոգնած էր ու յուսահատ։

Խաւարին մէջ կը խուժէին խաւարներ։ Խաւար մը կը հոսէր խորերէն ու կ'ողողէր մեզ. խաւար մըն ալ կը տեղար վերերէն ու կը խեղդէր մեզ։

Միշտ կը լսէինք՝ հրեղէն ու հակայ սուրին կիզելուն սպառնական ձայնը, եւ կ'առնէինք եղերական հոտը։

Մահու մանգաղը կ'անցնէր մեր մէջէն...

Ոչինչ կ'երեւէր։ Մենք մեր մարմինները անգամ չէինք տեսներ։

Վիժած էինք վհատութեան վիհերուն մէջ, երբ երեւցաւ

Ս. Մեսրոպ՝

Այրուբենի ադամանդէ խաչը ուսին...

Կանգնեցաւ կամրջակին կեդրոնը, փշրեց խաչը ու տառերը՝ խաչաձեւ ասուղերու պէս արձակեց նաւուն վրայ, իբրեւ յուսաբեր համաստեղութիւն։

Հայ գիրերէն սկսան հոսիլ բազմերանգ ճառագայթներ։

Մանուկներն ու մեծերը սկսան հոգեձայն աղաղակել անունները մեռրոպեան տառերուն, մինչ կ'ոռնային ու կորոտային ճիւաղները։

Գիրերուն համաստեղութիւնը կը հետեւէր նաւուն։

Լսուեցաւ վարդապետին ձայնը.

— Գոսխուժէ։ Միայն այս տառերով տապանը կրնայ հասնիլ մեր ասառուածարնակ լեռնաքարափները։ Միայն այս գիրերով մեր գոյութիւնը կ'ապահովուի։ Այս ասողանիշերն են մեր զէնն ու զրահը ու զարդը... Ալելուիա՛, Ալելուիա՛, Ալելուիա՛... Ասառուածաւաք այս նշաններով մեր հոգիները կրնան զգենուլ ծիրանիներն Ազատութեան... Ովսաննա՛յ, Ովսաննա՛յ, Ովսաննա՛յ... Ամէն մէկ գիր մասունք է, մարմին ու արիւն տէրունական։ Հայուն հազորդութիւնն ու միութիւնն են այս աթութայքը, յանուն լոյսին յաւիտենական. ամէն։

Հայոց ասողակերտ գիրերը հրաշալի հրախաղութեան մէջ էին։ Անոնցմէ իւրաքանչիւրը իրմէ կ'արձակէր գունագեղ ու գոհարակուռ ամպհովանիներ, գմբէթներ, շատրուաններ, ջրվէժներ, ծաղկեփունջեր, ողկոյզներ, դորդեր, տարաշխարհիկ թռչնախումբեր եւ շուրջառներ ու շառայլներ։

Սակայն, հսկայ ու հրեղէն սուրը իր կիզումով կը վառնդէր նաւը...

Նաւորդները կը դրաւուէին անգամ մը յոյսէն, անգամ մը յուսահատութենէն... Անոնք միշտ բաժնուած էին երկու խումբի։ Հակառակ որ արիւնով եւ աւանդութեամբ եղբայրներ էին, ձեւացուցած էին երկու հատուած, եւ իրարու կը նայէին՝ երկու հակառակորդ ժողովուրդներու զաւակներուն պէս։ Անոնք նոյն նաւուն վրայ էին, սակայն անհունապէս հեռու էին իրարմէ։

Հեռաւոր կանթեղը կ'երեւէր մերթ, սակայն կը կորնչէր յաճախ...

Կամրջակին վրայ, սաստիկ էր եռուզեռը։ Կային աղօթողներ, բոլորուած վարդապետին շուրջը։ Կային երգողներ, հառաչողներ ու աշխատողներ ալ...

Ասեղակազմ տառերէն կը տեղային շողշողուն նկարներ։

Հրեղէն սուրը կը կիզէր տապանը...

Նաւը կ'ընթանար, շրջապատուած ճիւաղներով...

Աղօթք ու աշխատանք եւ անտարբերութիւն..

Հրեղէն սուրը կը շարունակէր կիզել նաւը...

Նաւարը խիտ էր ու ասողանիշերը կը շողշողային, յարափոփոխ տեսիլներով...

Կը գտեմարտէին Յոյսն ու Յուսահատութիւնը, մեր մէջ...

Հրեղէն սուրը կը կիզէր տապանը...

Ս. Մեսրոպ կ'աղօթէր շրջապատուած հաւատարիմներով...

Մոյր Հայաստան կ'ողբերգէր...

Հրեղէն սուրը կը կիզէր նաւը...

Տապանը տագնապներու մէջ էր...

Սկսաւ խորունկէն խմբանուագ մը... Քայլե՞ր էր թէ մահերգ... Դժուար էր որոշել... Թէ՛ մէկն էր, թէ միւսը. մերթ մէկն էր, մերթ միւսը...

Ոմանք քայլերդով կը քաշուէին ետ, իսկ ուրիշներ մահերգով կ'ընթանային յառաջ...

Հրեղէն սուրը կը կիզէր...

Շիկացած աւազներնէր կային մեր հոգիներուն մէջ...

Կանթեղը կ'երթար ու կու գար...

Մեր կամքին կոթողը մերթ կանգուն էր, մերթ՝ կործանած...

Ու հրեղէն սուրը կը կիզէր նաւը...

Մեզի կ'ընկերանային կարծէք հին Հայեր, իբրեւ սրբազան ստուերներ, հոգեզինելով մեզ:

Նաւուն եզերքներուն վրայ յայտնուեցան, քով քովի նստած, մին քան զմիւսը դեղոնի ու ցանկայարոյց կիներ, որոնք պերճաղիճներու վարպետութեամբ կ'ուղղէին աշահրաւէրներ երիտասարդներուն, նոյնիսկ չափահասներուն: Անոնք յայրատօրէն կը ցուցադրէին իրենց մարմինները, որոնք մերկ էին գրեթէ:

Անհնարին էր դիմադրել անոնց մերկութեան ու մոգութեան: Կը կանգնէին նաւորդները: Ո՛ր նաւորդը որ պատասխանէր՝ պերճաղիճը դայն կը գրկէր ու նայեցաւ նման կը նետուէր ծով...: Իւրաքանչիւր պերճաղիճ յաջողեցաւ տանիլ մէկը մենէ:

Մնացողները անոնք էին, որոնք պահ մը միայն նայեցան պերճաղիճներուն, ապա իրենց ուշադրութիւնը կեդրոնացուցին Մայր Հայաստանին վրայ:

Մեր նաւը ո՞ւր, ո՞ւր, դիշերներ, գիշերներու գերեզմաններուն մէջ, իրերայաջորդ գիշերներ, անաղարտ գիշերներ...

Շատեր հիւծուած էին հայրենաբաղձութենէ, յոգնած պայքարէն եւ յուսալէ...

Այնքան հոգի նոթի էր հայրենի հողու, հայրենի շունչի, ու ծարաւի, ծարաւի...

Մայր տուին վէճեր ու վիրաւորանքներ, ընդմէջ երկու խումբերուն...

Ոմանք վատացան, ոմանք վսեմացան...

Երբ կոիւը կրակոտ դարձաւ, յայտնուեցաւ ու հասաւ նաւ մը, լի ատրանաներով եւ մերկ պոռնիկներով:

Յատանաներէն մին կանգնեցաւ իրենց նաւուն մէջ, որ մերինէն փոքր էր, ու ըսաւ մեզի.

— Գեռը խղճալով մեր վրայ, զրկեց այս ազատարար նաւը: Ուզողը կրնայ լքել այդ տարագրելոց տապանը, որ դատապարտուած է կորուստի, եւ անցնիլ մեր նաւը, փրկուելով ոգեկիզումէ կամ խեղդամահ ըլլալէ...

Յատակացաւ խռովութիւնն ու խուճապը:

Ոմանք միացան ատանաներուն...

Ու ատանայ մը մեր տարագիր տապանը հրեց հեռու...

Մտանք բաց ծով, ու մեր նաւը կատաղի հոսանքի մը մէջ էր ու յորձանապոյտ կը դառնար, կը դառնար, կը դառնար...

Նաւուն մէջ մնացողները սկսան վիճիլ, վիրաւորել զիրար: Այնքան ոք կը կռուէր նախ ինք իր դէմ, ապա միւսներուն...

Անտեսանելի Դեւ մը կը հրահրէր կռիւը:

Խաղաղասէրներուն ձայնը կը խեղդուէր խժամուժին մէջ:

Բոլոր խռովարարներն ու բոլոր խաղաղասէրները, ի վերջոյ, կռուողներուն հետ, եղան խմոր մը, ու կը ատատանէին կռուելով...

Ու նաւը կը դառնար յորձանապտոյտ, իսկ հրեղէն սուրը կը կիզէր տապանը...

Նաւագնացները խառնուած էին իրարու, կաղմելով հսկայական խմոր մը։ Կային ոտքի տակ ինկածներ, կային իրարու վրայ դիզուածներ։

Ու կարմիր օձեր կը շաղուէին խմորը։

Մայր Հայաստանն ու Ս. Մեսրոպ սրբելով իրենց աչքերը՝ հեռացան մենէ, ինկելով յատակը տապտնին։

Թափեցան ոյրուբինին աստղերը ու ինկան ժեր ոտքերուն տակ ու մարեցան։

Տիրեց բացարձակ խաւարը։

Նաւագնացները կը չարունակէին կռիւը, կոխկռտելով մեսրոպեան տառերը։

Ինկած էի այդ մարդկային կոյտին նեբքեւ, ու կը տեսնէի, որ կամրջակին եգերքները բարձրացած են արջեր ու գայլեր, որոնք չարախնդութեամբ կը դիտէին մեր անիմաստ դուպարը...

Նկատեցի, որ մեր խառնակոյտին մաս կազմողներուն մէջ կային սեւազգեստներ ու կարմրազգեստներ եւ անոնց հանդերձները ծաւալեցան ու ծածկեցին մարդակոյտը, անոր տալով դիւային երեւոյթ։

Նաւը անդադար կը դառնար յորձանապտոյտ...

Կը խեղդուէր մարդկային խառնակոյտը, դիրկընդխառն կռիւով մխացած։ Կը խեղդուէր տրտրուելով ու տրտրուելով, տատանելով ու տատանելով եւ տրտիելով ու տրտիելով...

Կը սուլէին կարմիր օձերը...

Կը լսուէին նախատինքներ ու նզովքներ, ամբաստանութիւններ ու դրպարտութիւններ եւ հայհոյներ ու հակասական խօսքեր։

Ատրաշէկ սուրը յարատեւօրէն կը կիզէր, կը սղոցէր նաւը, որ կը դառնար ու կը դառնար...

Օդին մէջէն, սառանայ մը սկսաւ ոսկիներ թափել խառնակոյտին վրայ, խազմին խանդր հրահրելու համար...

Ոսկինե՞ր, տեղատարա՞փ ոսկիներ... Կիսամեռ մարդիկ կը հաւաքէին այդ ոսկիները։

Նաւը կը դառնար յորձանապտոյտ, կիզուելով հրեղէն սուրէն...

Նաւը իր մէջ ծով մը ունէր ալեկոծ...

Եւ տեսայ ինկած անկիւնէս, որ Աստուածամօր քաղցրագեղ աչքերը արտասուոր կերպով կը փայլէին նաւուն վերեւ...

Այդ երկնաւուշ աչքերուն նայելով՝ սրբուեցաւ տագնապիս անհուն սարդոստայնը, ու հոգիս լեցուեցաւ տեսիլով դրախտավայրի։

Թէեւ դանդաղ, բայց կը դառնար ու կը դառնար ամենայն ինչ— Ծովը, յորձանքը, նաւը. կը դառնային ճիւաղներն ու գազանները եւ Հայերը, ու Հայոց մէջ ծովեր խռովքի։

Անշարժ էին միայն Տիրամօր աչքերը մեր վերեւ, իբրեւ աստղեր չարխափան։

Տեսայ, որ Աստուածամօր հոգելից աչքերէն մեր նաւուն վրայ արձակուած էին լուսեղէն լարեր, որոնց վրայ ձիւնասպիտակ ձեռք մը կը նուագէր մեղեդի մը, մեղմիկ քաղցրութեամբ։

Հետզհետէ տեսայ Աստուածամօր ամբողջ դէմքը։ Ան՝ չարունակելով նուագել, կ'երգէր դրաբար քերթուածներ Նարեկացիէն ու Շնորհալիէն։

Ցանկամ, մեսրոպեան գիրերը՝ գունագեղ լոյսերով վերելակեցին ու ձուաձեւ դառնալ սկսան Աստուածամօր շուրջը, իբրեւ ծիրանի գօտի։

Մնացորդ Հայերը, դադրած կռուելէ, ծնրադրած, կը դիտէին ու կ՝ունկնդրէին, հոգւով արբեցեալ։

Եւ տարաչէկ սուրը ինկաւ ովկիանին մէջ, եւ ամէն ոք լսեց անոր չիլանիլը։

Ու պահ մը ամենայն ինչ լռեց։

Ցանկարծ, նաւորդներէն Հայաստանցի մեր եղբայրները աղաղակեցին.

— Կը լսենք... Կը լսենք Կանչը Հայրենիքին... Կը լսենք Հայրենի Հրաւէրը...

Եւ իրենցմէ մին, որ բանաստեղծ էր, լուութիւն յանձնարարեց. յետոյ յորդ յուզումով յայտարարեց.

— Օ՛, այս Կանչը... Աստուածային որոտ ու Թնդիւն ընդերկրեայ... Կանչ եղերական, խռովիչ, հոգեդրաւ, հրամայական ու սիրայորդ հրաւիրական եւ անդիմադրելի, անդիմադրելի... Ի՞նչ մեներգ է, համերգի մէջ ու նուագածութեան... Կը լսեմ երկրագործին երգը հորովելներով, հողերուն սիրերդները, կոչնակի հնչիւններ, զանգի զոզանջներ, հովուի սրինգ, հովերու սոյլեր, տակաւին քարերու աղաղակներ եւ ծառերու ծնծղաներ, տաւիղներ ու քնարներ... Օ՛, այս Կանչը, որ երգ է ու երաժշտութիւն անմոռացելի... Կանանչ Կանչ, Կարօտի Կանչ, Կանչ Կրակէ... Հայրենի հողերուն հրաւէրին մէջ, կը լսեմ ձայները մեր լեռներուն, մեր լիճերուն, մեր արտերուն, մեր աղբիւրներուն, նաեւ մեր մեռեալներուն, որոնք բիւրաւոր ու այլազան հողվրդիներէ դուրս կանգնած՝ իրենց հոգեղէն հաւազով մառնակից են Կանչին, որ հրեղէն հոսանք է, որ մաղնիս է մոլական, որ կը հասնի հարուածի ու համբոյրի հանգոյն, որ կը պատուակի մէջս ու զիս կը խենթեցնէ... Այդ Կանչին մէջ, կը լսեմ կամքը նախնիքներուս, հրահանգը հօրս, իզձը մայրիկիս ու փափաքը քոյրերուս եւ եղբայրներուս, որոնք կորան այն մեծ արիւն հեղեղին... Եղբայրնե՛ր, եղբայրնե՛ր, եթէ չհասնիմ Կանչին ակերուն, տարէք Սիրոս, ու անով սերմանեցէք հողը հայրենի, որ ծլի ծաղիկ մը սիրոյ...։ Օ՛, այդ Կանչը, որ այնքան մօտ է ինծի. կարծէք կը հնչէ հոգիիս մէջէն, կարծէք հոգիս է, որ կը խօսի, կ՝երգէ, կը նուագէ, կը կանչէ, ինքզինքը գտնելու, ինք իր տեղը ըլլալու, ինք իր տէրը ըլլալու համար։ Կապուած եմ հայրենիքի բոլոր արմատներուն ու կը քաշուիմ ա-նոնցմէ...

Կը լսէի Կանչին արձագանգները հայաստանցիներուն հոգիներէն...

Տեսայ Մայր Հայաստանն ու Ս. Մեսրոպը, որոնք կ՝ողօթէին երեսանկեալ։

Հայոց տառապեալ դէմքերը դիտեցի. անոնց մէջ վերածնած էին մանուկ կուսութիւնը, նաեւ իմաստուն հրեշտակութիւնը։ Դէմքերը կ՝արթընային յաւատեսութեան լոյսերով...

Միջոցը լեցուած էր բիւրաւոր զանակներով, միջոցը լեցուած էր բոյրերով չուշանի։

Նաւը դադրած էր դառնալէ։

Ձիւաղներն ու գազանները հեռացած էին, գիրար բզկտելու համար...

Մայր Հայաստանը կանգնած էր ծիրանաւոր, ու յամրաբար կը պարէր, ընկերակցութեամբ Տիրամօր վերսկսած նուագին ու երգին։ Մեր գիրերը կը դառնային իբրեւ ձուաձեւ ծիրանի գօտի։

[illegible] կը պարարտէր։

Գիւղը պարարտուած էր պարարտութիւնով եւ պարարտ էր հաստատուն [illegible], [illegible] եւ [illegible]։ [illegible]։

Գիւղացիներ [illegible] կը [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible]։

[illegible] մէջ [illegible] մը [illegible] [illegible]։

[illegible] [illegible] [illegible] [illegible]։

[illegible] [illegible] [illegible] [illegible]։

[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։

[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։

[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [

[illegible]

[illegible]

[illegible]

ԽՈՐՀՈՒՐԴ

●

Վաղեմի մտորումներս
Նոր երանգով պիտի հանդերձեմ...:

Նայուածքս չեմ հակեր ճանապարհիդ,
Ուր ձանձրոյթը կը յօրանջէ
Սպասումի արեւուն տակ:
Զլքեցի՞ր անցեալդ իբրեւ ատնտու,
Որ յանախ պատրանքներով դիեցուց քեզ:
Մանկութեանդ արշալոյսը
Ցետմիջօրէի արեգակ է դարձած,
Մինչ դուն, անցեալամոյն օրերուդ
Երանութիւնը կ'երազես...:
Պիտի չդադրի՞ս կառչելէ
Վերապահութեան փխրուն պատնէշներուն.
Ինչո՞ւ կը մնաս ականջալուր
Բնազդներուդ հեւքոտ յուշարարին.
Արդեօք ե՞րբ պիտի լսեմ
Խռհական խօսքիդ շեշտը տիրական...:

Ի զո՞ւր կը բաղձաս զիս.
Կեանքի հակադիր բեւեռներուն
Ուղեւորն եմ անհանդա՛րտ, ըմբոստ,
Կը սիրեմ պարզել
Այլամերժ ոգի
Մտայնութեանց դէմ գաղջ ու անարիւն:
Կը սիրեմ փարիլ խոյացող բաշի՛ն
Մակընթացութեան
Եւ զգա՛լ, ապրի՛լ
Հոծ կոհակներու մարտնչումն ահեղ
Ի խնդիր հողի
Եւ աւետաւոր յաղթանակներու:
Անզօր հեւքին հետ տեղատուութեան՝
Նահանջող յոյսի երկունքը ապրիլ,
Երկունքը բաժանեա՛լ հոգի,
Պատրանաթա՛փ պարտութեան:

Դրիւնաբոյր նամբարներուն
Մոքմոքի՛լ, տնքա՛լ,
Այլ՝ պրկե՛լ նաեւ
Լոյծ դնդերները արարող կամքի.
Ըմբոստանա՛լ,
Ըլլա՛լ...:

Զբազմի՛լ միայն
Ցառաջագոյն ըմբռնումներու ակութին շուրջ.
Այլ՝ սաւառնիլ դէպի Անյեղլին,
Դէպի Անհեթեթն ու Բացասականը
Ամենայն ճշմարտութեանց:

Անարգաւանդ հոգի պէս
Անմա՛սն ըլլալ մայրութեան բերկրանքին
Եւ՝ սաղմնաւորուի՛լ
Խորհուրդովն արարչագործութեան.
Մայրանալ հոգի պէս արգասաւոր...:

Վաղեմի մտորումներս
Նոր յղացքով պիտի պատմուեանեմ...:

Անցնիմ փոխանցման վիճակէ վիճակ,
Սիրոյ եւ վրէժի,
Հեղգութեան եւ երկնումի
Զոյգ բեւեռներն ընդգրկող
Զգացումի՛ պէս,
Իմացական կիրքի՛ պէս:

Մայրամտի՛մ, անէանա՛մ
Եւ պայծառանա՛մ վերստին
Արշալոյսի լուսահանդերձ վերայայտնութեամբ:

Խորհուրդի պէս անսկիզբ, անեզրական,
Ըլլամ թէ՛ ծանօթ, թէ՛ անծանօթ միանգամայն...:

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

ՅԱՍՈՒՄ

•

«— Մարդու գլխագոյն պարտականութիւնն է յարգել իշխանութիւնները», — իր ժամանակին ասել է պապ Լէոն տասներեքերորդը։

Պապերն իրենք իրենց Յիսուսի փոխանորդներն են համարում, բայց ես ինչքան որ գիտեմ, այդ Մեծագոյն Մարգարէը նման բան չի ասել։

«— Բոլոր իշխանութիւնները նուաստացուցիչ են», — ասել է անգլիացի գրող Օսկար Ուայլդը։

«— Իշխանութիւնն ազատութեան բացառումն է», — ասել է ռուս մեծ յեղափոխական ու անիշխանական՝ Նիկոլայ Բակունինը։

**

Ես ատում եմ իշխանութիւնները, որովհետեւ նրանց չեմ վստահում եւ նրանցից միայն գէշութիւն եմ ակնկալում։ Կարող եմ խօսել փաստերով, եւ դրանք շատ-շատ են։ Բայց ուզում եմ պատմել վերջին մի աննշան «յանցանքի» մասին, որը տեղի ունեցաւ, երբ ես աշխատում էի գործիքներ պատրաստող մի գործարանում եւ որի համար իշխանութիւններն ինձ հետ գայլերի պէս վարուեցին։

Կէսօր էր, եւ մեր գործարանում՝ ճաշի կէսժամեայ դադար։

Ես արդէն կերել էի Tuna fishի իմ sandwichը, խմել մի չիչ «անմահական» Coca-Cola, — երկարել էի ոտքերս, փռուել իմ ծիրգլանիկն ու վայելում էի «պէս-պէս գոյներով պրզաբուն» իմ «վերջանիկ» կեանքը, երբ բանուորներից մէկն արմուկը սեղմեց արմուկիս վրայ։

Ես գլուխս բարձրացրի, եւ ի՞նչ տեսնեմ, իմ առջեւ է կանգնել հրդեհների հակոգութեան վերակացուն ու ինձ դիտում։

Այստեղ պիտի ասեմ, որ այդ վերակացուների պաշտօնը միանգամայն աւելորդ է, որովհետեւ դեռ չի եղել մի դէպք, որ նրանք կարողանան հրդեհը կանխել։ Ընդհակառակն, շատ անգամ նրանք իրենք են հրդեհ ստեղծում, երբ իրենց խելքով փորձում են, տեսնելու տուեալ շէնքը կ'այրուի՞, թէ ոչ։ Բայց ասեմ նաեւ, որ ես նրանց դէմ ոչինչ չունեմ։ Այս աշխարհում պաշտօնը նրա համար է, որ տուեալ պաշտօնեան ապրի։

եւ ես դէմ չեմ, որ նրանք ապրեն, երբ չեն ուզում ծանր աշխատանքով ապրել։

Սակայն այդ մասին չէ խօսքը, այլ ա՛յն մասին, թէ ինչպէ՛ս, հրդեհների հսկողութեան վերահսկիչը կանգնել իմ ծխելն էր դիտում։

— Դու ծխում էիր, — ասաց նա այնպէս, որ կարծես ես իմ ծխելը թաքցրել էի նրանից։

— Ես հիմա էլ եմ ծխում, — ասացի, ցոյց տալով ձեռքիս գլանիկը։

Նրա անշարժ դէմքն այդպէս էլ մընաց անշարժ։

— Այս գործարանում ծխելն արդէլուծ է եւ դու դիտես այդ, — ասաց նա։

— Այո, բայց ոչ դաղաբի ժամանակ։

— Բոլոր ժամանակների համար։

— Այդպէս չէ։

— Այդպէս է։

— Ի՞նչ էք ուզում ինձնից, — հարցրի։

— Անունդ եւ հասցէդ, — բացատրեց նա։

Թէեւ ես դիտէի, որ նա իմ անունն ու հասցէն չի վերցնում, որպէսզի մի երեկոյ ինձ ընթրիքի կանչի եւ իր կնոջ հետ ծանօթացնի, բայց եւ այնպէս տուեցի այն բոլոր տեղեկութիւնները, որ նա պահանջեց։

Երբ նա գնաց, քանուորները ինձ խորհուրդ տուին bossի մօտ դնալ եւ դանդատուել։ Այլ կերպ, ասացին նրանք, հրդեհների այդ հսկիչը քեզ կը ստիպի քանրհինգ դոլար տուգանք վճարել։

— Նա չի կարող այդ անել, — ասացի, — նախ ես անմեղ եմ, յետոյ էլ կառավարութիւնն իմ քանրհինգ դոլարի կարիքը չունի։

Նրանք ծիծաղեցին ինձ վրայ։

— Կառավարութիւնը եթէ հնարաւորութիւն ունենայ, ոտքերիդդ կօշիկներդ կը հանի, — ասացին նրանք։

Ձիշդն ասած՝ ես վախեցայ։ Ոչ թէ կօշիկներիս համար, որոնք մի քան չէին, այլ քանրհինգ դոլարի համար, որը ես պիտի վաստակէի երեք օր չարաչար աշխատելով։

Ինչպէս ասում են, բոռն ինձ հետ «լաւ» էր։ Նա մի քանի անգամ, իմ կողմից անկառելի, դիտել էր իմ աշխատելը եւ շատ հաւանել։

Նման դէպքերում, նա կարծես դեռնից էր բուսնում, կանգնում էր կողքիս, ձեռքը դնում ուսիս եւ միշտ էլ նոյն բանն էր ասում։

— Եթէ մի օր մի որեւէ օգնութեան կարիք ղգաս, ինձ դիմիր, մերժում չես ստանայ...։

Եւ թէեւ ես գիտէի, որ բոսերը բաւերը հակառակ իմաստով են գործածում, բայց եւ այնպէս վաղեցի գնացի բոսից «օգնութիւն» խնդրելու։

Երբ ներս մտայ դրատենակը, բոսն ու հրդեհների հսկողութեան մարդը նրատել ուխսկի էին խմում ու սիգար էին ծխում։

— Պարոն բոս, — ասացի եւ գլխով ցոյց տուեցի հրդեհների հսկողութեան վերահսկիչի վրայ, — այս պարոնը քիչ առաջ իմ անունն ու հասցէս վերցրեց, որոյհնոեւ տեսաւ, որ ես դաղաբի ժամանակ ծխում էի։ Խնդրում եմ ձեզ, նրան բացատրէք, որ մեր գործարանում դաղաբի ժամանակ կարելի է ծխել։

Բոսն ինձ լսեց ուշադրութեամբ, բայց անմիջապէս չպատասխանեց։ Բոլոր բոսերը ձեզ լսում են համբերութեամբ, բայց անմիջապէս չեն պատասխանում։ Հենց դրա համար էլ նրանք բոսեր են, իսկ մենք՝ ոչ։

— Ես այդպիսի մի բան չգիտեմ, — վերջապէս ասաց նա։

— Ես ձեզ չհասկացայ, — ասացի։

— Ես չգիտեմ, որ մեր գործարանում դաղաբի ժամանակ ծխում են, — իր դէմքին մանկական տեսք տալով, կէս զարմացած եւ կէս բարեկամական ձայնով ասաց բոսը։

Այդ այնպիսի մի ուրացում էր, ինչպէս, ասենք, որ նա ուրանար, թէ այդ վայրկեանին ուխսկի չէր խմում եւ սիգար չէր ծխում։

— Բո՛ս, դուք գիտէք այդ մասին, — ասացի։

Նա նորից մի քիչ մտածեց եւ ապա գլուխը բարձրացնելով՝ հարցրեց.

— Ուզում էք ասել, որ ես գիտեմ, եւ այժմ ստո՞ւմ եմ։

— Այո՛, — ասացի։

— Գնացէ՛ք այտոնդից, — բարկացաւ նա։

— Ես ձեր գործարանից ամբողջովին կը գնամ, — ասացի եւ քայլեցի դէպի դուռը։

Հրդեհների վերահսկողութեան մարդը, որ մեր խօսակցութեան ժամանակ յուռ էր, այդտեղ այնպէս ծիծաղեց, որ կարծես թէ ինձ ուզեց ասել՝ «մի հեռացէք այս գործարանից։ Եթէ հեռանաք, բոսի ոտքերը կը պաղեն...»։

Հրդեհների մարդը նորութիւն չասաց։ Ես էլ գիտէի, որ իմ հեռանալով բոսի ոտքերը չպիտի պաղէին։ Բոսն էլ գիտէր, որ իմ հեռանալով իր ոտքերը չպիտի պաղէին եւ նա հասկանալով հրդեհների մարդու ծիծաղի իմաստը, ինքն էլ ծիծաղեց, որ թուաց, թէ ասաց.

« — Հա՛, էլի...»։

Բայց եւ այնպէս ես գնացի։ Գնացի նշէպի աշխատանքային քարտս, փոխեցի հագուստներս, եւ հենց կէսօրից հեռացայ։ Եւ, որովհետեւ էլ անելիք չունէի, գնացի մի շարժանկար դիտելու։ Ինձ ա՛յնքան շատ են աշխատանքից դուրս արել, եւ ես ինքս ա՛յնքան շատ եմ ինքնակամ կերպով աշխատանքից հեռացել, որ անգործութեանս առաջին ճնշիչ ժամերը մոռանալու համար, գնում եմ շարժանկար դիտելու, մա՛նաւանդ, երբ ուզում եմ, որ բոսերի ոտքերն աւելի քան պէտք է, սառեն...

Անշուշտ, իմ ասածը կատակ է։ Այդ ես եմ այդպէս ասում եւ ուզում եմ, որ ուրիշներն օգտուելով իմ այդ կատակից, ծիծաղեն։ Բայց մի օր հակառակը դուրս եկաւ, երբ այդ մասին ասացի իմ մի բարեկամին։ Նա, այդ իմ բարեկամը, իմ ասածը լուրջ ընդունեց եւ փոխանակ իմ կատակի վրայ ծիծաղելու, սկսեց իմ վրայ ծիծաղել։

— Անշուշտ, անշուշտ, —ինձ ծաղրեց նա, — բոսիդ ոտքերը չատ պաղելուց, երեւի մարդը հիւանդացաւ ու անկողին ընկաւ... Հա՛, հա՛, հա՛...։

Ցուսախութիւնից ես էլ ծիծաղեցի.

— Հա՛, հա՛, հա՛...։

*
**

Գործարանը թողնելուց երեք օր յետոյ, քաղաքային ոստիկանութիւնից մի կոչնագիր ստացայ, յաջորդ օրը ներկայանալու դատարան։

Ես տանտիրուհուց քանըհինգ դոլար պարտք վերցրի՝ տուգանքը վճարելու համար, եւ երկու խօսք պատրաստեցի՝ յանուն արդարութեան խօսելու մտքով։ Այն օրերին ես չատ միամիտ էի եւ չատ բաների էի հաւատում։ Ասենք, հիմա էլ նոյնն եմ։

Դատաւորը լեցուն էր ժողովուրդով։

Դատաւորը, որ մի տարիքոտ մարդ էր, պէտք էր որ կարճահասակ լինէր, որովհետեւ նրա կոնաձեւ ու ճաղատ գըլուխն հազիւ էր երեւում իր բարձրագիր ամպիոնի յետեւից։ Տպաւորութիւնն այն էր, որ նա չէր նստել այդ ամպիոնի առջեւ, այլ թաքնուել էր նրա յետեւում։ Նրա դէմքի մորթը գեղնաւուն էր ու պսպղուն, եւ թւում էր, որ այն ձգուած էր ու սոսինձով փակեցուած նրա այտերին ու գանդին։ Նրա աչքերը, որ երեւի ժամանակին կապոյտ էին եղել, այժմ անգոյն էին, անշարժ ու անկենդան։ Եւ երբ նա խօսում էր, ինչ-որ պաղութիւն էր իջնում սրահում, եւ յուսային անյուսալի դառնում։

Երբ ես դատարան մտայ, դատաւորը լրացնելով մի դատի լուծումը, ձեռքի թափով ա՛յնպէս հարուածեց սեղանին, որ կարծես այնտեղ նստած մի ճանճ ուզեց ոչնչացնել։

— Ցաջո՛րդը։

Դատական քարտուղարը ելաւ տեղից եւ կարդաց.

— Օրիորդ Քէնդի Գապիր։ Տէր եւ տիկ. Գապիրներ։ Օրիորդ Գապիրն իր

ծնողներին մեղադրում է իր ազատութիւնները կաշկանդելու մէջ...

Նոր իր սեղից ելաւ եւ դատաւորի ամպիոնին մօտեցաւ օրիորդ Քէնդի Պապիրը, որը տասնըչորս-տասնըվեցնոց տարեկան, հաստակեկ մարմնով, տափակ, ժանտ ու մռայլ դէմքով մի աղջիկ էր։ Ցեռոյ դժուարութեամբ իրենց տեղերից ելան եւ մոլորուած ու ամաչկոտ քայլերով դատական ամպիոնին մօտեցան Քէնդիի ծնողները։

«Ահա, — մտածեցի ես, — յարմար առիթ, որ այդ դատաւորն այդ «օրիորդ» Քէնդիին տեղը նստեցնի, իր հարազատ ծնողներին դատարան քարշ տալու համար...»։

Սակայն ես սխալուեցի։ Որովհետեւ յետոյ ինձ համար պարզ եղաւ միայն, որ այդ դատաւորն ո՛չ միայն «մեծ արդարադատ ու մարդասէր էր», այլեւ երեխաների դաստիարակութեան այս երկրի «անզուգական» աւանդութիւնների հետեւորդ, եւ դատական իշխանական զօրութեամբ կեանքում կիրառող։

Քէնդի աղջնակը դիմէր իր տրածը։

— Քէնդի՛, երեխաս, — աշխատելով իր ստոյգի նման պազ ու խուլ ձայնի մէջ ջերմութիւն ու «հայրականութիւն» դնել, խօսեց դատաւորը դիմելով իր ծնողներին դատի կանչած աղջնակին, — ինձ ասա, քէ ինչո՞ւ են քո ծնողները բռնաբարում քո ազատութիւնը եւ ինչպէ՞ս են նրանք այդ անում...

— Ո՛հ, պարոն դատաւոր, — ուղեց խօսել Քէնդի աղջնակը, բայց դատաւորը նրան ընդհատեց։

— Քէնդի՛, երեխաս, — իր բարակ շրթունքները յետ քաշելով, փորձեց ժըպտալ դատաւորը, — դատաւորին դիմելու դէպքում, պարոն բառը չեն գործածում, այլ Ձերդ Ազնուութիւնը...

— Ներողութիւն, — ասաց Քէնդին։

— Այդ ոչինչ, — նրան քաջալերեց դատաւորը, — այդ բաները դու կարող ես չիմանալ, որովհետեւ առաջին անգամ ես գտնւում դատարանում։ Ցեռոյկը սովորես...

— Երկրորդ անգամ, — խզուած ձայնով համարձակուեց ասել Քէնդիի դժբախտ հայրը։

Դատաւորը կատաղեց եւ ձեռքի թուղթը պարզեց նրա կողմը։

— Քեզ հարցրի՞ այդ մասին։

Քէնդիի մայրը քաշեց ամուսնու թեւից, եւ նրանք լռեցին։

— Շարունակիր, Քէնդի, — մեղմացաւ դատաւորը։

— Ձերդ Մեծութիւն, — խօսեց Քէնդի աղջիկը, — արանք, — գլխով նշոյց առաջ իր կողքին կանգնած ծնողների կողմը, — իմ վրայ շատ են խօսում, երբ գիշերները ուշ եմ տուն գալիս...

— Եւ քեզ ծեծում են, — առաջարկեց դատաւորը։

— Թող փորձեն, — կատաղաբար գլուխը թափահարեց Քէնդի աղջիկը։

— Իրաւունք ունես, — բարկացաւ դատաւորը, — ա՛յդ էր պակաս, որ այդ բռնակալները քո ազատութիւնը խլելով հանդերձ, նաեւ ծեծէին քեզ նման մի անպաշտպան երեխայի... Հիմա ի՞նչ ես խնդրում դատարանից, Քէնդի, տառապած երեխայ...

— Ուզում եմ այդ բռնակալներից առանձին ապրել, — ասաց Քէնդին։

— Առանձին՝ ո՞ւր, — հարցրեց դատաւորը։

— Թող ինձ համար սենեակ վարձեն, — պահանջեց Քէնդին։

Դատաւորը գլուխն իջեցրեց, եւ մէկ վայրկեան մտածելուց յետոյ, դիմեց Քէնդիի ապերջանիկ ծնողներին.

— Ապրելիանե՞ր ունէ՞ք...

— Ես քոյր ունեմ, — ասաց Քէնդիի մայրը, — որը տասնըչորս տարի առաջ դժբախտութիւն էր ունեցել ու ծնել իր այդ աղջկան։ Ինամել էր նրան, մեծացրել, դուրգուրացել վրան, որ մի օր իրեն դատի կանչէր իր այդ հարազատ աղջիկը, եւ նրան բռնակալ անուանէր։

Ի նշան իր խմաստութեան արտայայտութեան, դատաւորը սեղանի յետեւից հանեց իր միշտ այնտեղ թաքցրած ձախ ձեռքը եւ շօշափեց իր թուշային քիթը, եւ ապա միշտ ալ ձեռքում պահած թանկով հարուածեց սեղանին։

— Good!, — ասաց նա, եւ քարտուղարին հրամայից արձանագրել, — «Քէնդիին վերցնել իր ծնողներից եւ յանձնել նրա մօրաքրոջ։ Քէնդիի ծնողներին պարտադրել վնարելու նրա ապրուստի ծախսերը եւ շարաթական էրսանիրմէկ դոլար անմնապէս Քէնդիի՝ որպէս գրպանի դրամ։ Ծնողներին խստիւ արգիլել խառնուելու Քէնդիի անմնական կեանքին ու գործերին...»։

Թելադրութիւնից յետոյ, դատաւորը համեստօրէն գլուխն իջեցրեց, ապասելով, որ հանդիսականները ծափահարեն իր այդ շնչաբարհիկ վճիռը, բայց ժողովուրդը քար լռութիւն պահեց։

Կողքից նստած մի պարոն հառաչեց.

— Անշուշտ, Քէնդիի ծնողները մի աւելի բարձր աստեանի կը դիմեն՝ բեկանելու համար այդ ապուշ վճիռը, — նըբան մխիթարելու համար ասացի ես։

Նա ինձ այնպէս նայեց, որ ես հասկացայ, որ նա զարմացաւ իմ միամտութեան վրայ։

— Չի օգնի, — թերեւս խղճաց ինձ եւ բացատրեց, — այս դատաւորը յիմար մէկը չէ։ Նա դիտի, թէ ինչ է անում... Նման «գործերը» բոլոր դատական ատեանների կողմից ճիշդ այդպէս են լուծւում...

Նոյն այն ժամանակ, չատանալով իր ակնկալուած ծափահարութիւնները, դատաւորը գլուխը բարձրացրեց եւ Քէնդիի ծնողներին ասաց.

— Գնացէք եւ կատարեցէք դատարանի վճիռը։

— Կարո՞ղ եմ ձեզ մի հարցում ուղղել, — համարձակուեց հարցնել Քէնդիի «բռնակալ» հայրը։

— Ի՞նչ է, — տհաճութեամբ իրաւունք տուեց ընտանիքներ «խաղաղեցնող» «իմաստուն» դատաւորը։

— Ես ուզում եմ գիտնալ, թէ ի՞նչ նպատակ է հետապնդում ձեր արձակած վճիռը... Արդեօք այն, որ եթէ Քէնդին առաջներում գիշերուայ ժամը մէկին էր տուն գալիս, այժմ կարող է ամբողջ գիշերը տուն չգա՞լ...

Ներկաները ծիծաղեցին։

Դատաւորը ցնցուեց եւ իրաւունք ունէր։ Այդ «ողորմելի» մարդը հարցականի տակ էր առնում նրա դատական իմաստութիւնը։

Շատ բարկացաւ նաեւ Քէնդին։

— Հօ՞ տեսաք, ձերդ մեծութիւնը, հօ՞ տեսաք, — դատաւորին հրահրեց այդ «ճնչուած» աղջիկը։

— Ուրեմն, դուք կասկածո՞ւմ էք իմ արդարադատութեան վրայ, — ասանց բարկութեան, Քէնդիի հօրը հարցրեց դատաւորը։

— Դուք ինձ ճիշդ հասկացաք, — հերոսացաւ Քէնդիի խեղճ հայրը։

Այս անգամ դատաւորը ձեռքի թակն այնքան վեր հանեց, որ կարծես մի ուժեղ հարուածով ուզում էր մի ահռելի զազանի գլուխ ջախջախել եւ թափով հարուածեց սեղանին.

— Ցիսուն դոլար տուգա՛նք...

— Good, good!, — ուրախութիւնից ծափ տուեց Քէնդին եւ պար եկաւ։

— Հա՛, հա՛, հա՛, — ծիծաղեց Քէնդիի հայրը, ակնարկելով, ոչ այդ տուգանքը վճարելու ուրախութիւնից ելնելով։

— Խեղճ մարդ... խենթացա՛ւ, — բժշկական կարծիք յայտնեց մի կին-հանդիսական, որի բժիշկ լինելու մասին ես չեմ կարող երդուել։

— Նորից յիսուն դոլար տուգա՛նք, — Քէնդիի «ուրախ» հօր ծիծաղից խանդավառուած, հրամայեց դատաւորը եւ նորից ամբողջ թափով, ձեռքի թակով հարուածեց սեղանին։

Քէնդիի մայրը ափով փակեց իր ծիծաղկոտ ամուսնու բերանը եւ նրան դուրս տարաւ։

— Շնորհակալութիւն, — հառնանացած մի կնոջ պէս, դատաւորին ասաց Քէնդին եւ հեռացաւ։

Դատաւորը նրա վրայ ոչ մի ուշադրութիւն չդարձրեց, այլ մեր, հանդիսականներիս, գլխի վրայով նայելով, թակով հարուածեց սեղանին.

— Ցաջո՛ղը...

Դատական քարտուղարը ելաւ տեղից

եւ ձեռքին բռնած թղթին նայելով, յայտարարեց.

— Օրիորդ Սիլվա Կլարկ եւ պարոն Ջան Թէդ, մտեցէ՛ք դատական սենեակին։

Իրենց տեղերից ելան մօտ երեսուն տարեկան, տղամարդու մարմնական կառոյցով եւ իւնէչ հայեացքով մի կին եւ աղաղուն մի չիկահեր պատանի։ Երբ նրանք տրդէն կողք կողքի դատական ամպիոնի առջեւ էին կանգնած, քարտուղարը կարդաց.

— Օրիորդ Սիլվա Կլարկը բողոքում է, որ պարոն Ջան Թէդը իրեն խաբել է, ասելով, թէ ինքը դրամ ունի, եւ իրեն, օրիորդ Սիլվա Կլարկին իր բնակարանն է տարել ու մի լրիւ շաբաթ կենակցել է նրա հետ։ Սակայն, երբ շաբաթն անցել է եւ երբ օրիորդ Կլարկն ուզեցել է իր աչքերով տեսնել խնդրոյ առարկայ դրամը, պարոնը ծիծաղել է, ասելով, որ ինքը ոչ մի սէնթ չունի։ Օրիորդ Կլարկն այժմ վնասուց հատուցում է պահանջում պարոն Ջան Թէդից։

Ես կարծում էի, թէ օրիորդ Կլարկի եւ պարոն Թէդի գործի վրայ ներկաները պիտի ծիծաղէին, բայց ինձնից բացի ոչ ոք չծիծաղեց եւ ես ամօթով մնացի։ Երեւում էր, որ այդ դատը տոլորական երեւոյթ էր, եւ օրիորդ Կլարկի պահանջն իրաւացի։

— Ձեր խօսքը, — պարոն Թէդին հրամայեց դատաւորը։

— Ձերդ Ազնուութիւն, you know, այդ բողոքագրում երկու բան ճիշդ չէ, — ասաց «խաբեբայ եւ օրիորդ Կլարկի նման ազնիւ մի աղջկայ գլխից հանած» Ջան Թէդը։

— Ասէք թէ ինչ են դրանք, բայց կարճ, — հրամայեց դատաւորը։

— Ձերդ Ազնուութիւն you know, նախ ինքն, օրիորդ Կլարկն է ինձ մօտ եկել ապրելու, յետոյ էլ, you know, դրամը կատակ է եղել։

— Դրամական այդ կատակն ո՞վ է արել, — հարցրեց դատաւորը։

— Ես, Ձերդ Ազնուութիւն, — խոստովանեց կատակարան Ջան Թէդը եւ ծիծաղեց։

— Ինչո՞ւ էք ծիծաղում, — հարցրեց դատաւորը։

— Ձերդ Ազնուութիւն, — ասաց Թէդը, — you know, ես միշտ էլ կատակների վրայ ծիծաղում եմ։

— Դուք միշտ կատակնե՞ր էք անում, — հարցրեց դատաւորը։

— You know, այո՛, Ձերդ Ազնուութիւն, — պատասխանեց միամիտ Թէդը, չգիտնալով, որ այդ դատաւորն իրեն ծուզակն է դցում։

— Նոյնիսկ դրամի՞ վերաբերեալ կատակներ էք անում եւ ծիծաղում, — հարցրեց դատաւորը։

— You know, այո, Ձերդ Ազնուութիւն, — նորից թեթեւօրէն ծիծաղեց Ջան Թէդը։

Սրահում դանուածները հառաչեցին վրդովուած՝ «ինչպէ՞ս կարելի է դրամի վերաբերեալ կատակել եւ դրամի վրայ ծիծաղել, երբ այն, այդ կանաչաւուն թուղթը, ամենակարող եւ ամենահզօր աստուածն է։ Թո՛ւհ, պղծարար Ջան Թէդ»։

— Ես հիմա այնպիսի մի վճիռ պիտի արձակեմ, որ սրանից յետոյ ամենեւին չծիծաղէք, — ասաց ծիծաղի հակառակորդ այդ դատաւորը, եւ դիմեց օրիորդ Սիլվա Կլարկին, — նա, որ ձեզ ասաց, թէ դրամ ունի, դուք ի՞նչ կարծեցիք, բան ձեզի ինչքա՞ն դրամ պիտի ունենար նա։

— Տաս հազար դոլար, Ձերդ Ազնուութիւն, — պատասխանեց օրիորդ Կլարկը։

Տաս հազար դոլարի մասին լսելով, սրահում մի քանի կանայք հառաչեցին այն մտքով, թէ ինչո՞ւ իրենց հետ էլ նման կատակներ չեն անում։

Դատաւորը ձախ ձեռքով շօշափեց իր սուր եւ փոքրիկ քիթը։

— Շաւում եմ ասելու, որ այս տանանը հնարաւորութիւն չունի այդքան մի մեծ դումարի համար վճիռ արձակելու։ Դուք կա՛մ ձեր գործը պիտի վերցնէք մեր մօտից մի աւելի վերադաս տանանի

յանձնելու համար, կամ էլ պիտի փոքրացնէք ձեր ենթադրած գումարը։

Օրիորդ Կլարկը դլուխն իջեցրեց եւ մի քիչ մտածեց եւ յետոյ հարցրեց դատաւորին.

— Ձերդ Ազնուութիւն, առաւելագոյնը ինչքա՞ն մեծ մի գումարի դատ դուք կարող էք տեսնել...

— Առաւելագոյնը հազար դոլարի, — բացատրեց դատաւորը եւ թուաց թէ ամաչեց, որ ինքն ժամանոց հարդարատ է։

— Լաւ, հազար, — համաձայնեց օրիորդ Կլարկը։

— Good!, — ասաց դատաւորը եւ մեր, հանդիսականներիս, գլխի վրայով անորոշ ուղղութեամբ նայելով, քարտուղարին թելադրեց՝ «Պարոն Ջան Թէդին պարտադրել, որ այսուհետեւ ամէն շաբաթ երեսուն դոլար վճարի օրիորդ Սիլվա Կլարկին, մինչեւ որ լրացնի հազար դոլարի գումարը»։

Երբ, կատակաբան Ջան Թէդը հեռանում էր դատաւորի ամպիոնի մօտից, այլեւս ո՛չ միայն չէր ծիծաղում, այլեւ ինձ թուաց, թէ լաց էր լինում։

— Շատ թանկ է հազար դոլար վճարել մէկ շաբաթ այդ տղամարդանման կնոջ հետ կենակցելու համար, — ասաց կողքիս նստած պարոնը։

— Այո, — ասացի, — խե՞ղճ Ջան Թէդ... Տեսնես այդ կատակի ժամանակ խելքը գլխի՞ն է եղել, թէ ոչ։

Ցեռոյ այդ «իմաստուն» դատաւորը վճիռ արձակեց յօդուտ մի անդամ, ոչ մարդկային դէմք ունեցող ու չորուցամաք մի կնոջ։ Այդ կինն իր ամուսնուն դատի էր քաշել, որովհետեւ վերջինն ամէն շաբաթ իր աշխատավարձն ստանալուց, իր ընկերների հետ գինետուն էր մտնում մէկ, երկու գաւաթ գարեջուր խմում, հանգստանալու համար գործարանային իր ծանր աշխատանքից։ Դատի ժամանակ պարզուեց, որ այդ շաբաթաշօրէն աշխատող մարդը, շաբաթական այդ երկու գաւաթ գարեջրից բացի, ուրիշ հաճոյութիւն չունի, որ հեզ ու բարի մէկ մարդ է։

Սակայն «իմաստուն» դատաւորը, որ միշտ յօդուտ բռնակալների եւ հոգիով այլասերուածների էր վճիռ արձակում, վճռեց, որ այդ խեղճ աշխատաւորն այլեւս գարեջրատուն չմտնի եւ իր աշխատավարձը, մինչեւ վերջին սենթն իր վերհուկ կնոջը յանձնի։ «Այլ կերպ, — ըստ նոցա նա, — մէկ ամսով քեզ բանտ կ'ուղարկեմ»։

Ի տես դատական այդ այլանդակութիւնների եւ ընտանեկան գործերին խառնուելուն, ցաւումից ես տառապում էի անհունօրէն։ Ուզում էի ելնել տեղիցս, գնալ վերցնել նրա թակը եւ դրանով «թրա՛խկ» հարուածել նրա կոնծեւ ու ճաղատ գլխին։

***

Բայց լաւ էր, որ ես իմ մտքին մըտածէի, որովհետեւ դատաւորը ձեռքի թակով հարուածեց սեղանին եւ հրամայեց.

— Ցաջո՛ղը։

Քարտուղարը տեղից ելաւ, եւ կարդալով իմ անունն, ասաց, որ ես մեղադրւում եմ հրդեհների կանոնը խախտած լինելու եւ հրդեհների հսկողութեան վերահսկիչին վիրաւորած լինելու մէջ...

Մինչ ես մօտենում էի դատաւորի ամպիոնին, տեսայ, թէ ինչպէս հրդեհների հսկողութեան վերատեսուչը ատամներով բարձրացաւ դատաւորի մօտ, եւ ինչ-որ բան ասաց նրա ականջին։ Դատաւորն էլ գլխով հաստատական նշան արեց։

— Ծխե՞լ էք, — ինչքան կարող էր ձայնը խոտացրեց դատաւորը։

— Այո՛։

— Երեք օր բանտ եւ քսանըհինգ դոլար տուգանք, — թակով սեղանը հարուածեց նա։

— Բայց..., — ուզեցի բացատրութիւն տալ ես։

— Եօթ օր բանտարկութիւն եւ յիսուն դոլար տուգանք, — ասաց դատաւորը եւ նորից հարուածեց սեղանին։

Զարմանքից ես անշարժացել էի, երբ

մի ոստիկան ինձ հրեց կողքի պատի տակ կանգնած մի խումբ մարդկանց կողմը, որոնք շատ մոայլ էին եւ կարծես աղբի արկղից էին դուրս հանուած։

— Ո՞վ է, որ չի շղթայուել, — այդ մարդկանց հարցրեց ոստիկանը։

— Ես, — ծիծաղելով ձախ ձեռքը պարզեց մի հսկայ նեգր։

Ոստիկանը իմ աջ ձեռքը շղթայեց նեգրի ձախ ձեռքին։

Իմ չուարումը տեսնելով՝ նեգրը նորից ծիծաղեց։

— Boy!, եօթ օրը մի բան չէ մի դրլանիկ ծիսած լինելու համար, բայց այդ յիսուն դոլարը շատ է...

— Բայց ինչո՞ւ համար այդ ամէնը, — դայրոյթից կերկերուն ձայնով հարցրի ո՛չ թէ նեգրին, այլ կարծես ամբողջ աշխարհին։

— Ցիսուն դոլարը կառավարութեան համար, եօթ օրն էլ այդ տուգանքը վճարելու քաւութեան համար, — ասաց նեգրը։

— Առամավարձ, — տասցի հայերէն։

Նա չհասկացաւ ինձ։

— Ե՞րբ մեզ բանտ պիտի տանեն, — հարցրի նրան։

— Մենք այժմ չորս զոյգ ենք։ Երբ տասը զոյգ դառնանք կը տանեն։ Բանտային փակ ինքնաշարժը քսան հոգու համար է։ Նեղ է, բայց ձրի է, — վճար չկայ, — իր կառակի փրայ ծիծաղեց նա։

Նեգրերը ամէն բանի համար ծիծաղում են, լինի այդ կատակ, թէ ոչ։

***

Ինձնից յետոյ դատավարութիւնները շարունակուեցին եւ ինչպէս երեւում էր, այդ ֆարդարադատ դատաւորը աջ ու ձախ վճիռներ էր արձակում պաշտպանելու համար հասարակութիւնն ինձ նման չարագործներից։ Ասպի, ինչպէս երեւում էր, որովհետեւ ես էլ հնարաւորութիւն չունէի լսելու դատերը, քանի որ ներքին անզօր ցասումից, ես ջղերի խորտակում ունէի եւ այլեւս ոչինչ ո՛չ կարողանում էի լսել եւ ոչ էլ տեսնել։ Ոտքի վրայ ժամերով կանգնած, ես ահռելի տենդ էի ապրում։

Նեգրն այլեւս չէր ծիծաղում, այլ բաներ էր ասում, որը ես չէի հասկանում։ Թէեւ նա իմ կողքին էր կանգնած եւ ինձ հետ շղթայուած, բայց թուում էր, թէ ես նրան մշուշի միջից էի տեսնում։

***

Ոստիկանական բանտի այն խուցն, ուր ինձ նետեցին, աւելի ճիշդը խցկեցին, ինչպէս ասում են, ասեղ գցելու տեղ չկար։ Սուցը թէեւ մեծ էր, բայց եւ մեծ էր եւ կալանաւորների թիւը։ Այդտեղ ո՛չ նստարաններ կային եւ ոչ էլ մի այլ բան։ Գողեր, դրպանահատներ եւ ինձ նման անմեղ մարդիկ նստել էին յատակին, կանգնել էին, կոթնել էին պատերին եւ անվերջ թքում։ Անտանելի աղմուկ էր։ Կալանաւորները քարդ էին խաղում, իրար հայհոյում, կռւում եւ միմեանց հարուածում։

Ես մէջքս տուեցի խուցի ձողապատ դրանը եւ այդպէս էլ մնացի կանգնած, յոյս ունենալով, որ մարդկանց դուրս կը տանեն եւ ինձ համար տեղ կը բացուի։ Կէս գիշերի մօտերը կալանաւորները հանդարտեցին եւ քնեցին այնտեղ, ուր նստած էին։ Ես էլ մի կերպ նստեցի, ոտքերս խցկելով քնած կալանաւորների արանքներում, եւ մէջքս դէմ տալով դրան ձողերին՝ փորձեցի քնել։

Սակայն ջղային տենդս շարունակւում էր եւ ես միշտ կարծում էի, որ մղձաւանջային երազի մէջ եմ։

Նորից դատասրահում էի եւ կանգնել էի դատաւորի ամպիոնի առջեւ, երբ հերդեհների հսկողութեան վերատեսուչն իմ դէմ վկայութիւն տուեց։

— Այս տիպարն, — ասաց նա եւ գլխով ինձ ցոյց տուեց, — անիշխանական է եւ օրէնքներ չի ուզում ճանաչել։ Երբ ես նրան դիտել տուի, որ այդ գործարանում ծխելն արգելուած է, նա ասաց, թէ «օրէնք հաստատողներին եւ գործադրողներին ալէտք է խեն-

թանց ուզարկէր։ Այդ բանն ասելով, Ձերդ Մեծութիւն, նա նկատի ունէր նաեւ ձեզ»։

— «Գիտեմ, — ասաց դատաւորը, եւ դատնոյով ինձ վճռեց, — եօթն անգամ եօթ օր բանտարկութիւն եւ յիսուն անգամ յիսուն դոյար տուգանք... Դէ՛հ, հիմա գնա՛ եւ ինձ խենթ անուանիր...»։

— «Դուք խենթ չէք, Ձերդ Ազնուութիւն, — ասացի ես, — դուք սադիստ էք եւ մարդատեաց...»։

— «Ի՞նչ...» — հարցրեց նա։

— «Դուք ամբողջովին չարութիւն էք եւ հաստրակութիւնն համար վտանգաւոր մի էակ», — ասացի ես։

Նա ոտքի ելաւ եւ ձեռքի թակը բարձրացրեց՝ ինձ հարուածելու համար, բայց մէկը բանից ուսքցս եւ յետ քաշելով ասաց՝ «արի՛»։

Ես արթնացայ։

Մի ոստիկան ցնցում էր ուս եւ իրար յետեւից կրկնում.

— Արի՛, նիր եւ արի...

— Ո՞ւր, — հարցրի։

— Արի՛, կ'իմանաս, — ասաց նա։

— Արդէն լո՞յս է, — առանց պատասխանի հարցրի։

— Ոչ, տուաւօտեան ժամը չորսն է։

Ես ելայ տեղիցս եւ հետեւեցի նրան։

Մենք կոտրեցինք բանտի երկար, ապատոտ ու ապօտ լոյսով լուսաւորուած միջանցքը, եւ մտանք նրա ծայրում գտնուած մի խանաւ ու փոքրիկ խուց, ուր դոյլեր կային, լաթի կեղտոտ կտորներ եւ ջրի երկու ծորակներ։

— Հիմա տե՛ս, — ասաց ոստիկանը, — այդ դոյլերից մէկում ջուր լեցրու, վերցրու այդ լաթերից մէկին ու գնա՛ ու լուա՛ միջանցքի յատակը։ Բայց լաւ լուա՛, եթէ չհասանեցի, կը ստիպեմ, որ երկրորդ անգամ լուանաս։

— Ձեմ լուանայ, — ասացի։

— Լաւ է, որ լուանաս, — պաղ ու անտարբեր քացատրեց ոստիկանը, — քո վճռում գրուած է՝ «եօթ օր հարկադիր աշխատանք եւ յիսուն դոյար տուգանք։ Մերժելու դէպքում տասնչորս օր հարկադիր աշխատանք եւ հարիւր դոյար տուգանք։ Երկրորդ մերժման դէպքում՝ քսանչորսէկ օր հարկադիր աշխատանք եւ հարիւր յիսուն դոյար տուգանք»... Եւ այդպէս շարունակ...

— Բայց, դատաւորը վճիռն արձակելու ժամանակ հարկադիր աշխատանքի մասին բան չասաց, — ասացի։

— Այդ ծերուկն դիտի, թէ ինչ է անում։ Դու նրան ընդդիմացա՞ր, — հարցրեց ոստիկանը։

— Միայն «բայց» ասացի։

— Հենց այդ է։ Պէտք չկար այդ «բայցը»։ Հիմա ի՞նչ ես ասում։ Ուզում ես լուանա՞լ, թէ ոչ, — հարցրեց նա անտարբեր։

Ես վերցրի դոյլը եւ բացեցի ծորակը։

— Շտապելու կարիք չունես։ Մէկ է ութ ժամ պիտի աշխատես, — խորհուրդ տուեց ոստիկանը եւ դնաց։

Միջանցքում ես ծնկի եկայ եւ սկրտեցի լուանալ հարիւրաւոր կալանաւորների ու ոստիկանների թքից ու ազտոտ ոտնահետքերից սեւացած յատակը։

Եւ զարմանալին այն էր, որ ես ինչքան լուանում էի այդ յատակը, այնքան նրա կեղտի ու ազտեղութեան միջից տեսնում էի «էմ» դատաւորի եւ նման բոլոր «արդարադատների» պաղ ու անանական դէմքերը։ Եւ այդ շարունակուեց ա՛յնքան ժամանակ, մինչեւ որ միջանցքում անց ու դարձ սկսուեց ու մարդկային ոտքերը նրանց կեղտով ծածկեցին այդ կերպարները։

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

ԵՐԱԽԻՆ ՄԷՋ ԱՌԱՍՊԵԼԻ ՓՐՓՈՒՐԻՆ...

Նյարդերու կանաչ կզզին
Կ'ընկզմի
Երախին մէջ առասպելի փրփուրին...

Մաւի աչքեր կը մարին՝ հայեացքներով սպիտակ
ու վայրկեաններն երազին
Կզզիին հետ կը պղտորին ջուրին տակ։

Ձայները կեանք կ'ադերսեն
Կարմրաշուրթ ձուկերու ծաղկածիծաղ այիւռէն։

Լոյսեր, յոյսեր կը սուզուին ալիքներու մէջ վայրի
Ու կապոյտը սխրալի ծով գայշութեամբ կը տխրի։

Ուղեկորոյս նաւազներ աստղերու պէս կը շրջին,
Սպառումներ կը եալին գիշերուան սեւ հնոցին։

Մինչ ծովափին եան իմ շաւար ու շրթներով աւազէ
Ուղեկորոյս նամբորդներուն հառաչանքը կը ծծէ
Ու կը դիտէ փրփուրներուն պէս պայթող
բառերս փխրուն,
փրփուր-փրփուր մեռնող ցիչերս յուսահատ,
Որոնք դարձեալ կը ծաղկին՝
առասպելեան ծաղիկներու պէս յուրի՝
երախին մէջ առասպելի փրփուրին...

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՊՕՂՈՍ ԳՈՒԲԵԼԵԱՆ

ՖՈՒԼԱՅԻՆ ԱՂՋԻԿԸ

Գրասենեակ մը ու մեռաղապատ պատուհան մը։ Պատուհանի քառակուսիներուն եռին կոտրակուած սպիտակամորթ մը։ Դուրսը, արեւին տակ, ամայի բակին մէջ նետուած բացօթեայ լոգարան մը, որուն մէջ առանձին կանգնած է Նիհարիկ սեւ պարմանուհի մը։ Անոր մերկանդամ մարմնոյն հաւասարապէս կը կիզուի գլխուն վերեւ փայլող ափրիկեան բորբ արեւին ճառագայթներով ու պատուհանին եռին կանգնած սպիտակին այրող նայուածքներէն...

— Փաբրո՛ն, սա ցը վա բա, ը. օն տիրէ գ'ի ֆոն պոգու տը մալ ա սէր փրբիր լա։

— Գի՞ ի, — կը դոչեմ դիւռարանիս մէջ, գիս յանկարծակիի բերող կինիացի մանգոյին, զար երբեմն «Մարգիսներու չգոյութեան պատճառաւ։

Մանկամարդուհին ինքզինք յանձնած է վաղով պաղ ջուրին հեշտանքին։ Ցե..... սր հաղիւ ուսդանի յատակէն բարձր բռնած, եռանկիւն սիրուն գլխարդ, ծոծրակը, բոզրոջ ծիծերը, խուփ-չիկուհիի ֆիլ մը ուռած պորտը, եւ անկէ ալ վար՝ թոյլ կու տար, որ ջրմէջի պէս հոսէր հեղուկը իր թաւշային մարմնին վրայէն։ Նիհար սրունքներով կազմած եռանկիւնին մէջէն պահ մը լճացնելէ եւոր ջուրը, կը վերսկսէր մանկական իր խաղին...

Առանց որոշապէս իմաստ մը տալու տեսածիս, պատահմամբ նկատած էի աղջիկը լոգարանին մէջ, անոր մանկական անմեղ խաղերը որոշ գոյութիւն մը սկսած էին առթել ափրիկեան տաք ու խոնաւ կլիմայէն տակ խոշտանգուած, քրտինքներու մէջ խաշած զգայարանքներուս։

Ճիշդ է, արեւմտեան նրբացած իմաստով, կարելի էր վուայէօրի տարազ տալ վարմունքիս, սակայն մերկութեան գաղափարն ներս մենք այլպէս չէինք մտածեր։ Բնութեան ծոցին մէջ, մերկութիւնը իրաւ դեղեցկութիւն է, իրական վայելք, եթէ անշուշտ, վերջին պահուն, կինիացի խափշիկ մը չգայ խանգարելու պահին խորհրդաւորութիւնը, իր բազմիմաստ ակնարկութեամբ...

— Իլ լուի ֆոն պոգու տը մալ, փաբրոն...

Անել կացութիւնը փրկելու համար կը փորձեմ տարբեր ուղիներ որոնել, պատուհանէն վար սեւեռումներս տարբեր իմաստ մը կը ստանան։ Իբր սպիտակամորթ ու գործատէր՝ որոշ երեխոյթներ ունիմ փրկելիք։ Գոնէ ապուշ պէտք չէ երեւամ տղոց աչքին։ Թափչիկ մը, աչխարհներ տեսած ու նրբացած

սպիտակամորթէ մը կը սպասէ, որ այս վիրջինը ղոնէ արգարացնէ մորթին գոյնը...

Մանկամարդուհին նոյն շարժումներով նոյն թաց խաղը կը շարունակէր սակայն, երբ ջուրի հոսանքը իր ղղայուն մասին կը հասնէր, ու կը թուէր, թէ երկարաձգուող հեշտանքի պահեր կ'ապրի, վերսկսիլ առաջ նոյն արարողութիւնը։

Գինտին, բա Վուրիին բակին մէջ լուացուող պարմանուհին, Ֆուլա խանութպանին միակ աղջիկն էր։ Ֆուլան, ափրիկեցի մանրավաճառն է։ Նեղլիկ կրպակի մէջ նստած կողէկ դիրող այս ցեղը երեք թելերով կապուած է կեանքին — Գուրան, կին եւ Սէյոու Թուրէի քաղաքական անվերջանալի ճառերը...

Գինտիին հօրը՝ Ամատու պային ամրողջ շիֆր տ'ափէրը, արեան երակը մեր կուսական կապուած էր։ Ամբողջ ամիսը վիժած ժպիտով մը ապարիկ սպառումը հեշտացնելէ եւ լուռ քաղաքերելէ ետք, վմարումներու օրը, խոշոր տապար մը ձեռքը, ամսուան ընթացքին մեր դրծուորներէն յղի մնացած աղջիկներուն հետ ու անոնց պէս խոժոռ դէմքով կու գար ու կը կանգնէր գրան առջեւ... Ֆուլայի հետ կարելի չէր կատակել, պատահած է, որ մէկ շիլինի համար մարդ դրխատեն. ուէք խելքը գլուխը մարդ, յատկապէս տեղացի խոփչիկը, կը սարսափի անկլուխ ման դալու դաղափարէն... Նոյն օրէնքը ի զօրու էր Ֆուլայի մը կրնկան կամ աղջկան հետ ապօրէն կերպով կինակցիլ փորձուողներուն համար։ Կ'բաւէ, թէ Ֆուլաները արաբի խառնուրդ են։ Սոնց բաց դէմքը, նուրբ ու բարակ շրթունքը աւելի քան կանգուն կը պահեն այս վարիածը։ Ափրիկեան գեղեցկագոյն այս ցեղին բոլոր յատկանիշներով օժտուած էր Նաեւ Գինտին, թագին անվիճելի դեղեցկուհին, հասունցած անանասի ու մանկայի տարածուող բուրմունքով այս սիրուն էակը։ Բայց ա'վ կը յանդգնէր Ֆուլա Ամատուի պէս դաժան մարդու մը աղջկան ծուռ նայիլ...

Գինտիին ու հօրը սիրոյն, բնական է, որ ժամանակը կանգ պիտի չառնէր։ Ու անոր թաւալումին հետեւելու լաւագոյն կերպը պարմանուհին տարաշխարհիկ լոգանքներուն մէջ կը գտնէր։

Սրունքները մանկական տձեւ վիճակէն կերպարանափոխուեցան՝ առնելու համար կնոջական կազապարուած ու վայելչակազմ ձեւ մը։ Մարմնին միւս մասերը կը հնազանդէին բնութեան նոյն հրաշալի օրէնքին։ Հապա պինդ դունտերու վերածուող վեհիւսեան նուրբ ծիծերը։ Մէկ խօսքով՝ Գինտին արարչագործութեան օրհներգ ու փառաբանութիւն կը հիւսէր՝ առանց ամօթի ըմբոշխնել տալով իր հիանալի մերկութիւնը։ Ու ես դիպուածով, ատենը անգամ մը հանդիսատես կ'ըլլայի հեթոնոսական ծէսին։ Առանց սակայն մտքէս կարենալ վանելու Սանգոյին նախազգաստութիւնը; որ ըսուած ձեւին մէջ աւելի հաստատուն մի չեշտ ունէր, քան ենթադրութիւններու...

Մի՞թէ մրճահարող այս հարցումին պատասխան մը չդտնելու անզօրութիւնը աւելի եւս կը շարչրկէր դիս։ Իսկայացուած դաղտնի սէ՞ր մը։ Ցորդուած խոստո՞ւմ մը, թէ խորամանկ դաղտնի սիրահար մը... Գինտին մահմեդականի աղջիկ, հարենցու հասուն աղջիկ նկատուելու համար, պէտք չունէր «Գոնատուն» դաղտնի կազմակերպութենէն ներս թրփատման երթալու։

Ու իր տարիքին, ուրիշ ցեղերու պատկանող աղջիկները, թագին յաճերը ճանչցած կ'ըլլան մտերմագոյն ձեւով։ Ապատաժեայ կամքով, դժուարահաճ աղջիկան ուզերուն տակ կը փչրուէին քաղաքին մէջ անուն վաստկած Գագանովանէրուն յարձակողական ծրագրեալ գործողութիւններու։ Ֆուլան դժգոհ չէր նրեւեւէ՝ աղջկան վայելած անժողովրդական համարուող ժողովրդականութենէն։ Կը բաւէր, որ վենիւական պինդ ծիծերը բաց՝ Գինտին կանգնի կրպակին առեւ, եւ արդէն հօրը դործառնութիւնը կը կրկնապատկուէր այդ օր... տղաքը խենթորէն կը գնէին, չպարպուած սիկարէթի տուփերը նորերով փոխարինելով, կը

բաւէր, որ մօտէն զլուէին Գինտին ու դինովնային անոր թուչային, երաժշտական ձայնով, դեռ չլիշելով բարակ չրթներուն ընդմէջէն յայտնուող մարգարտեայ ժպիտը։

Բոլորէն ցանկացուած աղջիկը կը յամենար իր կուսութեան մէջ... ու կը յամառէր իր սիրտ պայթեցնող «չչեբուն վրայ։ Այնքան ատեն, որ Գինտին չէր դադրեցներ իր բացօթեայ ու ամէնօրեայ լոգանքները, պատուհանին եւրն կանգնածներս գանգատելու պատճառ չունէինք։ Ի վերջոյ ուշքերու տեսողականութեան համար նախընտրելի էր փլատիկ դեղեցկութեամբ իդական գիծեր առանց չապատուած յղութեամբ մը այլափոխուելու, ամէն գունտի վերածուելուն աւելորդ մտավախութիւնը ապրելու։ Գինտիին եւ իմ միջեւ ստեղծուած փոխյարաբերութիւնը հասարակ վուայէօրիզմի եւ էկզէսիսիոնիզմի սահմանները անցած էին։

Լոգարանին մէջ ծեքծեքումներով իր տիրիկեան լաթերէն մերկացած պահերուն գաղտագողի աչքերս կը փնտռէին խափշիկուհիի իր սեւ սիրուն աչքերը, իրը նայուածքներուս տաքութեամբ այրելու, հալելու ուժգին պահանջք մը դարձեր էր ինծի համար՝ ներշնչման հըզօր ազբիւր... Սակայն, ո՞վ կը լափլփէր անոր ծլոզ ծիծերը, ո՞վ էր այդ բախտաւորը... Սանդոն փչող տեսակէն չէր։ Քոզարկուած իր ակնարկութիւնը հիմք մը ունենալու էր։

— Փաթլոն, ռա նը վա բա, հը, — կրկնեց ուրիշ առիթով մը, — էլ սուփր բրօ սէթ փըթիթ լա, բրմարգէ, ուշադրութիւն դրէք, ինչպէս իր գլխուն մատը պաղ ջուրի հոսանքին կը յանձնէ։

Ի վերջոյ, անցեալ տարուան գառնուկը չէր, պարզ ու մեկին էր փորձառու տղու ակնարկութիւնը, բայց ո՞վ կամ որո՞նք էին Գինտիին գաղտնի սիրահարները, իր կուսութեան հետ այնքան անխղճօրէն վարուողները, գայն ցաւցնողները...

Առեղծուածը չլուծուած՝ հազիւ տասնչհինգը թեւակոխած Գինտին հարս տարին։ Ֆուլան իր գուստրը կնութեան տուած էր Կինէ բնակող իր մէկ ազգեցիկ ցեղակիցին մանչուն։

«Հէվիլի էնտինկ»ի մը գաղափարը բոլորին սրտերը հանդարտեցուց։ Քիչ ետք, շատ արագ փոխոխութիւններ տեղի ունեցան։ Գինտիին հայրը իր երեք կիները մէկիկ-մէկիկ ճամբեց... Ֆուլային համար կին առնել-ձգելը ազգային կամ աւելի ճիշդը, ցեղային սփոր մրն էր։ Մօտաւորապէս այսպէս կը թաւալի ամբողջ հսիրգլոը։ Կը տեսնէ, կը ցանկայ։ Դրամ գիդելու յորձանքին մէջ կը նետուի։ Կով կը գնէ, ցանկացածին հետ կը փոխանակէ կովը կամ կովերը, նայած աղջկան սիրունութեան... Գիրիմանճարոն յաղթահարելէ ետք՝ վայրէջքին ճանճրոյթի նշաններ կը սկսի ցոյց տալ։ Ցանցրայթ փաթաթելու կոչուած օրական ծեծուրտուք։ Բնական է, երիտասարդ կինը յանցանքի վրայ կը բռնուի, հօրը տունը կ'ուղարկուի։ Կովերը կը վերադարձուին խաթուած ամուսնին, ու այսպէս շարունակաբար։

Աղջկան օրինակին հետեւելով, Ամատուն ալ հեռացաւ՝ ունեցած-չունեցածը հնչուն դրամի վերածելէ ետք։ Թաղը կրկնակի ամայացաւ։ Արդէն աղջկան մեկնումով կրպակը իր հրապոյրը կորսընցուցած էր ու իր մերկութեամբ աւերակի պէս ցցուած։ Օտարական մը եկաւ ու սիւնի նման կանգնեցաւ կրպակին մէջ, կարծես բուի պէս աւերակներուն վրայ հսկելու... Գինտիին ջերմութիւնը չկար այլեւս։ Ամբողջ թաղին դիմագիծը փոխուեցաւ։

Հազիւ տարի մը անց՝ Ամատուն վերադարձաւ, քայքայուած վիճակ մը ներկայացնող կրպակին վերատիրանալու համար։ Հակառակ չորդին տիրող պարապութեան, մառնաւոր շուքով մը բազմեցաւ մաշած սեղանին ետեւ։ Լուրը շուտով տարածուեցաւ. «Ալ Հաճի» մակդիրը վերջապէս ժաս կը կազմէր տունին։ Մէջքի ուխտի դացած ըլլալով՝ իր չրջանակէն ներս յարգուած անձնաւորութիւն էր դարձեր։

— Ալ Հաճի Ամատո՛ւ, — գոչեցի օր

մը, առանց սրանեղութիւնս ծանկիլ փոր-ձելու, — դուն վանառական մարդ ես, ինչպէ՞ս ամբողջ անտեսութիւնդ կրցար քանդել, քայքայել ուխտաւորութեան մը սիրոյն, Մէջքէն ալ ամուր տեղը կը-պած է, Մէտիկէն ալ...

— Կատ իտէ, մասդը, — ըսաւ կան-դուն մնացած առտմներով խորամանկո-րէն բաղմիմաստ ժպիտ մը տարածելով դէմքին։

— Աստուած մեծ է։

Իսկապէս Ամատուին Աստուածը արդարացուց իր մեծութիւնը։ Ցանուցը լեցուեցաւ — Ալ Հաճիին գործերը ուռ-ճացան։ Քանի մը քիլօ վրայ դրաւ, ե-ղիսասպիտացաւ։ Քալուածքը, շարժում-ները աղնուացան։ Իմաստունի հոլեր առնել սկսաւ... Աստուծոյ շնորհքը հոն կանգ չառաւ, մարդը սրբացեր էր։ Նոր կին մը բերաւ։ Զսիրեց, ճամբեց։ Երկ-րորդ մը եւս, դարձեալ քիմքին հաճելի չգտաւ պատառը։ Վաթսունը անցած ըլ-լալը եւ կիներուն քանէն վար ըլլալու պարագան ոչինչ կրցաւ փոխել կացութե-նէն։ Մարդը, մտածեցինք, կը թուի, թէ այլեւս կը նախընտրէ ժուժկալութեան ու սրբութեան մէջ ապրիլ, Մարդարէի խօսքը տարածելով։ Կին խաղցնելու օ՛չ սիրտ ունի, ոչ ժամանակ։

Շատ չանցած պայթեցաւ լուրը։ Գինտին հօրը տուներ վերալարձեր էր... ողոց ցամաք հացին «մարկարին» քսուե-ցաւ... Ախպիսի լուր մը թաղին բերնին ջուրերը հոսեցնել տուաւ։ Ի զուր։ Նոյն դաժան, նախանձոտնդիր հօր նոյն ան-դիջող աղջիկը։ Գինտին աղուորցեր էր։ Աչքերուն մէջ կարդացուող մասնաւոր կարօտով՝ երկարաձգուած ծարաւին յա-գուրդ տալու բնազդով, վերսկսաւ ասօր-եայ լոգանքներուն...

Կառատունէն քանի մը տղաք սրտա-պնդուեցան ու կամացուկ մը Գինտիին ձեռքը խնդրելու փորձ ըրին։ Ի վերջոյ, ապահարդանի մէջ եղող կնոջ չնորհնե-բուն տիրանալը նուազ դժուար կը թուէր ըլլալ։

Արդիլուած պտուղը արդիլուած պը-տուղ մնաց։

— Մ՞վ ըսաւ, որ Գինտին անտէր է, — գոչեց Ամատուն, — ամուսինը հեռա-ւոր երկիրներ ճամբորդած է. փեսայիս բացակայութեան, ե՛ս տէր պիտի կանգ-նիմ աղջիկս. գացէ՛ք, լակոտներ, բախ-տերնիդ ուրիշ տեղ փնտռեցէք, տակաւին Ալ Հաճին մեռած չէ...

Տղաքը չատ չհամոզուեցան։ Իրենք աւելի տեղեակ էին խափշիկի մը ներաշ-խարհին։ Հօրենական տան մէջ Գինտիին բնակութեան շրջանը քիչ մը չատ երկա-րեցաւ...

Անպայման աղջիկութեան շրջանէն մնացած երիտասարդ սիրահար մը ունի, դինք ցուցնող տղան, որ գիշերները ըստ-ւերի պէս ներս կը սահի, դուցէ հօրը հա-ւանութեամբ։ Չէ՛, Ամատուն ճանչցողը չէր հաւատար այս վարկածին ալ։ Ցնորք էր։

Գինտիին անամաւսին, առանձին ան-կողին երթալը բոլոր թաղին երեսին նետուած ամօթ մը մնաց։ Կարծէք փրո-վոզասիոնի համար՝ մարմնին գրգռիչ մասերու ծեքծեքումներով կառատան առջեւէն վեր-վար կը շրջէր, ողոց կո-կորդէն սա հառաչանքը քաշելով.

— Մոն Տիէօ, գէլ կասֆիյած...

Դիպուածով մը, ոպիտակի մը, հա-մեստս վիճակուեցաւ լուծել առեղծ-ուածը։ Սեւ ըլլալով՝ Սանդոն միայն ի-մացաւ ու առանց յանկարծակիի գալու՝

— Փաքրոն, — ըսաւ, — վաղուց կը կասկածէի...

Գինտիինց կրպակին մօտերը, լրջ-ւած կառքերու կմախքներ կը պահէինք։ Կտորի մը փնտռտուքով վար իջած էի, տուփ մը սիկարէթի համար կրպակին մօտեցայ։ Ցեռմիջօրէին ամայութիւն կը տիրէր, մարդ չկար ներսը։ Ետեւի դուռ-նէն կիսամութին մէջ գլուխս երկարեցի։

Ալ Հաճին աղջիկան մտերմութիւնը կը վայելէր...

Գ. ԳՈՒՐԵԼԵԱՆ

ԶԳՈՂՈՒԹԵԱՆ ԴԱՇՏԵՐ

Զգողութեան ալիքներ,
որոնք յանկարծ, վայրկեանի մը մէջ
որեւէ տեղ
(դժուար, դժուար մռայլման նման)
կը պարուրեն քեզ
անցնելով
կաւէն, շարժող
մեռած գեղեցկութիւններէն,
մուշտակներէն, օրաթերթերէն,
սենեակներէն
անդին...

Գերզգայուն հեռուն,
ուր սիրտը կ'անի
պահանջելով շատ, կարօտով շատ,
անձկութեամբ շատ
եւ յորդումով ջրվիժային:

Դաշտերէն դուրս
զգողութեան
մնք միշտ ծարաւ,
Անբարակամ,
հանգստութեան
եւ ուղեղի տիղմին մէջ
քիչ-քիչ
կ'ընկղմինք:

Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ



ՍՈԼԺԵՆԻՑԻՆԻ ՊՈՌԹԿՈՒՄԸ

Վերջին տասնամեակին, համաշխարհային գրականութեան մէջ իր տաղանդով ամէնէն աւելի հռչակուած եւ իր ճակատագրով անիծեալ գրողներուն սահմանուած բաժիններուն գանազանումը ցմրուր ըմպած դէմքը եղաւ ռուս գրագէտ Ալէքսանդր Սոլժենիցին, որ գրաւիչին կերպարն վարձատրութիւնը համարուող Նոպէլեան մրցանակը փչապուսկի մը պէս կը կրէ ահաւասիկ երկու տարիներէ ի վեր։

Սոլժենիցին 1970ին արժանացաւ Նոպէլեան մրցանակին, որ, ինչպէս ծանօթ է, կը յանձնուի յատուկ արարողութեամբ մը։ Այդ արարողութիւնը տեղի պիտի ունենար Նոյն տարուան Մեպտեմբերին, Մոսկովի մէջ, բայց Սոլժենիցին չուզեց անձամբ Շուէդ մեկնիլ ան մտավախութեամբ, որ իր հայրենիքին իշխանութիւնները արգելք պիտի ըլլայեն իրեն հայրենիք վերադառնալու։ Նոպէլեան մրցանակի պատասխանատուները որոշեցին այս տարուան Ապրիլին Մոսկուա դրկել ներկայացուցիչ մը, որ տեղւոյն վրայ կատարէ մրցանակին տուչութիւնը, բայց ռուս իշխանութիւնները մերժեցին վիզա տալ նաեւ Նոպէլեան մրցանակի դատակոչի ներկայացուցիչին, որպէս զի զարձեալ տեղի չունենայ մրցանակին յանձնումը։

Այս պայմաններուն տակ, Սոլժենիցին առանդական արարողութենէն եաք արտասանելիք իր ճառը դրկեց Նոպէլեան հիմնարկութեան, որ անցեալ ամսոյն, լոյս ընծայեց դայն ՀԵՍՍԷԼԻԱՍ փոստի տարեգիրքին մէջ։

Ստորեւ, լեւոն Մկրտչեանի թարգմանութեամբ կու տանք Սոլժենիցինի Նոպէլեան մրցանակին ամբողջութիւնը, որ մարդ էակը արժեզրկող գրութիւններու, կամայականութիւններու, քրտութիւններու դէմ արձակուած ուժգին ազատի մըն է եւ, միաժամանակ, ունի հեռանկարներու, յոյսի ու հաւատամքի կատարանային հրաչալի բաժիններ, անհատին, ժողովուրդներուն, արուեստին, գեղեցկութեան մասին խորունկ մտածումներ թրմած տիեզերական մասեր։

Առանձնացնենք անոնմէ մէկը, որ կը ներգաշնակուի մեր պայքարին զգայարբաական էութեան հետ։

Ազգերի անհետացումը մեզ կ'ազդուացնէր ոչ պակաս չափով, քան երբ բոլոր մարդիկ ձմռնուէին՝ մէկ թնաւորութեամբ, մէկ դէմքով։ Ազգերը մարդկութեան հարստութիւնն են, նրա ընդհանրացուած անձնաւորութիւնները։ Երանցից ամենափոքրն էլ կրում է իր յատուկ գոյները, իր մէջ պահում ստուգածային յղացման մի յատուկ երգ։

ՍՈԼԺԵՆԻՑԻՆ

Ալ. ՍՈԼԺԵՆԻՑԻՆԻ

Ինչպէս այն փայլունին, որը տարտիտանքով ձեռքն է վերցնում ովկիանոսի արտանետու�՞ջը, ուտոդների պատնՀ՞ւսը, թէ՞ երկնքից ընկած անհասկանալի առարկան, — որը կարդիերով խրթին՝ մերթ չողում է անորոշ կերպով, մերթ էլ ճառագայթի պայծառ հարուածով, — եւ այն ձեռքի մէջ զարթում է ոչպէս ու ոչնպէս, պարզում, որոնում, թէ ինչպէ՞ս յարմարեցնի գործին, որոնում է իրեն մատչելի ցածր ծառայութիւն, ոչ մի կերպ չդառնալով բարձրագոյնի մասին։

Այդպէս էլ մենք, ձեռքում բռնելով Արուեստը, ինքնամատահ կերպով մեկ տէր ենք համարում նրան, համարձակօրէն ուղղութիւն տալիս նրան, նարդում, բարեփոխում, հոչակում, ծախում դրամով, սիրաշահում ուժեղներին, դարձնում մերթ զուարճութեան համար, — մինչեւ էսգրատային երգեր ու գիշերային ըմպելիայոր, — մերթ էլ խլանով կամ դաղանակով, ինչ-

ՏՈՍՏՈՅԵՎՍԿԻ

ՆՈԲԷԼԵԱՆ ՃԱՌԸ

պէս որ բռնես, — քաղաքական անկողնի կարիքների համար, սոցիալական սահմանափակումների համար։ Իսկ Արուեստն ինքը չի պղծուում մեր փորձերից, չի կորցնում զրանով իր ծագումը, ամէն անգամ եւ ամէն կիրառութեան մէջ մեզ տալով իր թաքուն, ներքին լոյսի մէկ մասը։ Բայց արդեօք մենք կ'ընդգրկե՞նք այդ ամբողջ լոյսը։ Ո՞վ կը համարձակուի ասել, թէ արդէն սահմանել է Արուեստը։ Կամ՝ հաշուել նրա բոլոր կողմերը, իսկ թերեւս էլ արդէն հասկացել ու անուն դրել անցեալ դարերում, իսկ մենք կարճ ժամանակ ենք կանգ առել նրա վրայ։ Մենք ուսումնասիրել ենք, ու արհամարհել եւ մի կողմ լքել հենց անմիջապէս, ինչպէս միշտ, շտապելով փոխել թէկուզ եւ ամէնից լաւը, միայն թէ՝ նորով։ Եւ երբ մեզ հնից են խօսում, մենք արդէն չենք էլ լսում, որ դա մեզ մօտ եղել է։

Մի արուեստագէտ իրեն կարծում է անկախ հոգեւոր աշխարհի արա-

բիչ եւ իր ուսերին է նեռում այդ աշխարհը արարելու արարքը, նրա բնակ-
ությունը, համապարփակ պատասխանատուությունը նրա համար, բայց ոտ-
քերը ծալում են, քանզի այդպիսի մի բեռ ի վիճակի չէ կրելու մահկանա-
գու հանճարը, ինչպէս եւ առհասարակ մարդը, որը իրեն հոչակում է կեցու-
թեան կենտրոն, չի կարողացել ստեղծել հաւասարակշռուած հոգեւոր հա-
մակարգ։ Եւ եթէ անյաջողութիւն է վիճակւում նրան՝ այդ անյաջողութիւ-
ն վերագրում են աշխարհի մշտնջենական անհերդաշնակութեանը, հասա-
րակութեան անհասկացողութեանը։

Մէկ ուրիշը իրենից վեր ճանաչում է բարձրագոյն ուժ եւ ուրախու-
թեամբ աշխատում իր փոքրիկ ենթավարպետ Աստծու երկնքի տակ, թէեւ
աւելի հեւ խիստ է նրա պատասխանատուությունը ամբողջ գրուածի, պատ-
կերածի եւ ընկալող հոգիների համար։ Դրա դիմաց՝ նրա կողմից չի ստեղծ-
ւել աշխարհը, նրա կողմից չի կառավարւում, նրա հիմքում կառուածներ չը-
կան, արուեստագէտին տրուած է սոսկ ուրիշներից աւելի սուր կերպով զգալ
աշխարհի ներդաշնակութիւնը, նրա մէջ մտցուած մարդկային աւանդի գե-
ղեցկութիւնն ու այլանդակութիւնները, իսկ ապա սուր կերպով դա փոխան-
ցել մարդկանց։ Եւ անյաջողութիւնների մէջ ու նոյնիսկ դոյութեան յատա-
կում, աղքատութեան մէջ, բանտում, հիւանդութիւնների մէջ, — կայուն
ներդաշնակութեան զգացումը չի կարող նրան լքել։

Սակայն արուեստի ամբողջ անբնականութիւնը, նրա կուրացուցիչ ո-
յրապատոյտները, նրա աննախատեսելի գիւտերը, նրա ցնցիչ ներդործութիւ-
նը մարդկանց վրայ՝ յաւազանց կալարդական են, որպէսզի հնարաւոր լինի
դրանք ոպատել արուեստագէտի աշխարհահայեացքով, նրա յղացումով կամ
նրա անարժան մատների աշխատանքով։ Հնագէտները չեն յայտնաբերում
մարդկային դոյութեան այնպիսի վաղ փուլեր, երբ եղած չլինի մեզ մօտ ար-
ուեստը։ Մարդկութեան դեռեւս նախայդային աղջամուղջների մէջ մենք այն
ստացել ենք ինչ-որ ձեռքերից, որոնց չենք հասցրել լաւ զննել ու ճանաչել։
Եւ չենք հասցրել հարցնելու, թէ ինչի՞ համար է մեզ տրուող այդ պարգե-
ւը, ինչպէ՞ս վարուել նրա հետ։ Ե՛ւ սխալուել են, ե՛ւ սխալւում են բոլոր
կանխագուշակները, թէ արուեստը պիտի քայքայուի, կորցնի իր ձեւերն ու
մեռնի։ Կը մեռնենք մե՛նք, իսկ նա կը մնա՛յ։ Եւ նաեւ արդեօք մենք մինչեւ
մեր կարուստը կը հասկանա՞նք նրա բոլոր կողմերն ու բոլոր նշանակումները։
Ամէն բան չէ, որ ոնուն ունի։ Շատ բան գտնւում է բառերից այն կողմ։
Արուեստը ցնցմացնում է նոյնիսկ սառեցուած, խաւարած հոգին՝ հոգեւոր
բարձր փորձի հանդէպ։ Արուեստի միջոցով երբեմն ուղարկւում են մեզ, —
ասօս, կարճատեւ, — այնպիսի՛ յայտնարերումներ, որոնք անկարող է մշա-
կել բանական մտածողութիւնը։ Ինչպէս հեքիաթների այն փոքրիկ հայելին։—
Նրան նայում ես եւ տեսնում ո՛չ թէ քեզ, այլ մի ակնթարթ՝ այն Անմատչե-
լին, ուր չես կարող հասնել ո՛չ սուրալով, ոչ էլ թռչելով։

Դոստոեւսկին մի անգամ հանելուկային կերպով անցողակի խօսք է ա-
սել, թէ՝ «Աշխարհը գեղեցկութի՛ւնը կը փրկի»։ Ի՞նչ է դա։ Ինձ երկար ժա-
մանակ թւում էր հասարակ ֆրազ։ Ինչպէ՞ս կարելի է։ Արիւնածարաւ պատա-
մութեան մէջ ե՞րբ, ո՞ւմ եւ ինչի՞ց է փրկել գեղեցկութիւնը։ Այնուացրել,
վանմացրել՝ այո՛, բայց ե՞րբ է փրկել։ Սակայն կայ գեղեցկութեան էու-
թեան մի այսպիսի առանձնայատկութիւն, արուեստի կացութեան առանձ-
նայատկութիւն — իսկապէս գեղարուեստական երկի համոզչականութիւնը
միանգամայն անհերքելի է եւ իրեն է ենթարկում նոյնիսկ հակառակող սիրտ-
ը։ Գաղաքական ճառը, նպատակասլաց հրապարակախօսութիւնը,՝ սոցիա-

յական կեանքի ծրագիրը, փիլիսոփայական համակարգը՝ կարելի է արտա-
քուստ կառուցել հարթ, կառուցիկ, թէ՛ սխալի եւ թէ սուի վրայ. ու անմի-
ջապէս չի երեւում, թէ ի՛նչն է թաքցրած ու ի՛նչն է խեղաթիւրուած։ Իսկ
ինքն վէճի դուրս գայ հակառակ ուղղութեան ճառը, հրապարակախօսութիւ-
նը, ծրագիրը, այլ կառուցուածքի փիլիսոփայութիւնը, — ամէն ինչ դարձեալ
նոյնքան կառուցիկ ու հարթ է եւ դարձեալ կարելի է։ Դրա համար էլ՝ նը-
րանց նկատմամբ վստահութիւն կա՛յ եւ չկա՛յ։ Պարզապէս պնդում է ա՛յն,
ինչ որ սրտին չի կպչում։

Մինչդեռ գեղարուեստական երկը իր ստուգումը կրում է հենց իր մէջ.
հնարովի, բռնապրօսիկ դրոյթները չեն դիմանում պտտկերների քննութեանը,
փուլ են գալիս թէ՛ մէկը, թէ միւսը, ատացում ազատուն, գունատ, ու ոչ ո-
քի չեն համոզում։ Իսկ այն երկերը, որոնք պարունակում են ճշմարտութիւն-
ներ եւ դրանք մեզ ներկայացնում խտացուած ու կենդանի ձեւով, գրաւում
են մեզ, տիրապետ իրենց ենթարկում, եւ ոչ ոք ու երբեք, նոյնի՛սկ դարեր
յետոյ, չի ներկայանայ դրանք հերքելու։

Այդպէս էլ թերեւս՝ ճշմարտութեան, բարոյ եւ գեղեցկութեան հին
դասականութիւնը հենց այնպէս հանդիսաւոր խարխուլ ձեւակերպութիւն
չէ՞, ինչպէս որ մեզ թուացել է՝ մեր յանձնապաստան, նիւթապաշտ պատա-
նեկութեան օրերին։ Եթէ այդ երեք ծառերի կատարները իրար մօտենում են,
ինչպէս պնդում են հեռազօտողները, բայց ճշմարտութեան ու բարոյ չա-
փողանց բացայայտ, չափազանց ուղիղ լիւերը տրորուած են, սղոցուած, ելք
չունեն, — ապա թերեւս գեղեցկութեան հրաշալի, աննախատեսելի, անսպա-
սելի լիւերը իրենց համար ճանապարհ բացեն ու վեր բարձրանան Միեւնոյն
տեղը եւ այդպիսով աշխատանք կատարեն բոլոր երեքի համար։ Եւ այն ժա-
մանակ, պարզւում է, որ ո՛չ թէ կիսաբերան, այլ մարդարէութեա՛մբ է գրբ-
ուած Դոստոյեւսկու մօտ, թէ «Աշխարհը գեղեցկութի՛ւնը կը փրկի»։ Չէ՞ որ
նա կարող էր շատ բան տեսնել, նրա միտքը զարմանալի լուսաւոր էր։ Ուրեմն,
Արուեստը, գրականութիւնը՝ գործնականում կարո՛ղ են օգնել այսօրուայ
աշխարհին։ Այն քիչ բանը, ինչ որ ինձ յաջողուել է տարիների ընթացքում
հասկանալ այս խնդրի մէջ, կը փորձեմ շարադրել այսօր։

Այս ամպիոնը, որից ընթերցւում է Նոբէլեան դասախօսութիւնը, մի
ամպիոն, որ բնաւ ամէն գրողի չի տրւում եւ կամ տրւում է միայն մէկ ան-
գամ կեանքում, ես բարձրացել եմ ո՛չ թէ երեք-չորս զետեղուած ասուիճան-
ներով՝ այլ հարիւրաւոր ու նոյնիսկ հազարաւորներով, ոչ ասնդիաձեւ, գա-
ւթաւոր, ատացապատ, — խուարի ու ցրտի միջից, որտեղ ինձ վիճակուեց
փրկուել, իսկ ուրիշները, թերեւս աւելի տաղանդաւոր, աւելի ուժեղ ինձա-
նից, — կորա՛ն։ Նրանցից սոսկ ոմանց եմ հանդիպել ես ինքս՝ Ճամբարների
Գլխաւոր Վարչութեան Արշիպելագում, սփռուած կղզիների կոտորակային
քաղաքութեան մէջ. եւ ասենք՝ հետաքրքրման ու անվստահութեան աղացաքա-
ր սակ ամէն մարդու հետ չէ՛ որ խօսել եմ, ոմանց մասին միայն լսել եմ,
քրոջերների մասին միայն կասկածել։ Նրա՛նք, ովքեր այն անդունդն են նետ-
ել արդէն գրական անունով՝ գոնէ յայտնի՛ են։ Բայց որքա՞ն շատ էին ան-
անունները, հրապարակայնօրէն ոչ մի անգամ չյիշուածները, որոնց գրեթէ,
գրեթէ՝ ոչ աքի՝ չյաջողուեց տուն վերադառնալ։ Մի ամբողջ ազգային գրա-
կանութիւն է մնացել այնտեղ, թաղուելով ո՛չ միայն առանց դագաղի, այլեւ
նոյնիսկ առանց ներքնաշորի, մերկ, ոտքի մատներին կպած հաշուետախտա-
կով։ Եւ ո՛չ մի ակնթարթ չի ընդհատուել ռուս գրականութիւնը, մինչդեռ
կողքից անապա՛տ է թուացել։ Որտեղ կարող էր ամէն համերաշխ անտառ,

բոլոր անտառահատումներից յետոյ մնացել են երկու-երեք պատահաբար չրջանցուած ծառեր։ Եւ այսօր ես, երբ ինձ ուղեկցում են ընկածների սառուցները, եւ խոնարհած գլխով թոյլ եմ տալիս, որ առաջ անցնեն աւելի վաղ ապրած ուրիշները, արժանինե՛րը, — ինչպէ՞ս կռահեմ ու արտայայտեմ, թէ ի՛նչ կ'ուզենային ասել նրանք։ Այդ պարտականութիւնը վաղուց է ծանրացել մեր վրայ եւ մենք դա հասկացե՛լ ենք։ Վլադիմիր Սոլովիւի խօսքերով ասած՝ «Բայց ճաւ շղթաների մէջ մեզի իմիներս պիտի գնանք տ՛ցն շրջանով, որը աստուածնի՛րն են գծել մեզ համար»։ Ճամբարային տառապալից թթուածութեան մէջ, կալանաւորների շարքերում, երեկոյեան սառնամանիքների խաւարի մէջ, երբ լապտերների շղթաներն էին լոյս տալիս, մի անգամ չէ՛ որ մեր կոկորդում է մնացել այն, ինչ որ կ'ուզենայինք աղաղակել աշխարհով մէկ, եթէ աշխարհը մեզնից մէկնումէկին լսե՛լ կարողանար։ Այն ժամանակ դա շատ պարզ էր թւում, թէ՝ ի՛նչ էլ որ ասի մեր յաջորդակ սուրհանդակը, անմիջապէս կ'արձագանգի՛ աշխարհը։ Մեր մտահորիզոնը յստակօրէն լի էր թէ՛ մարմնական առարկաներով եւ թէ հոգեկան շարժումներով եւ չերկառուած աշխարհում չէր երեւում նրանց դերակշռութիւնը։ Այդ մտքերը եկել էին ո՛չ թէ գրքերից եւ ոչ էլ փո՛խս առնուել վայելչութեան համար։ բանտային խցերում եւ անտառային խարոյկների մօտ գրանք կազմուել են այժմ մեռած մարդկանց հետ խօսակցութիւնների ժամանակ, ստուգուել այն կեանքով, որտեղից ասել են։ Իսկ երբ թուլացաւ արտաքին ճնշումը, ընդլայնուեց իմ եւ մեր մտահորիզոնը, ու ասա՛ճանաբար, թէեւ ճեղքերից, երբեմն ու հոնչուեց այդ «ամբողջ աշխարհը»։ Եւ, զարմանալիօրէն, մեզ համար «ամբողջ աշխարհը» դուրս եկաւ ո՛չ բոլորովին այնպէս, ինչպէս որ մենք կը յուսայինք, — «ո՛չ այն» ապրողը, «ո՛չ այնտեղ» գնացողը, այլ՝ որը ճահճուտներին նայելիս բացագանչում է՝ «Ի՞նչ հրաշալի մարգագետին են», բեռոնէ կալանատեղերին նայելիս՝ «Ինչպիսի՞ հրթակերտ մանեակ», այլ՝ որտեղ ոմանց մօտ շարքուած արցունքնե՛ր են թափւում, իսկ մի ուրիշ տեղ պա՛ր են գալիս անհոգ միւզիկ-հոլի նուագի տակ։ Իսկ ինչպէ՞ս պատահեց այդ բանը։ Ինչպէ՞ս գոյացաւ այդ անդունդը։ Արդեօք մե՞նք էինք անդրան։ Արդեօք աշխա՞ռհն էր անզգայ։ Թէ՞ դա լեղուների տարբերութիւնից էր։ Ինչի՞ց է, որ մարդիկ ընդունակ չեն միմեանցից լսելու ամէն տեսակ հասկանալի խօսք։ Խօսքերը արձագանգում ու հոսում են ջրի նման, առանց համի, առանց գոյնի, առանց հոտի։ Առանց հետքի։ Այն չափով, որքան որ ես դա հասկացա՛յ, տարիների ընթացքում անընդհատ փոխուեց եւ իմ հնարաւոր ճառի կա՛ղմը, իմա՛ստը եւ եղանա՛կը։ Իմ այսօրուայ հառի՛։ Եւ սա արդէն քի՛չ է նման նրան, ինչ որ սկզբում յղացուել է ճամբարային սառնամանիքային երեկոներին։

Մարդը ի սկզբանէ այնպէս է կառուցուած, որ նրա աշխարհհայեցքը, երբ այն հիպնոզի չի ենթարկուած, նրա փաստարկումներն ու գնահատումների տարտակը, նրա գործողութիւններն ու մտադրութիւնները որոշւում են նրա անձնական ու խմբական կենսափորձով։ Ինչպէս ռուսական առածն է ասում. «Մի՛ հաւատայ հարազատ եղբօրդ, այլ հաւատա՛ քո ծուռուիկ աչքին»։ Եւ դա՝ շրջապատը հասկանալու ու նրանում կողմնորոշուելու համար ամենաառողջ հիմքն է։ Եւ երկար դարեր, քանի դեռ մեր աշխարհը խուլ ու հանելուկային ձեւով փակուած էր, քանի դեռ այն չէր թափանցուել կապի միջանական գծերով, չէր դարձել միասնական, տենդօրէն բաբախող դուռա, — մարդիկ անսխալ կերպով առաջնորդւում էին իրենց կենսափորձով, իրենց տեսանելի վայրում, իրենց համայնքում, իրենց հասարակութեան մէջ,

վերջապէս եւ իրենց ազգային հողում։ Այն ժամանակ առանձին մարդկային աչքերի համար հնարաւորութիւն կար տեսնել ու ընդունել գնահատականների մի ինչ-որ տախտակ, թէ ի՛նչն է չարագործութեան եղբի վրայ, ի՛նչը ազնուութիւն եւ ի՛նչը խարդեւութիւն է։ Ու եթէ շատ տարբեր ձեւով էին ապրում ցրուած ժողովուրդները եւ նրանց հանրային գնահատումների չափանիշները կարող էին զարմանալիօրէն չհամընկնել, ինչպէս որ չէին համընկնում նրանց չափի սիստեմները, — այդ տարբերութիւնները զարմացնում էին միայն հազուագիւտ ճանապարհորդներին, կամ էլ իրը արտասովոր բան ընկնում էին հանդէսներ, ոչ մի վնաս չտալով ո՛չ մարդկութեանը, ոչ էլ անհատներին։

Բայց ահա վերջին ատենամեկներին մարդկութիւնը աննկատելիօրէն, յանկարծ դարձել է միասնական, — յուսալիօրէն միասնական ու վտանգաւո՛ր միասնական, այնպէս որ՝ նրա մէկ մասի դողն ու բորբոքումը գրեթէ ակընթարթային արագութեամբ փոխանցւում են ուրիշներին, որոնք երբեմն ոչ մի իմունիտետ չունեն դրանց հանդէպ։ Մարդկութիւնը դարձել է միասնական, բայց ո՛չ այնպէս, ինչպէս որ առաջներում հաստատապէս միասնական էին համայնքը կամ նոյնիսկ ազգը, — ո՛չ թէ ատիճանական կենսափարձի միջոցով, ո՛չ թէ սեփական ազգով, որը բարեմասնօրէն ծուռտիկ էր կոչւում, նոյնիսկ ո՛չ թէ հարաւաս ժայրերի լեզուի միջոցով, այլ՝ բոլոր պատուաբերից վեր, միջազգային ձայնատիւրի ու մամուլի միջոցով։ Մեզ վրայ է թափւում իրադարձութիւնների յորձանքը, աշխարհի կէսը մէկ բոպէի մէջ իմանում է նրանց հողմիւնների մասին, բայց այդ իրադարձութիւնները չափելու եւ գնահատելու չափանիշներ, ըստ աշխարհի մեզ անյայտ մասերի օրէնքների, չե՛ն հասցնում եւ չեն էլ կարո՛ղ հասցնել եթերով ու լրագրական էջերով։ Այդ չափանիշները չափազանց երկար ժամանակ ու յատկապէս կազմրեալ ու խրացուել են առանձին երկրների ու հասարակութիւնների յատուկ կեանքում, եւ դրանք փոխադրելի չե՛ն յանպատրաստից կերպով։ Տարբեր երկրներում իրադարձութիւնների նկատմամբ գնում են սեփական, գնահատումների՝ տառապանքով ձեռք բերուած ատիճանատախտակը, եւ անդիջում կերպով, ինքնավստահ կերպով դատում են միայն ըստ իրե՛նց ատիճանատախտակի, այլ ո՛չ թէ ուրիշի։

Եւ աշխարհում այդպիսի տարբեր ատիճանատախտակներ եթէ շատ չեն, ապա, յամենայնդէպս մի քանիսն են՝ ատիճանատախտակ՝ մօտիկ իրադարձութիւնների եւ հեռաւոր իրադարձութիւնների համար, հին հասարակութիւնների ատիճանատախտակ եւ երիտասարդ հասարակութիւնների ատիճանատախտակ, ատիճանակարգ բարեկեցիկների եւ անբարեկեցիկների։ Ատիճանակարգերի բաժանումները ազմկալից կերպով չեն համընկնում, դոյիզոյն են, աչք եւ ծակում, եւ որպէսզի ցաւ չըդանք՝ մենք մի կողմ ենք քաշւում բոլոր օտար ատիճանակարգերից, ինչպէս խելագարութիւնից, մոլորութիւնից, եւ ամբողջ աշխարհը վտահօրէն դատում ենք մեր տնային ատիճանակարգով։ Դրա պատճառով էլ մեզ աւելի խոշոր, ցաւալի ու անտանելի է թւում ո՛չ թէ այն, ինչ որ իսկապէս խոշոր, ցաւալի ու անտանելի է, այլ ա՛յն, ինչ որ աւելի մօտ է մեզ։ Այնուամենայնիւ, մեզ ուղղակի չպատանացող հեռաւորը այսօր հասնում է մինչեւ մեր տան չեմքը, ընդունւում մեր կողմից՝ նրա բոլոր տնքոցներով, հոգու ազազակներով, կործանուած կեանքերով, թէկուզ եւ միլիոնաւոր զոհերով, ընդհանրապէս՝ լիովին հանդուրժելի եւ տանելի չափերի։

Մօտաւոր անցեալին, մի տեղ հալածանքների ներքոյ, որոնք չեն գի-

ջում հին-հոռոմէականներին, յանուն Աստծու հաւատքի իրենց կեա՛նքն էին զոհում հարիւր հազարաւոր լուռ քրիստոնեաներ։ Իսկ միւս կիսաղնտում, ոմն տխմար (ու երեւի նա մենակ չէ), թռչում է ոլկիանոսի վրայով, որպէսզի քահանայապետին պողպատի հարուած հասցնելով ազատի՛ մեզ կրօնից... Նա իր աստիճանատախտակով այդպէ՛ս է կարծել՝ յանուն մե՛զ, յանուն բոլորի՛ս։

Ա՛յն՝ ինչ որ մէկ աստիճանաչափով հեռուից թւում է նախանձելի եւ բախտաւոր ազատութիւն, միւս աստիճանատախտակով, մօտիկից, համարւում է սրտնեղիչ հարկադրա՛նք, որը կոչ է անում չրջել հանրակառքերը։

Ա՛յն՝ ինչ որ մի երկրում երազւում է իբր անճմարտանման բարօրութիւն, միւս երկրում գայրացնում է՝ իբր վայրենի չահագործում, որը պահանջում է անմիջական գործադուլ։

Տարբեր աստիճանակարգեր կան տարբերային աղէտների՝ համար. 200 հազար զոհեր խլած հեղեղը աւելի փոքր է թւում մեր քաղաքային միջոցներից։

Տարբեր աստիճանակարգեր կան անձի անարգմա՛ն համար. մի տեղ նուաստացնում է նոյնիսկ հեղնական ժպիտն ու անզգոյշ չարժումը, մի այլ տեղ՝ նոյնիսկ դաժա՛ն գանակոծումները ներելի են որպէս անյայտող կատակ։

Տարբեր աստիճանակարգեր կան պատիմների՝ համար, չարագործութիւնների՝ համար։

Մի աստիճանաչափով՝ սմսական կալանքը կամ գիւղ աքսորուելը, իսկ էլ բանտախուցերը, որտեղ կերակրում են սպիտակ բուլկիներով ու կաթով, — ցնցո՛ւմ են երեւակայութիւնը, լրագրական էջերը լցնում զայրոյթո՛վ։

Իսկ մի՛ւս աստիճանատախտակով՝ սովորական ու ներելի են ե՛ւ մինչեւ 25 տարուայ բանտարկութիւնները, ե՛ւ բանտախուցերը, — սրտեղ պատերին սառոյց կայ, բայց մարդկանց մերկացնում են այնտեղ, — ե՛ւ լիմարանոցները առողջների համար, ե՛ւ անթիւ անգգոյշ բոլորն էլ չգիտես ինչո՛ւ եւ ո՛ւր փախչող մարդկանց սահմանային զնդակահարութիւնները։

Յատկապէս սրտերը հանգիստ են այն տարաչափարհիկ երկրի համար, որի մասին բնա՛ւ ոչինչ յայտնի չէ, որտեղից ո՛չ մի իրադարձութիւն մեզ չի հասնում, այլ միայն՝ սակաւաթիւ թղթակիցների ուշացած տափակ զուշակութիւնները։

Եւ այդ երկուութեան համար, հեռաւոր օտար վէսի քարացած անհասկացողութեա՛ն համար՝ չի՛ կարելի կշտամբել մարդկային տեսողութեանը. արդէն այդպէ՛ս է չինուած մարդը։ Բայց ամբողջ մարդկութեան համար, որը միասնական գնդի է վերածուել, այդպիսի փոխադարձ անհասկացողութիւնը սպառնում է մօտիկ ու բուռն կործանում։ Երբ կան վեց, չորս, նոյնիսկ երկու աստիճանատախտակ, չի՛ կարող լինել միասնական աշխարհ, միասնական մարդկութիւն. մեզ կը պայթեցնի՛ կշռոյթի այդ տարբերութիւնը, տատանումների տարբերութիւնը։ Մենք չե՛նք ապրի մէկ երկրում, ինչպէս չի ապրում մարդը երկու սրտով։

Բայց ո՞վ եւ ինչպէ՞ս պիտի ներդաշնակէ այդ աստիճանատախտակները։

Ո՞վ կը ստեղծի մարդկութեան համար հաշւումների միասնական կարգ՝ չարագործութիւնների ու քարեգործութիւնների, անհանդուրժելի եւ հանդուրժելի համար, ինչպէս որ սահմանագատւում են դրանք այսօր։

Ո՞վ կը բացատրի մարդկութեանը, թէ ի՛նչն է իսկապէս ծանր ու անտանելի, իսկ ի՛նչը միայն մոկերեսային սիրուք մըն է, եւ զայրոյթը կ'ուղղի նրա՛ դէմ, որը սարսափելի՛ է, այլ ո՛չ թէ նրա դէմ, ինչ որ աւելի մօտ է:

Ո՞վ կը կարողանայ նման ըմբռնումը փոխադրել սեփական մարդկային փորձի սահմանից:

Ո՞վ կը կարողանայ մարդկային քարացած, յամառ էակին համակել հեռաւոր ուրիշի վշտով ու ուրախութեամբ, մաղտաքների ու մոլորութիւնների ըմբռնումով, որոնք նա երբեք չի ապրել:

Այստեղ անզօր են քարոզչութիւնը, հարիւրդրանքն ու գիտական ապացոյցները:

Բայց, բարեբախտաբար, ուշխարհում նման միջոց կա՛յ:

Դա Արուե՛ստն է:

Դա գրականութի՛ւնն է:

Նրանց մատչելի՛ է այդ հրաշքը. յաղթահարել մարդու՝ սոսկ սեփական փորձով սովորելու վնասակար յատկութիւնը, այնպէ՛ս, որ նրա մէջ անցնի ուրիշների փորձը:

Մարդուց մարդ, լցնելով նրա երկրային կարճ ժամանակը, Արուեստը ամբողջովին փոխադրում է ուրիշի երկար կենսափորձի բոլոր դժուարութիւններով, զոյներով, հիւթերով, մարմնաւորում է ուրիշների ապրած փորձը եւ տալիս իւրացնելու՝ սեփականի պէս:

Ու նոյնիսկ աւելին, յա՛տ աւելին. եւ երկրներն ու ամբողջ մայրցամաքներ միմեանց սխալները կրկնում են ուշացումով, երբեմն դարերով, երբ թւում է, թէ ամէն ինչ պարզ երեւում է: Բայց ո՛չ, — ա՛յն, ինչ որ որոշ ժողովուրդներ որդէն ապրել, մտածել ու մերժել են, յանկարծ ուրիշների կողմից համարւում է իրը ամենանորագո՛յն խօսք: Եւ այստեղ էլ՝ մեր չապրած փորձի միակ փոխարինողը Արուեստն է, գրականութիւնը: Նրանց տրուած է հրաշալի յատկութիւն, — լեզուների, բարքերի, հասարակարգի տարբերութիւնների միջով փոխանցել կենսափորձը ազգից ազգ, — երբ այս երկրորդը երբեք չի ապրել բազմամեայ դժուարին ազգային փորձը, — երջանիկ դէպքում մի ամբողջ ազգ պահպանելով աւելորդ կամ սխալ, կամ նոյնիսկ կործանարար ուղուց, դրանով իսկ կրճատելով մարդկային պատմութեան ողբապատմութիւնները:

Արուեստի այդ մեծ ու օրհնեալ յատկութեան մասին ես յամառօրէն յիշեցնում եմ այսօր Նոբէլեան ամպիոնից:

Եւ գրականութիւնը եւս մի անգնահատելի ուղղութեամբ է փոխադրում անհիրքելի խտացուած փորձը՝ սերնդից սերունդ, քանի որ այն դառնում է ազգի կենդանի յիշողութիւնը: Այդպէս նա իր մէջ ներմացնում եւ պահում է նրա կորցրած պատմութիւնը, խեղաթիւրման ու կեղծման չենթարկւող ձեւով: Դրանո՛վ իսկ, գրականութիւնը, լեզուի հետ միասի՛ն, պահպանում է ազգային ոգին:

Վերջին ժամանակներս սովորական է խօսել ազգերի համահարթման, սրդի քաղաքակրթութեան կաթսայում ժողովուրդների անհետացման մասին:

Ես համաձայն չե՛մ դրան, բայց դրա քննարկումը առանձին հարց է: Իսկ այստեղ տեղին է միայն ասել, որ ազգերի անհետացումը մեզ կ'աղքատացնէր ոչ պակաս չափով, քան եթէ բոլոր մարդիկ նմանուէին՝ մէ՛կ բնաւորութեամբ, մէ՛կ դէմքով: Ազգերը մարդկութեան հարստութիւնն են, նրա ընդհանրացուած անձնաւորութիւնները. նրանցից ամենափո՛քրն էլ կրում է

իր յատուկ զոյներր, իր մէջ պահում ասասուածային յայտման մի յատուկ եղր։

Բայց վա՛յ այն ազգին, որի գրականութիւնը ընդհատւում է ուժի մի-ջամտութեամբ։ Դա ո՛չ թէ պարզապէս զամուլի ազատութեանց խախտում է, դա ազգային որոի կղզիացո՛ւմ է, ազգային յիշողութեան կտրատո՛ւմ։ Ազգը չի յիշում ինքն իրեն, ազգը զրկւում է հոգեւոր միասնութիւնից եւ ընդհանուր, կարծես թէ, յեզուով՝ հայրենակիցները յանկարծ դադարո՛ւմ են միմեանց հասկանալ։ Իրենց կեանքն ապրում եւ մեռնում են համր սե-բունդները, չպատմելով ո՛չ իրենց մասին, ոչ էլ յաջորդներին։

Եթէ Ախմատովայի կամ Զամեատինի նման վարպետները ամբողջ կեանքում թաղուել են ողբ-ողբ, դատապարտուել են մինչեւ գերեզման սուզ-ուել լռութեամբ, արձագանգ չլսելով իրենց դրածի հանդէպ, դա ո՛չ միայն նրանց անձնական դժբախտութիւնն է, այլեւ ամբողջ ազգի վիշտը, այլեւ վատնի՝ ամբողջ ազգի՛ համար։ Իսկ որոշ դէպքերում էլ՝ նաեւ ամբողջ մարդ-կութեա՛ն համար, երբ նման լռութիւնից դադարում է հասկացուել եւ ամ-բողջ պատմութիւնը։

Տարբեր ժամանակ եւ տարբեր երկրներում՝ տաքացած, բարկացած եւ նուրբ ձեւով վիճել են, թէ պէ՞տք է արդեօք Արուեստն ու արուեստագէտ-ը ապրեն իրենց համար, թէ՞ մշտապէս յիշեն իրենց պարտքը հասարակու-թեան առջեւ ու ծառայեն նրան, թէեւ ո՛չ կանխակալ ձեւով։

Ինձ համար այստեղ վէճ չկա՛յ, բայց ես նորից չեմ բերի փաստարկումների չարանը։ Այս նիւթի շուրջ ամենավայլուն ելոյթներից մէկը Ալբեր Կամիւի Նոբէլեան պատասխանութիւնն էր եւ նրա եզրակացութիւններին ես ուրախութեամբ եմ միանում։ Եւ ուստ գրականութիւնը տասնամեակներով ուն-եցել է այդ թեքումը, — չափից աւելի իր վրայ շնայել, չափից աւելի շթռչոտել անհոգ, — եւ ես չեմ ամաչում այդ աւանդոյթը շարունակելուց՝ ուժերիս չափ։ Ռուս գրականութեան մէջ մեզ վաղուց են հարազատել այն պատկերացումները, թէ գրողը շատ բան կարող է եւ պէտք է անի իր ժողո-վրդի մէջ։

Զմնչե՛նք արուեստագէտի՝ միայն սեփական ապրումներն ու ինքնա-դիտարկումները արտայայտելու իրաւունքը, արհամարհելով այն ամէնը, ինչ արւում է մեզանից աշխարհում։

Զպահանջե՛նք արուեստագէտից, բայց նախատելը, ինդրելը, կանչելն ու հրապուրելը՝ թող թողնենք մեզ։ Զէ՞ որ նա մասա՛մբ է միայն իր տաղանդը ինքը գտրգացնում, դա մեծ չափով ծնուած օրից իր մէջ է՝ պատ-րաստի, ու տաղանդի հետ միասին դրուած է եւ նրա ազատ կամքի պատաս-խանատուութիւնը։

Ենթադրենք, թէ արուեստագէտը ոչ ոքի ոչինչ պարտական չէ, բայց ցաւալի է տեսնել, որ նա կարող է, հեռանալով զէպի ենթակայական քմայք-ների ինքնասահման չափեր ու տարածութիւններ, իրական աշխարհը յանձնել շահախնդիր, երբեմն էլ չնչին, երբեմն էլ խելագար մարդկանց ձեռքը։

Մեր 20դդ դարը աւելի դաժան դարս եկաւ նախորդներից, ու նրա ա-ռաջին կէսով չվերջացաւ նկանում գտնուող ամբողջ սարսափելին։ Միեւնոյն հին քարանձաւային զգացումները՝ ագահութիւն, նախանձ, սանձարձակու-թիւն, փոխադարձ անբարեացակամութիւն, — ընթացքի մէջ ընդունելով հա-մապատասխան կեղծանուններ, — ինչպիսիք են՝ դասակարգային, ցեղային, զանգուածային, արհմիութենական պայքարը, — պատառոտում են մեր աշ-

խարՀը։ Փոխզիջումների քաղաքական մերժումը դարձուել է տեսական սկզբունք եւ համարւում է ուղղափառութեան առաքինութիւն։ Դա պահանջում է միլիոնաւոր զոհեր՝ չվերջացող քաղաքացիական պատերազմներում, դա թելադրում է մեր հոգուն, թէ չկան բարոյ ու Արդարութեան համամարդկային կայուն հասկացողութիւններ, թէ՝ դրանք բոլորն էլ հոսում են, փոխւում, ուստի եւ միշտ պէտք է վարուել այնպէս, ինչպէս որ ձեռնտու է քո կուսակցութեանը։ Որեւէ մասնագիտական խումբ, հենց որ պտտում է պատասխանատու յարմար պահ, թէկուզ եւ չվստահած, թէկուզ եւ աւելցուկ, — տեղնուտեղը պոկո՛ւմ է այն, իսկ ամբողջ հասարակութիւնը թէկուզ եւ կործանուի՛։

Արեւմտեան հասարակութեան մտքուժների ամպլիտուդան, ինչպէս երեւում է հեռուից, մօտենում է այն սահմանին, որից յետոյ համակարգը գառնում է անկայուն ու պիտի փլուի։ Գնալով աւելի քի՛չ քաջուելով բազմազարեան օրինականութեան չրջանակներից, լիտիւբար ու յաղթականօրէն աչխարհով մէկ քայլում է բռնութիւնը, առանց մտահոգուելու, որ իր անպտուղ լինելը չա՛տ անպամ է ցոյց տրուել ու ապացուցուել պատմութեան մէջ։ Յաղթանակում է նոյնիսկ ո՛չ թէ պարզապէս կոպիտ ուժը, այլեւ նրա յեփորային արդարացումը. աչխարհը ողողում է այն լիակ վստահութիւնը, թէ ուժը կարող է անել ամէն ինչ, իսկ իրաւունքը՝ ոչինչ։ Դոստոյեւսկու չար ոգիները, թւում է, անցեալ դարի գաւառական մղձաւանջային երեւակայութիւն, — մեր աչքի առջեւ ողում են աչխարհով մէկ այնպիսի՛ երկրներ, որտեղ չէին էլ կարող պատկերացնել նրանց, եւ ահա վերջին տարիներին ինքնաթիռներ փախցնելով, պատանդներ առեւանգելով, պայթեցումներով ու հրդեհներով՝ յայտնում են քաղաքակրթութիւնը ցնցելու եւ ոչնչացնելու իրենց վճռականութեան մասին։ Եւ դա լիովին կարող է յաջողուել նրանց։ Երիտասարդութիւնը այն հասակում, երբ սեռականից զատ ուրիշ փորձ չունի, թիկունքում չունի սեփական տատապանքների ու սեփական ըմբռնման տարիներ, — խանդավառութեամբ կրկնում է 19րդ դարի մեր ռուսական արատաւորուած յայտնի բաները, բայց նրան թւում է, թէ ինչ-որ նոր բա՛ն է յայտնաբերում։ Ֆուն-վէյբինական նորայայտ այլասերումը՝ նրա կողմից ուրախալի նմոյշի տեղ է դրւում։ Մշտնջենական՝ մարդկային էութեան մեծամիտ անհասկացողութիւն, չապրած արտերի միամիտ վստահութիւն է, թէ՝ ահա՛, այդ գիշատիչ, ագահ ճնշողներին, կառավարիչներին ցշենք, իսկ յաջորդները, — մենք..., — մի կողմ դնելով նոնակները՝ արդար ու կարեկից կը լինեն։ Ինչպէ՞ս կարող է այդպէս չլինել... Իսկ ո՛վ ապրել է, չի հասկանում, թէ ո՛վ կարող է այդ երիտասարդութեանը առարկել. չատերը չի՛ն համարձակւում առարկել, նոյնիսկ շողոքորթում են, մէյն թէ՝ «պահպանողական» չերեւան։ Դարձեալ՝ 19րդ դարի ռուսական երեւոյթ է։ Դոստոյեւսկին զա անուանել է ստրկութի՛ւն՝ առաջաւոր գաղափարների մօտ։

Միւնիխի ոգին բնաւ անցեալ չի դարձել, դա կաբՀ մէջադէպ չէր։ Համարձակւում եմ նոյնիսկ ասել, որ Միւնիխի ոգին տիրում է 20րդ դարում։ Վախեցած քաղաքակիրթ աչխարհը, յանկարծ վերադարձան երախաթաց բարբարոսութեան գրոհի դիմաց, նրան հակադրելու այլ բան չգտաւ, քան զիջումներն ու ժպիտները են։ Միւնիխի ոգին բարեկեցիկ մարդկանց կամքի հիւանդութիւն է, նրանց ամէնօրեայ վիճակ, ովքեր յանձնուել են ամէն գնով բարօրութեան ծարաւին, նիւթական բարեկեցութեանը՝ որպէս երկրային կեցութեան գլխաւոր նպատակի։ Նման մարդիկ, իսկ նրանք շատ են այսօրուայ

աշխարհում, ընարում են կրաւորականութիւնն ու նահանջները, միայն թէ՝ ուելի՛ տեւի սովորական կեանքը, միայն թէ՝ այսո՛ր չքայլել դէպի խոտութիւն, այլ վա՛ղը, թերեւս անցնի... (Բայց երբեք չի՛ անցնի. վախկոտութեան համար հատուցումը աւելի խի՛ստ կը լինի։ Արիութիւնն ու յաղթութիւնը մօտենում են մեզ ա՛յն դէպքում միայն, երբ մենք պատրաստ ենք զոհարերութեան)։

Մեզ կարծանում է սպառնում եւ այն, որ մարմնով սեղմուած աշխարհին թոյլ չեն տալիս միանալու հոգեպէս, գիտելիքների ու համակրանքների հիւլէներին թոյլ չեն տալիս մէկ կէսից միւս կէսն անցնել։ Այդ կատաղի դատնդը՝ տեղեկատուութեան կասեցո՛ւմն է մոլորակի մասերի միջեւ։ Արդի դիտութիւնը գիտի, որ տեղեկատուութեան կասեցումը ընդհանուր աւերման ուղին է։ Տեղեկատուութեան կասեցումը խարուսիկ է դարձնում միջազգային ատորագրութիւններն ու պայմանագրերը. որովհետեւ փակ աշխարհի ներսում պայմանագիրը մեկնաբանելը ոչի՛նչ չարժի, իսկ աւելի հեշտ է՝ ծածկել, որ կարծես թէ երբեք չի եղել։ (Օրուէլը շատ լաւ է հասկացել դա)։ Փակ աշխարհի ներսում ապրում են կարծես ո՛չ թէ Երկրի բնակիչներ, այլ Մարս մոլորակի արշաւախումբ։ Նրանք ոչի՛նչ չգիտեն մնացեալ աշխարհի մասին եւ պատրաստ են այն ոնանկո՛ւս անել, այն սուրբ վստահութեամբ, թէ «ապատո՛ւմ եմ»։

Քառորդ դար առաջ ծնուեց Միացեալ Ազգերի Կազմակերպութիւնը, որը դարձաւ մարդկութեան մեծ յոյսը։ Աւա՜ղ, անբարոյ աշխարհում անբարոյական՝ ոճեց եւ նա։ Դա Միացեալ Ազգերի Կազմակերպութիւն չէ, այլ Միացեալ Կառավարութիւնների Կազմակերպութիւն, որտեղ հաւասարեցուած են թէ՛ ազատօրէն ընտրուածները եւ թէ բռնութեամբ պարտադրուած ու վէնքով իշխանութիւնը խլածները։ ՄԱԿի մեծամասնութիւնը շահախնդիր եռանդով հոգում է որոշ ժողովուրդների ազատութեան մասին եւ անխնամ է թողնում միւսների՝ ազատութիւնը։ Նա հաճոյակամ քուէարկութեամբ մերժել է մասնաւոր զանգատների՝ միայնակ, փոքր, պարզապէ՛ս մարդկանց հառաչանքների, ազաղակների եւ աղերսանքների քննութիւնը, — որոնք չափազանց փոքր ըլլլներ են այդպիսի մեծ կազմակերպութեան համար։ Իր լաւագոյն փաստաթուղթը, 26 տարուայ մէջ, Մարդու Իրաւունքների Յայտարարագիրը, չի՛ կարողացել դարձնել պարտադի՛ր կառավարութիւնների համար, նրանց անպատմութեան պայմա՛ն, եւ այդպիսով փոքր մարդկանց յանձնել է նրանց կողմից չընտրուած կառավարութիւնների քմայքին։

Թուում է, թէ այդի աշխարհի դիմագիծը ամբողջովին գիտնականների ձեռքին է, մարդկութեան բոլոր տեխնիկական քայլերը նրանց կողմի՛ց են վճռւում։ Թուում է, թէ յատկապէս գիտնականների՛, այլ ոչ թէ քաղաքագէտների համաշխարհային գործակցութիւնից պէտք է կախուած լինի աշխարհի ապագան։ Առաւել եւս, որ միաւորների օրինակը ցոյց է տալիս, թէ որքան բան կարող են տեղից չարժել նրանք միասին։ Բայց այդպէս չէ։ Գիտնականները ցայտուն փոքր չարեցին մարդկութեան կարեւոր, ինքնուրոյն գործօն ուժ դառնալու։ Ամբողջ համաժողովներով նրանք երբեմն են թեքում ուրիշների պառապանքներից. աւելի յարմարաւէտ է դիտութեան սահմաններում մնալը։ Միւնիխի միւնոյն սպին նրանց վրայ փոել է իր թուլացած թեւերը։

Բայց որո՞նք են, այս դաժան, ուժական, պայթուցիկ աշխարհում, նրա առանձնակի կործանումների գծի վրայ, գրոսի տե՛ղն ու դե՛րը։ Զէ՞ որ

ինչք հրթիռներ չենք արձակում, նոյնիսկ վերջին օժանդակ սայլակ չենք գլորում, մեղ առհասարակ արհամարհում են նրանք, ոյքեր յարգում են սոսկ նիւթական զօրութիւնը։ Արդեօք բնական չէ՞, որ մե՛նք էլ նահանջենք, կորցրենք հաւատը բարոյ անոսանութեան, ճշմարտութեան անարհեստութեան նկատմամբ, եւ աշխարհին պատմենք մեր կողմնակի դառն դիտողութիւնները, թէ ո՛րքան անյուսալիօրէն փչացել է մարդկութիւնը, մանրացել են մարդիկ, եւ թէ՝ ո՛րքան դժուար է նրանց մէջ ապրելը՝ միայնակ, նրբակիրթ ու զեղեցիկ հոգիների համար։ Բայց չենք կարող խոյս տալ։ Մէկ անգամ Բանին կառչելով՝ յետոյ այլեւս երբեք չես շեղուի. գրողը իր հայրենակիցների ու ժամանակակիցների կողմնակի դատաւորը չէ, նա մեղսակից է այն ամբողջ չարիքին, որը կատարւում է իր հայրենիքում կամ իր ժողովրդի կողմից։ Եւ եթէ նրա հայրենիքի հրապայլերը արիւնո՛վ են ողողել ուրիշ մայրաքաղաքի ասֆալտը, ապա մուգ բծերը յաւիտենապէս ցիրտել են գրողի էջերը։ Եւ եթէ մի ճակատագրական գիշեր խեղդե՛լ են քնած դիւրահաւատ բարեկամին, ապա գրողի ափերի կապտութիւնը այն թոկի՛ց է։ Եւ նրա երիտասարդ համաքաղաքացիները համարձակօրէն հոչակում են ապականութեան գերազանցութիւնը համեստ աշխատանքի նկատմամբ, յանձնւում թմրեցուցիչներին կամ առեւանգում պատանիներին, ապա այդ գարշահոտութիւնը խառնւում է գրողի շնչառութեա՛նը։ Արդեօք համարձակութիւն կը գտնե՞նք յայտարարելու, թէ մենք պատասխանատու չենք այսօրուայ աշխարհի խոցերի համար։

Սակայն ինձ սրտաշնչում է համաշխարհային գրականութեան կենդանի զգացումը, որպէս միասնական մի մեծ սրտի, որը բաբախում է մեր աշխարհի հոգսերի ու դժբախտութիւնների համար, թէեւ գրչնք իւրատեսակ են նեկայացնում ու տեսնում նրա ամէն մի անկիւնում։ Վաղեմի ազգային գրականութիւնների կողքին, անցեալ դարերում ե՛ւս գոյութիւն է ունեցել համաշխարհային գրականութեան հասկացութիւնը, որպէս ազգայինների կատարները միաւորող օղակ եւ որպէս գրական փոխազդեցութիւնների ամբողջութիւն։ Բայց օտարում եղաւ ժամանակի մէջ. ընթերցողներն ու գրողները այլալեզու գրողներին ճանաչեցին ուշացումո՛վ, երբեմն դարերի ուշացումով, այնպէս որ՝ փոխադարձ ազդեցութիւնները եւս ուշացան ու ազգային գրական կատարների միաւորումը երեւաց արդէն յաջորդների՛, այլ ոչ թէ ժամանակակիցների աչքին։ Իսկ այսօր, մէկ երկրի գրողների եւ միւս երկրի գրողների ու ընթերցողների միջեւ փոխազդեցութիւն կա՛յ, եթէ ոչ վայրկենական, ապա դրան մօտիկ ձեւով։ Ես ինքս ինձ վրայ զգում եմ դա։ Հայրենիքում, աւա՜ղ, չտպուած իմ գրքերը, չնայած շատ ու յաճախ վատ թարգմանութիւններին, արագօրէն դառն համաշխարհային դիւյուն ընթերցողին։ Նրանց քննական վերլուծութեամբ զբաղուեցին Արեւմուտքի այնպիսի՛ ականաւոր գրողներ, ինչպիսին է Հենրիխ Բէօլը։ Այս բոլոր վերջին տարիներին, երբ իմ աշխատանքն ու ազատութիւնը փուլ չեկան, մնացին, ծանրութեան օրէնքներին հակառակ, կարծես թէ օդի մէ՛ջ, կարծես թէ ոչնչի վրայ, — անտեսանելի, համակրական հասարակական բարակ շերտի համբ պրկուածքի վրայ, — ես երախտապարտ ջերմութեամբ, բոլորովին անսպասելի ինձ համար՝ ճանաչեցի եւ գրողների համաշխարհային եղբայրութեան աջակցութիւնը։ Իմ ծննդեան 60-ամեակի օրը, ես զարմացայ՝ շնորհաւորանքներ ստանալով եւրոպական յայտնի գրողներից։ Իմ հանդէպ գործուած ոչ մի ճնշում աննկատ չանցաւ։ Գրողների միութիւնից հեռացուելու՝ ինձ համար վատնչաւոր շաբաթներին, աշխարհի ակնառոր գրողների կանոնեցրած

պաշտպանութեան պատը ինձ պահպանեց վատթարագոյն հալածանքներից, իսկ Նորմիպական գրողներն ու նկարիչները, հայրենիքից ինձ արտաքսում ստանալու դէպքում, հիւրասիրաբար ապաստան պատրաստեցին ինձ համար։ Վերջապէս, հենց ինձ Նորվեգեան մրցանակ տալու առաջարկութիւնը բխել է ոչ թէ այն երկրում, որտեղ ապրում եւ գրում եմ, այլ Ֆրանսուա Մորիակի ու նրա պաշտօնակիցների կողմից։ Եւ դրանից աւելի ուշ՝ ամբողջ աղգային գրական միաւորներ աջակցեցին ինձ։ Այդպէս ես հասկացայ ու զգացի, որ համաշխարհային գրականութիւնը արդէն ո՛չ թէ վերացական օրգան է, ո՛չ թէ գրականագէտների ստեղծած ընդհանրացում, այլ մի ինչ-որ ընդհանուր մարմի՛ն եւ ընդհանուր ոգի՛, կենդանի, սրտաբուխ միասնութիւն, որի մէջ արտացոլում է մարդկութեան աճող հոգեւոր միասնութիւնը։ Դեռեւս բոստրանո՛ւմ են հոսանքատար լարով եւ ինքնակրակ դնդակոծումներով չիկացած պետական սահմանները, դեռեւս որոշ ներքին գործոց մինիստրութիւններ կարծում են, թէ գրականութիւնը ե՛ւս իրենց ենթակայ երկրների «ներքին գործն է», դեռեւս երեւում են լրագրական վերնագրե՛ր՝ «նրանք իրաւունք չունե՛ն միջամտելու մեր ներքին գործերին», — մինչդեռ ահռետարակ ներքին գործեր չե՛ն մնացել մեր նեղլիկ աշխարհում։ Եւ մարդկութեան փրկութիւնը միայն նրա մէջ է, որ ամէ՛ն ինչ բոլորի գործը լինի, Արեւելքի մարդկանց հետաքրքրի, թէ ի՛նչ են մտածում Արեւմուտքում, իսկ Արեւմուտքի մարդկի հետաքրքրուն, թէ ի՛նչ է կատարւում Արեւելքում։ Եւ դեպարտեմենտական գրականութիւնը, մարդկային էակի նրբագոյն, ամենադիպայուն գործիքներից մէկը, արդէն առաջիններից մէկն է ընդունել, իւրացրել, սեփականացրել մարդկութեան աճող միասնութեան այդ զգացումը։ Եւ ահա ես փստահորէն գիտում եմ այսօրուայ համաշխարհային գրականութեանը, հոբիւրաւոր բարեկամներին, որոնց երբեք չեմ տեսել աչքով ու թերեւս էլ չտեսնեմ։

— Բարեկամնե՛ր, փորձե՛նք սատարել մենք, եթէ որեւէ բան արժենք։ Իրենց երկրներում, բազտուած՝ կուսակցութիւնների, շարժումների, կասկածների եւ խմբերի բարմաձայնութիւնից, — վաղուց ի վեր ո՞վ է եղել ոչ թէ բարձրող, այլ միաւորող ուժը։ Իր էութեամբ իսկ ա՛յդ է գրողների ազգային լեզուի, ազգի գլխաւոր ամրակապի, եւ հենց ժողովրդի բնակուած երկրի, երգանիկ դէպքերում էլ հենց ազգային ոգո՛ւ արտայայտիչների վիճակը։ Ես կարծում եմ, որ համաշխարհային գրականութեան ուժից վեր չէ՛ մարդկութեան այս տաղնապալի ժամին օգնել նրան, որ ճիշդ ճանաչի ինքն իրեն, հակառակ նրան, ինչ որ ներշնչւում է աչառու մարդկանց ու կուսակցութիւնների կողմից, մէկ երկրի խաղցուած փորձը փոխադրել այլ երկրներ, այնպէ՛ս, որպէսզի աչքերը դադարեն շաղուել, համատեղուեն ատրճանատախտակները եւ ժողովուրդները հաւասար ու սեղմ կերպով իմանան ուրիշների իսկական պատժութիւնը՝ ճանաչման ու ցաւոտ զգացման այն ուժով, որ կարծես թէ դա իրե՛նք են տարել, ու դրանով իսկ թնայուեն նրանց ուշացած սխալները։ Իսկ մենք ինքներս ընդամին թերեւս կարողանանք մեր մէջ զարգացնել համաշխարհային տեսողութիւնը, աչքի կենտրոնով, ինչպէս ամէն մարդ, մտի՛կը տեսնելով, աչքի ծայրերով սկսենք հաւաքել եւ ա՛յն, ինչ որ արւում է մնացեալ աշխարհում։ Եւ յարգրենք ու պահենք համաշխարհային համուշափութիւնները։ Եւ ո՞վ պէտք է, եթէ ոչ գրողները, յանդիմանեն ո՛չ միայն իրենց անյարգոզակ կառավարիչներին, — որոշ պետութիւններում դա ամենահեշտ հացն է, գրանո՛վ է զբաղուած ամէն ոք, ով չի ծուլանում, — այլեւ իրենց հասարակութիւնը՝, նրա վախկոտ նուաստաց-

ման կամ ինքնապահ թուլութեան մէջ, այլեւ՝ երիտասարդութեան թեթեւակիր ցասկութիւններին, բարձրացած դանակներով պատանի օդահէններին։ Մեզ ի՞սահն, թէ իսկ ի՞նչ կարող է անել գրականութիւնը բացայայտ բռնութեան անպուէր դրսհի դէմ։ Բայց չմոռանանք, որ բռնութիւնը չի՛ ապրում մենակ, եւ ընդունակ չէ՛ ապրելու մենակ. նա անպայման միահիւսում է ստի՛ն։ Նրանց միջեւ կայ ամենահարազատ, ամենաբնական, խոր կապ. բռնութիւնը ոչնչով չի կարող ծածկուել, ստից բացի, իսկ սուտը ոչնչով չի կարող պահուել, բռնութիւնից բացի։ Ամէն ոք, ով մի անգամ արդէն բռնութիւնն իր միրոտն է հոյակել, անխուսափելիօրէն պիտի իր համար սուտը սիզրա՛ւցէ բնորի։ Ծնունդիս, բռնութիւնը գործում է բացայայտ եւ նոյնիսկ հպարտանում։ Բայց հենց, որ նա ամրանում է, հաստատւում, — օդի նօսրացում է գալիս իր շուրջը եւ այնուհետեւ չի կարող գոյութիւն ունենալ այլ կերպ, քան մշուշներով՝ ստով, ծածկուելով նրա քաղցրախօսութեամբ։ Նա արդէն ոչ միշտ եւ ոչ անպայման է ուղղակի խեղդում կոկորդը, աւելի յաճախ նա հպատակներից պահանջում է միայն երդուե՛լ ստին, միայն մեղասակի՛ց զատնալ ստին։ Եւ հասարակ խիղախ մարդու հասարակ քայլը կը լինի չմասնակցե՛լ ստին, չպաշտպանե՛լ սուտ արարքները։ Թող դա աշխարհ գոյ ու նոյնիսկ թագաւորի աշխարհում, բայց ո՛չ ինձնով։ Իսկ գրողների ու տրուեստագէտների համար մատչելի է աւելի՛ն՝ յաղթե՛լ ստին։ Արդէն իսկ ստի դէմ պայքարելի՛ս է, որ արուեստը միշտ յաղթել է, միշտ յաղթում է, — բոլորի համար տեսանելի, անհերքելի։ Աշխարհում շատ բանի կարող է դիմանալ սուտը, բայց ո՛չ Արուեստին։

Ու հենց, որ հողմապրիւ արուի սուտը, զգուշիօրէն բացուի բռնութեան մերկութիւնը, պատմեալ բռնութիւնն էլ գետի՛ն կը փռուի։ Ահա թէ ինչո՛ւ ես կարծում եմ, բարեկամնե՛ր, որ մենք ընդունա՛կ ենք օգնելու աշխարհին՝ նրա չիկացած պահին։ Ջհրաժարուե՛լ՝ դինաթափ լինելով, չյանձնրե՛լ անհոգ կեանքին, այլ մարտի՛ դուրս գալ։ Ռուսաց լեզուում սիրուած են առածները ճշմարտութեան մասին։ Նրանք յամառօրէն արտայայտում են ժողովրդական ոչ միայն ու երբեմն էլ դարմանալի ծանր փորձը։— Ճշմարտութեան մէկ խօսքը ամբողջ աշխարհը իր կո՛ղմը կը բաշի։ Ահա՝ էներգիայի մասսաների պահպանման օրէնքի այսպիսի կարծեցեալ-երեւակայական խոխման վրա՛յ է հիմնուած եւ իմ սեփական զործունէութիւնը, ու ամբողջ աշխարհի գրողներին ուղղուած իմ կոչը։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈԼԺԵՆԻՑԻՆ

Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

ԺԵՐԱՐ ՏԸ ՆԵՐՎԱԼ

1808 — 1855

●

ԼՈՒՍԱՒՈՐ ՈՒ ԹԱՒՈՒՐ ԳԻՇԵՐԸ

Երազեցի բարայրին մէջ, ուր կը լողար ծովանոյշը
եւ երկու անզամ յաղթականօրէն անցայ Ամերոնի ջուրերը...

Ժերար դպցեց գերքը ու գլուխը առնելով ափերուն մէջ՝ սկսաւ հեծկլտալ։ Ցիշատակները կը խուժէին ուղեղէն ներս, անցեալի ձայները կ'աղաղակէին, կ'ողբային, կ'ալաչէին եւ երեւակայութեան առջեւ սիրուած դէմքերը իրարու եաեւէ կը տարածուէին։

Եւ ինք առանձին էր այս հսկայ անապատին մէջ, այս անծայրածիր քաղաքի տանիքներէն մէկուն տակը։ Մտաւոր պատուհանին ու դիտեց փողոցը։

Ցունուարի դիշերը հսկայ պատանքի մը պէս իջած էր ամէն կողմ ու փարեալ նոր տաղերը երկինքէն, կը հալածէր այն քանի մը լուսաւոր կէտերը, որոնք կը յանդգնէին տակաւին պլպլալ պատուհաններու ապակիին եաեւէն։ Խոր լռութիւն մը քաղաքը կը ճգմէր իր հսկայ ափերուն մէջ։ Հապուազէպ անցորդներու քայլերուն ձայնը կը մեռնէր ծիւնի հաստ խաւին վրայ, եւ անոնց շուքերը, դարչ պատերուն վրայ, կը ձեւացնէին առասպելական կերպարանքներ։ Եւ փողոցին խաւարը կ'ընկլուզէր դանոնք յաւիտեանս յաւիտենից։

Տեղ-տեղ, երկաթէ ձողերով պատերուն կախուած ցոլակները կերտոններու պէս կը սահմանէին դէպի անդենական տանող այս փաղուղիները եւ սարսափակին վրայ կը գծագրէին աղօտ շրջանակներ։ Մահուան եւ խաւարի հարսնիքը սկսած էր դիշերուան անկողնին մէջ եւ սարսափահար բնութիւնը անձկանօք կը սպասէր կիսամեռ լուսարացին։

Լռութիւնը կապարի պէս կը ծանրանար թշուառներուն վրայ։ Մարդերը՝ քաշուած իրենց պատերուն եաեւ՝ գինովնալով կը ջանային մոռնալ իրենց շուրջը սաւառնող անձկութիւնը։

Միայն Սէն դետը կը խանդարէր այս մեռելային անդորրութիւնը եւ զարնուե-

լով իր քարաշէն ափերուն, ազաղակելով կը հեռանար քաղաքի չարագուշակ մրթնոլորտէն։

Ապակիները մէկիկ-մէկիկ մթնցան եւ մարդիկ մտան իրենց անկողինները, բայց կը վախնային քնանալէ։ Տուները՝ քով քովի երկնցած խորհրդաւոր անասուններու պէս, յուսահատ կը սպասէին, որ բան մը պատահի եւ վերջ գտնէ այս դեհենական անձկութիւնը։

Միայն կիսափուլ շէնքի մը հինգերորդ յարկին պատուհաններէն մէկը բաց էր եւ անկէ յորդող ուղղանկիւն լոյսի զանգուածը կ'երթար, կը հանգչէր դիմացի բորոտ պատուհանին վրայ։ Կարծես անիկա՝ բլլար այս հսկայ քաղաքին կիկլոպեան աչքը։ Մարզկային դլուխ մը անշարժացած էր այդ շրջանակին մէջ։

Ժերար պահ մը մնաց այդպէս։ Երազկոտ աչքերը հապիւ կը նշմարէին առօրեայ այս տեսարանին միօրինակ ազդեցութիւնը։ Ցանկարծ հառաչանք մը պոռթկաց կուրծքէն եւ գիշերուան անտարբեր ճակտին նետեց կորստի սա խօսքերը.

— Տո՛ւր ինծի կրկին Լիբանանի մրշոտընջենական մայրիները, Իտալիոյ կապոյտ ծովը, Նափոլիի կախարդող երգերը։ Վերադարձո՛ւր այն ծագիկը, որ պահ մը զուարճացուց ամայի սիրտս, դուն, որ ինծի այցելեցիր գերեզմանիս խաւարին մէջ։

Փողոցը կը մնար լուռ ու ամայի անդունդի մը պէս։ Գիշերապահն իսկ չէր երթեւեկեր իր հինցած լապտերով եւ անոր խոպոտ ձայնին արձագանգը չէր ընկերանար քանաստեղծին խոկումներուն։

Ժերար սարսռաց յանկարծ։ Գոցեց պատուհանը ու նստաւ խարխուլ մահճակալին եզերքը։ Որքան լաւ պիտի բլլար քնանալով անցրնել ժամանակին այս մըտանգաւոր միջոցը, ուր մահը, թեւերը բացած՝ իրեն կը ժպտէր մոռցուած սիրուհիի մը պէս։ Բայց անմիջապէս, որ փորձէր աչքը գոցել, արդէն սարսափը կը ծորէր իր ուղեղէն ներս հսկայ ջրվէժի մը որոտումով եւ հոն կը ստեղծէր դեհենական իրարանցումներ։

Աչք մը պարբացուց իր ագքատ խուցին մէջ, զոր վարձած էր քանի մը օր առաջ, Սէն Մեռի եկեղեցիին եւեւները, իր ծնած տունէն ոչ շատ հեռու։ Իր բարեկամներէն ոչ մէկուն տուած էր իր նոր հասցէն։

Շեղ տանիքը կը նմանէր գոցուելու վրայ եղող դագաղի մը կափարիչին։ Անկիւնի կող սեղանին վրայ, որուն ծայրը անկուած նիհար մոմը վերջանալու վրայ էր, ցիրուցան թուղթեր, աշխատերեւներու պէս ինկած չեն դիտեր ո՛ր մէկ ծառէն, կը սպասէին, որ ճակատագրին հողմը գիրենք տանէր ու նետէր աշխարհի չորս ծագերուն։

Ժերար կը դողդղար ցուրտէն, հակառակ անոր, որ վերմակը նետած էր ուսին։ Կրակը կրնար քիչ մը մեղմացնել այս անտանելի ցուրտը, բայց սենեակին մէջ ո՛չ վառարան կար ոչ ալ վառելանիւթ։ Անշարժութիւնը կը սաստկացնէր պոգին հպումները։

Ցանկարծ մտաբերեց մօրաքրոջը հրաւէրը, սակայն հիմա շատ ուշ էր նոյնիսկ ագռաւանի մը այցելելու համար։ Եւ զղջաց անոր հրաւէրը մերժած բլլալուն պատճառով։ Ցիշեց մօրաքրոջը զրկած երկտողին վերջին նախադասութիւնը, որուն տարօրինակութեան վրայ հիմա՛ է, որ կ'անդրադառնար. «Ինձի մի՛ սպասեր այս իրիկուն, որովհետեւ գիշերը մութ եւ սպիտակ պիտի բլլայ»։

Ինք որոշած էր ամբողջ օրը մնալ սենեակին մէջ, աւարտելու համար իր «Կապկի աղջիկներ»ուն վերջինը՝ «Օրինիա»ն։ Բայց անկարելի էր գրիչ շարժել այս սառուցեալ մթնոլորտին մէջ։

Պէտք էր ճպել այս խուցը, որ գերեզմանի մը նախասենեակին կերպարանքը առած էր, ու գտնել անկիւն մը, տաքցած մարդկային շունչով, ուր կարելի բլլար տաքնալ իր այնքան սիրած այս գլուխիկը։

Բայց ո՞ւր երթալ...

Անդիմադրելի ուժ մը ոտքի հանեց զինք։ Մոմը կ'արձակէր իր վերջին նշոյլները։ Սեղանին տակէն քաշեց արկղ մը, ուր խնամքով կը պահէր միակ հագուս-

տը։ Ճերմակ շուղիկին օձիքէն անցուց մոխրագոյն փողկապը, հագաւ սեւ ու կանաչ գծաւոր տարազը, վրայէն անցուց սեւ ժաքէթը եւ ոտքերուն՝ փայլուն սեւ կօշիկները։ Կարծես հարսնեւոր մը ըլլար, կամ պարահանդէսի հրաւիրեալ մը։ Սեղանին վրայէն հաւաքեց թուղթերը, ծալեց ու դրաւ գրպանը։ Մատներուն հանդիպեցաւ բարակ չուան մը։ Լէ Ռոզիէ փողոցի հրեայ հնավաճառի մը խանութէն գնած էր զայն։ Մարկերիթ թագուհիին սեղմիրանին կապն էր իրեւ թէ։

Երբ դուրս ելաւ, մութը սպառած էր արդէն եւ անձկութիւնը տիրեց խուցին մէջ, որուն միայն սփոփանքը եղած էր այս յաւիտենական թափառականին ներկայութիւնը։

Քալեց Սէն Մարթէն փողոցէն ու հասաւ Սէն Ժաղ աշտարակին հրապարակը։ Սէն Մեռիի զանգակատունը դարձաւ տաճարկուքը։

***

Ժերար տը Նէրվալ կը քալէր մտածկոտ։ Տան մը ատիճաններուն քով նրշմարեց չուն մը, որ գրեթէ սառած էր պաղէն։ Կենդանին լսելով մարդու մը ոտնաձայնը, փորձեց ոտքի ելլել ու հեռանալ անոր ճամբէն։ Բանաստեղծը կանգ առաւ զարմացած։ Ուրեմն իրմէ դժբախտ էակներ ալ կային աշխարհիս երեսը։ Սիրտը դութով լեցուեցաւ այս անպաշտպան եւ անօթի անասունին հանդէպ եւ չխանգարելու համար անոր հանդիստը, շեղեցաւ ճամբէն ու մայթը փոխեց։

Քաղաքապետարանը ձգեց ձախ կողմը ու քալեց դէպի բանվարեղէններու շուկան, ուր եռուզեռը չէր դադրեր դիշեր ու ցերեկ։ Լոմպարներու փողոցին անկիւնը, ճիշդ ոստիկանատան դիմաց դանուող ճաշարանը բաց էր։ Հրեց դուռը։ Սեղանները դրեթէ պարապ էին։ Մթնոլորտը տաք էր ու հաճելի։ Ապրապրեց ոման մը ոտի ապուր ու նստաւ անկիւնի սեղանին առջեւ ու թուղթի որոցակը գրպանէն հանելով՝ սկսաւ լեցնել դարպաս էջերը։ Եւ Օրելիայի կոխարդակեան դէմքը մոռցնել կու տար իրեն՝ կացութեան ողբերգութիւնը։

Բաւական ժամանակ անցաւ։ Ճաշարանը հիմա ամբողջովին ամայի էր։ Ճաշարանապետը սկսած էր դուրսի փեղկերը դոցել։ Ժերար ոտքի ելաւ, հաւաքեց թուղթերը, վճարեց ու դուրս ելաւ։ Գրպանը մնացած էր 10 սանթիմ միայն այն մէկուկէս ֆրանքէն, զոր փոխ առած էր իր մէկ բարեկամէն։

Հասաւ Ինոսաններու նեղ հրապարակը։ Քամին կը սուլէր սառած դեմքին վրայ եւ կը խածնէր մինչեւ ոսկորները։ Հեռուէն դեմին ձայնը ողբի մը պէս կը լեցնէր խաւարին անտարբերութիւնը։ Բանաստեղծը հմայուած այդ տարօրինակ ազմուկէն, ուղղուեցաւ ջուրին կողմը։

Բազրիքին մօտ կանգ առաւ սարսափած։ Ո՛չ, այս պղտոր ու կատաղի հեղուկը չէր կրնար բլլալ իր վերջին հանդրստարանը։ Ոռնացող հոսանքին հետ կ՚ինկնէին սառի հսկայ կտորներ եւ կը դարնուէին Փոն Նէոֆի մոյթերուն։

Վերադարձաւ նոյն ճամբէն, աւելի մօտ բլլալու համար այն փայրերուն, ուր կարելի էր դեռ փայելել մարդկային դոյութիւն մը։ Գիտէր, որ դեռ Պուլվարներու վրայ բաց էին քաղինոներն ու թատրոնները։ Եւ քիչ մը վեր, Մանմարթրի կողմը, Փիկալի աղքատիկ պանդոկներուն առջեւ սէր ծախող աղջիկներ պատրաստ էին իր մարմինը տաքցնելու արագ գիրկընդխառնումներով։ Բայց ինք չէր ուզեր իր մարմինը պղծել ածան համբոյրներ գնելով եւ արդէն այդ հասարակ հաճոյքները վճարելու դրամ ալ չունէր գրպանը։

Սուրբ Յակոբի աշտարակը կրկին դէմն էր։ Ժամացոյցի մը զանգը նորէն հնչեց, բայց ինք չհաշուեց հարուածներուն թիւը։ Յանկարծ, այս ժամուն վարձկան թատրոնի դիմացի ծաղկավաճառուհիին ծաղկեփունջեր կը զրկէր Ժենիին։ Բայց Ժենի մեռած էր տարիներ առաջ, հեռուն, հիւսիսի մայրաքաղաքներէն մէկուն մէջ։

Մաս. ձախ թեւի փողոցը ու սկսաւ արագ-արագ քալել։ Կը փնտռէր անկիւն մը՝ կեանքին դէմ պաշտպանուելու համար։ Վստահ էր, որ բնազդը դինք պիտի տանէր հոն, ուր մոռցած նեկան, ձմեռն ու ցուրտը պիտի ապրէր իր երազը յաղթական։

Կը դտնուէր հիմա նեղլիկ փողոցի մը մուտքին։ Դագաղամոռի մը ցուցափեղկին մէջ նշմարեց խսկական մոմիա մը, բերուած Եգիպտոսէն։ Անոր սեւ բիբերը ստուած էին մահուան տեսիլքէն եւ ժամանակի միօրինակութենէն։ Ժերար յիշեց Դահիրէն, արեւը, բուրգերը, Զէյնապը եւ Սոլիման։ Իմամպանի կենսայորդ դիշերները, արաբական աղմկայոյզ հարանիքները եւ Իպիսը, որ լոլանք կ'առնէր Նեզոսի դոմացնող ջուրերուն մէջ։

Անուշ դալու մտած էր փողոց։ Կը դտնուէր խրամի մը յատակը, որուն երկու կողմերը սեւ երիզ մը միայն կը փաստէր երկինքին գոյութիւնը։ Ներսալ չանցաւ Հին Լայտեր կոչուած չարաշուք փողոցը։ Վերջին տարիներուն յաճախ եկած էր հոս, որովհետեւ հոն կար շատ ժան պանդոկ մը, եւ աւելի ածան՝ ճաշարան մը։

Հասաւ փողոցին ծայրը ու կանգ առաւ։ Ոտքերուն տակ կը սկսէին ցեխոտ ասֆիճաններ, որոնք կ'իջնէին մինչեւ գետը։ Գատին քովէն կը բացուէր նեղ կոյուղի մը, ուրկէ կը հոսէին չրջակայ թաղին բոլոր ագտեղութիւնները։ Ձախ թեւին վրայ էր փնտռած պանդոկին դուռը, ուր հասնելու համար պէտք էր քալէր կուրտուած տախտակամածէ մը։ Երբ սաքր կոխեց տախտակին ծայրը, յանկարծ սեւ կերպարանք մը սաւառնեցաւ դէպի վեր ու կանգ առաւ պատուհանի մը եզերքը։ Ժերար ճանչցաւ պանդոկապետին ագռաւը, որ մութը կոխելուն պէս, տէրը կը դառնար ամբողջ փողոցին։

Դուռը հարուածեց բռունցքով, բայց ներսէն չէին պատասխաներ։ Շարունակեց հարուածել, բայց ներսէն լռութիւնը չխզուեցաւ։ Այս անգամ սկսաւ զօրաւոր կիցեր տալ, մինչեւ որ ներսէն կնոջական խռպոտ ձայն մը հարցուց.

— Ո՞վ է, ի՞նչ կ'ուզես։

— Ձեր յաճախորդներէն մէկը։ Անկողին մը կ'ուզեմ դիշերուան համար։

— Շատ լաւ, սակը դիտնալու ես։ 25 սանթիմ է, կանխիկ։

— Անգրեմ, բացէք։ Ցուրաէն ստուած եմ։ Հիմա վրաս ունիմ տասը սանթիմ միայն, վաղը ոնպայման կը վճարեմ մնացեալը։

— Անկարելի է։ Այդ երկերը շատ լսած եմ։ Եթէ բանալիին համար 25 սանթիմ չունես, դուռը չեմ բանար։

Ժերար ազաչեց, պաղատեցաւ, սպառնաց երկար։ Բայց ալլուս յոյս չկար։ Գիտէր, որ վաչխառուներէն եւ պանդոկապետներէն աւելի անզութ մարդ գոյութիւն չի կրնար ունենալ։ Պէտք էր ուրիշ տեղ մը դանէր։ Կրկին հասաւ փողոց։ Ցեխոտ ասֆիճաններէն քանի մը հատ իջաւ։ Ալ կողմը, կամարաձեւ բացուածքէ մը կոյուղիներու ջուրը կ'իջնէր դէպի գետ։ Ճիշդ դիմացը կար նոյն ձեւի դուռ մը։ Հին ախոռ մըն էր, ուր 10 սանթիմ վճարելով կարելի էր դիշերը անցընել՝ կենդանիներու ընկերակցութեամբ։ Զարկաւ դուռը. բայց ոչ ոք բացաւ։

Նստաւ ցեխոտ ասֆիճաններէն մէկուն վրայ, փողոցին մակերեսէն բաւական վար, հոն՝ ուր կատարի քամին չէր կրնար հասցնել իր հարուածները։ Վերարկու մը կրնար դինք փրկել։ Բայց երկու օր առաջ զայն գրաւատուն տարած էր, քանի մը ֆրանք փոխ առնելու համար։ Ադռաւը եկաւ թառիլ դէմուն վերեւը, ուրիշ պատուհանի մը եզերքը։

Ցուրտն ասուկութիւնը ընդարձակացուց մարմինը, եւ կոյուղիէն գուրս հոսող ջուրին թաւ ձայնը օրօրի վերածուելով՝ դինք տարաւ երազներու աշխարհը...

⁂

...Կը դտնուէր բաւական ընդարձակ տարածութեան մը վրայ։ Թանձր խաւարը կը պատէր հորիզոնը, այնպէս որ՝

կարելի չէր բան մը նշմարել։ Առեն մը ետք մշուշը սկսաւ անէանալ եւ աղօտ լոյս մը գոյութեան կանչեց խաւարի քողին տակ թաքնուած բաները։ Աջ կողմը կը բացուէր անյատակ անդունդ մը։ Անվախօրէն քալեց անոր եզերքէն։ Ցանկարծ գտնուեցաւ գեղատեսիլ բլրակի մը առջեւ, որուն գագաթին ղղեակ մը կառուցուած էր։ Սկսաւ մագլցիլ բլուրին կողն ի վեր։ Այնքան թեթեւ կը ղգար, որ հաղիւ ոտքին ծայրը գետին դպած, ինք օդին մէջ կը սաւառնէր։ Փոքրիկ տան մը առջեւ կանգ առաւ։ Որթատունկով շրջապատուած պատուհանը բաց էր։ Ներս նայեցաւ։ Սեւ մազերով աղջիկ մը, կարկահին առջեւ նստած, ոսկի թելերով կը զարդարէր սպիտակ մետաքսէ կերպասի մը եզերքը։

— Սիլվի՛, Սիլվի՛, — պոռաց ուրախութեամբ, — կը բաւէ աշխատիս։ Այսօր Ծաղկազարդ է։ Երթանք պարենք գիւղի հրապարակին վրայ։ Հոն մեզի կը սպասեն Սելենին, Լուիզը եւ Ատրիէնը...

Սիլվի գլուխը բարձրացուց. աչքերուն մէջ, մտահոգութեան պէս բան մը կը լողար, դէմքին վրայ կը տիրէր արձանային լրջութիւն մը։ Ոտքի ելաւ։ Գիրկը հաւաքուած ոսկի թելերը, ճառագայթներու պէս ցրուեցան գետին։ Դուռը բացաւ ու ժպտելով.

— Եկուր, սիրելի՛ս, եկուր, միասին մնանք այսօր, միասին անցընենք այս աղուոր Կիրակին։

— Չէ, Սիլվի՛, չէ, երթանք գիւղին հրապարակը, անցնինք դղեակին քովէն, մտնենք փլած վանքին բակէն ներս, հո՛ն՝ ուր կը սաւառնին դեռ երբեմնի կախարդող յիշատակներ։

— Ո՞ր մէկ դղեակը, ո՞ր մէկ վանքը։

— Այն տեղն մտնուկ էինք, կը յիշե՞ս, կանաչաղարդ բլուրին գագաթը կը բարձրանար քարաշէն հին դղեակ մը, պատուհանները զարդարուած էին գոյներզոյն ապակիներով, բարձրահասակ բարտիներ կը պաշտպանէին անոր խորհուրդը։ Երբ ծաղիկներ քաղելով կը հասնէինք անոր մօտ, կը լսէինք տխուր եւ քաղցր երգ մը, որ կարծես կու գար հին դարերէն։ Եւ թարմ պատուհանին առջեւ, կը տեսնէինք գեղեցիկ իշխանուհին, խարտեաշ մազերով ու սեւ աչքերով... իշխանուհի մը, զոր կարծես ճանչցած էի, իմ ապրած նախորդ կեանքիս մէջ։

— Իշխանուհի՞ն, այո՛, կը յիշեմ...

— Իրիկուն մը, երբ կը վերադառնայինք գիւղէն, նկատեցինք, որ վանքին խոշոր սրահը լուսաւորուած էր։ Շրջանի երեւելիներէն մէկը ներկայացում մը կու տար՝ անոր միջնադարեան աւերակները կենդանացնելու համար։ Դերասանները, մայրապետանոցի մը գիշերօթիկ աշակերտներն էին։ Կը ներկայացուէր դրուագ մը Ցիսուսի կեանքէն։ Աղջիկները հագած էին դոյնզդոյն ու երկար շրջազգեստներ։ Տեսարանը կը ներկայացընէր աշխարհի վերջը։ Եւ հրեշտակները կ'երգէին մեռած երկրագունտին գեղեցկութիւնները եւ Աստուծոյ փառքը։ Մը չուշապատ անդունդէ մը կը բարձրանար հրեշտակապետ մը եւ կ'երգէր զօրութիւնը Քրիստոսի, որ յաղթած էր մահը եւ պժոխքը։ Այդ հրեշտակապետը Ատրիէնն էր...

— Ատրիէնը, այո՛։ Ա՜յդ Ատրիէն։ Գիտես, որ ան մեռաւ 18 տարեկան հասակին, խորհրդաւոր հիւանդութենէ մը...

— Երթանք, Սիլվի՛, երթանք, կըրկին քալենք անցեալի ճամբաներուն վրայ. իմ՛նչ փոյթ մահը. եա պատկեր մը կը փնտռեմ այսօր։

Սիլվի անհետացած էր։ Ժերար ալ Ներվալ քալեց անծանօթ ճամբաներու վրայ։

Հիմա կը գտնուէր Փարիզի փողոցներէն մէկուն մէջ։ Կանգ առած էր թատրոնի մը առջեւ, որուն ճակտին կը փայլէին Վարիեթէ բառին գիրերը։ Ո՛չ պաշտօնեայ կար եւ ոչ դռնապան։ Մտաւ ներս։ Սրահը ամայի էր, բայց բեմին լոյսերը վառուած էին։ Ներկայացումը ի պատիւ իրեն պիտի տրուէր։ Զեռքի դուսպանը երեք անգամ դեռին զարկաւ եւ վարագոյրը սկսաւ բացուիլ։ Բեմին կեդրոնը կանգնած էր Ան, իր խարտեաշ

հրեշտակը եւ թեւերուն մէջ կը սեղմէր ա՛յն ծաղկեփունջը, զոր տարիներ առաջ, Ժերար նուիրած էր իրեն։ Այդպէս մնացին երկար, քարէ արձաններու պէս, ամբողջ անցեալը կեդրոնացնելով իրենց աչքերուն մէջ։ Վերջապէս բանաստեղծը ոտքի ելաւ ու պատրաստուեցաւ մեկնելու։

— Սպասէ, սիրելիս, — աղաչեց Օրելիա, — այս անգամ միասին մեկնինք, որովհետեւ քեզմէ զատ ոչ ոք ունիմ աշխարհի երեսը։ Միասին մնանք, միասին ապրինք, որովհետեւ այլեւս զիշերը վախճան պիտի չունենայ...

— Ահապարէ՛, — ըսաւ Ժերար, — եթէ ուշտնանք եղեմին դուռները կը դոցուին եւ մենք կը թափառինք յաւիտեանս արտաքին խաւարի մղձաւանջին մէջ։

Ժերար հասաւ պարտէզի մը դրան առջեւ։ Աղջամուղջը պատած էր ամէն կողմ։ Ծառերու հիւղերը կ'աւլէին գետինը, եւ անտեսանելի շատրուանի մը ջուրին կաթիլները կ'արտասուէին աւազանին մէջ իյնալով։ Կը քալէր նեղ արահետ մը, երբ առջեւը տեսաւ ճերմակ կերպարանք մը։ Օրելիան չէր կրնար ըլլալ այդ կերպարանքը, ան տակաւին կը դտնուէր թատրոնին մէջ։ Ժերար անուններ տուաւ, բայց տիկինը կը շարունակէր առաջանալ՝ առանց հոն դառնալու։ Ծառերու հիւղերը ճամբայ կու տային իրեն եւ իր ճերմակ շրջազգեստին կը սփռուէր խորհրդաւոր լոյս մը, որ գոյն կու տար տերեւներուն եւ պտուղներուն։ Վերջապէս, ճերմակ կերպարանքը կանգ առաւ խոշոր վարդենիի մը առջեւ եւ անկէ կորից երկար ճիւղ մը ու դարձաւ բանաստեղծին կողմը։ Ժերար ճանչցաւ իր բոլոր սիրելիները այս խորհրդաւոր դէմքին ժպիտին եւ նայուածքին մէջ։ Շտապեց առաջ, կ'ուզէր վարդի ճիւղը առնել։ Բայց կերպարանքը սկսաւ մեծնալ, լեցուց ամբողջ պարտէզը, մինչ շրջազգեստը կը վերածուէր ճերմակ ամպի եւ աչքերը կ'անհետանային՝ համաստեղութիւններ ստեղծելով։

— Մի փախչիր, — պոռաց Ժերար, — որովհետեւ ամբողջ բնութիւնը պիտի մոռնի, եթէ անհետանաս։

Աղջամուղջը կրկին կը տիրէր ամէն կողմ։ Ժերար խորխափելով կը յառաջանար փուչերու եւ մացառներու մէջ, ուրկէն կը պարնուէին խոշոր քարեր՝ անտեսանելի պատերէ վար ինկած։ Եւ պարտէզը վերածուեցաւ դերեզմանի եւ դամբանի մը վրայ տեսաւ անոր արձանը։ Եւ խորհրդաւոր ձայներ կը փսփսային անհասկնալի բաներ։

Օրելիա ոչ եւս էր։

Հիմա կը գտնուէր ընդարձակ սրահի մը մէջ։ Դէմը կայնած էին ճերմակ հագած բարձրահասակ դեղեցկուհիներ։ Անոնք մէկիկ-մէկիկ մօտեցան իրեն ու տալին իրենց անունները։ Վերջինը Ատրիէնն էր։

— Ո՞ւր էիր, սիրելիս, — ըսաւ աղջիկը, — տարիներ ոպասեցի զդեակին աշտարակին վրայ, պարտէզին բարտեները այնքան մեծցան, որ այլեւս չէի տեսներ այն ճամբան, ուրկէ պիտի գայիր։ Հիմա երկնակամարը անմատչելի դարձաւ քեզի համար, բայց ես թեւերս պիտի տարածեմ քու վրադ, որպէսզի հրեշտակները չխուսափին քեզմէ։

— Ատրիէ՛ն, Ատրիէ՛ն, քանի՞ անգամ ուզեցի վերադառնալ քեզի, այցելեցի զդեակը եւ պարտէզը, բայց դուն մեկնած էիր։ Վերջի՛ի վերջոյ քեզ տեսայ վանքի մը մատուռին մէջ, սեւ զգեստ հագած էիր ու թաղած երիտասարդութիւնդ...

— Մեզքերուդ համար զոհ մը պէտք էր։ Փակուեցայ վանքի մը մէջ, նուիրուեցայ Աստուծոյ եւ օրիր աղօթեցի քեզի համար եւ Տէրը լսեց ձայնս։ Այլեւս մի վախնար, դուն ու ես այլեւս անմեղ հրեշտակուած ենք հրեշտակներու դատաստանին առջեւ եւ մեր միացման ժամը շուտով պիտի հնչէ։

— Ատրիէն, մնանք միասին, այս սրահին մէջ, այս գեղեցիկ պալատին մէջ. շուրջդ կը տեսնեմ պիւղին գեղեցկուհիները...

— Պիտի միանանք, բայց ոչ այստեղ...

Դղեակը անհետացած էր։ Սրահին տեղը կը բարձրանային տարօրինակ ծառեր։ Ճերմակ կերպարանքը սահելով սալայատակին վրայ՝ կը հեռանար անզգալաբար։ Ժերար վազեց անոր ետեւէն.

— Մնա՛, Ռորիէն, որպէսզի քու աչքերուդ մէջ վերազտնեմ կորսուած Եդեմը...

Ճերմակ կերպարանքը դարձաւ իր կողմը, եւ անծանօթուհին խօսեցաւ իրեն.

— Ես այն պատկերն եմ, զոր կը փնտռէիր։ Եւ երբ տեսնէիր գեղեցիկ դէմք մը՝ անմիջապէս իմ դէմքիս հետ կը բաղդատէիր. եւ այսպէս ճանչցար Սիլվին, Ասրիէնը, Մարին, Ժենին, Օրելին։ Անոնց իւրաքանչիւրէն ունիմ բան մը, բայց տարբեր եմ անոնց իւրաքանչիւրէն։ Դուն զիս սիրեցիր օրորոցէն մինչեւ գերեզման։ Քեզմէ նոյնիսկ երկվայրկեան մը չեմ բաժնուած։ Ես քոյրդ եմ, սիրուհիդ, մայրդ։ Ես եւան եմ, Իզիսը, Կոյսը։ Երբ Աստուածամօր կ'աղօթէիր յուսահատութեան փոսէն, ես էի բառերը ներշնչողը։

Ժերար ձեռքը երկնցուց դէպի ճերմակ տեսիլքը եւ բաւ.

— Երթանք միասին, դիս տար քո՛ւ աշխարհդ։

Աստուածային դէմքին վրայ ժպիտ մը ուրուագծուեցաւ ու յանկարծ կերպարանքը այլափոխուեցաւ։ Ճերմակ շրջազգեստը լուսազարդուեցաւ աստղերով եւ դէմքը նոյնացաւ լուսնին։ Զորցած ծառերը վերածուեցան ծաղկազարդ տունկերու եւ երկինքէն կը տեղային դամասկավարդի ճերմակ կոկոններ։ Ու անհունէն ձայն մը պտաց ու թնդացուց վիհերուն յատակը։

— Անդունդներու սրբուհին աւելի՛ սուրբ է ինծի համար։ Ցաւարը ոկսած է պատել տիեզերքը։

Եւ իսկապէս խաւար էր ամէն կողմ. պաղ քամի մը կը փչէր անսահման տարածութեան վրայ։ Ճամբու ձիւնը սառած էր եւ սառած էին գետերը, դետակները։ Կամուրջի մը վրայ, սառոյցի շերտի մը վրայ գրուած էր Պերեզինա. եւ ժերար անմիջապէս յիշեց մայրը։

Հեռուն, միշտ ձիւնով ծածկուած կը տարածուէին քաղաքի մը ճերմակ տանիքները։ Քառուղիի մը անունը կարդաց՝ Կոկիս։ Շեղեցաւ դէպի աջ ու կմախացած ծառերու բուներուն մէջէն տեսաւ ցիր ու ցան խաչեր։ Տարիներ չարունակ մտքին մէջ կը կրկնուէր Կոկիս, Լեհաստանի այս հեռաւոր քաղաքին անունը։ Ուզած էր հոն գալ ամառ օր մը, երբ ամէն կողմ ծածկուած էր կանանչով եւ ծաղիկներու բաղմագոյն երդերով։ Ուզած էր քալել այս նոյն ճամբան՝ ճերմակ վարդերու խոշոր փունջ մը գրկած, տխուր ժպիտ մը դէմքին, ինքզինքը յանցաւոր զգալու ա՛յն անձին համար, որ կը ննջէր հոն, ճերմակ խաչի մը տակ, իր անծանօթ մօրը, որ անշուշտ պիտի ներէր իր որբ զաւկին թերացումները...

Բայց ձիւնը ծածկած էր դաշտ ու լեռ, տանիք ու շիրիմ եւ ցուրտը անողոք դաշոյնի մը պէս կը մտնէր մինչեւ ոսկորներուն ծուծը։ Ուշադրութեամբ կարդաց խաչերուն վրայ գրուած անունները։ Ահա վերջապէս.

Մարի Անթուանէթ Մարկերիթ
ԼՕՐԱՆ ԼԱՊՐԻՆՆ
(1785 – 1810)

Լռութիւնը աւելի թանձր էր, քան ձիւնի խաւը եւ սակայն բան մը կը պատահէր հոն, քարով ծածկուած հողակոյտին տակ։ Մօրը դիակը երջանկութեան սարսուռ մը կը զգար՝ մէկ հատիկ որբ ու դժբախտ զաւկին ոտնաձայնը լսելով.

— Եկուր, զաւա՛կս, խեզճ ու թշուա՛ռ զաւակս, եկուր մխիթարեմ քեզ։ Ճակատագիրը չուտով բաժնեց մեզ իրարմէ։ Դուն չճանչցար զիս ու ես հապիւ տեսայ ժպիտդ։ Բայց մերն է յաւիտենականութիւնը եւ մեզի պէս դժբախտներուն համար Աստուած պատրաստած է երանութեան բնակարանը։

— Ա՜խ, մա՛յր, որքա՜ն փնտռեցի քեզ. ոտքերս մաշեցուցի երկրէ երկիր, քաղաքէ քաղաք, անապատէ անապատ, ծովեր անցայ, բայց չկրցայ գտնել քեզ։

ինչո՞ւ պիս մինակ ձղեցիր կեանքի վայրապուտներուն եւ մարդոց անխղճութիւններուն դէմ...

— Միշտ հետդ էի, զուա՛կս, միշտ կը հետեւէի քայլերուդ, կը սաւառնէի շուրջդ, պահապան հրեշտակդ էի... ասկէ ետք երբեք պիտի չբաժնուինք իրարմէ, երբե՛ք...

***

Ժերար աչքերը բացաւ։ Աղօտ լոյս մը սկսած էր ճերմկցնել գլխուն վրայ երկնցող երկինքին չերտը։ Ոտքերուն քով, կամարաձեւ կոյուղիէն հոսող գարշահոտ ջուրը սկսած էր յորդիլ։ Ադռաւը կը ցատկռտէր պատուհանէ պատուհան՝ կրկնելով իր չարագուշակ յանկերգը։ Կեանքի բոլոր տգեղութիւնները փռուեցան աչքին առջեւ ա՛յնքան աւելի տգեղ, որքան աւելի հմայիչ եղած էր երազը...

Ո՞ւր էր արեւաշող լոյսը։ Ո՞ւր էր այդ գիւթիչ էակներուն աշխարհը։ Ապրելու մղձաւանջը կը չրջապատէր զինք՝ անառիկ բերդի մը պարիսպներուն պէս։ Կը մնար միայն դոց գուռ մը, Մա՛հը, որուն բանալին կը գտնուի իւրաքանչիւր մարդ էակին ձեռքը։ Պէտք էր այսօր իսկ բանար այդ խորհրդաւոր ու ազատագրող դուռը։

Ձեռքը գրպանը տարաւ։ Թուղթի թէթեւ խշրտոց մը դրաւեց ուշադրութիւնը։ Անտեսանելի բերան մը խորհրդաւոր խօսքեր կը փսփսար։ Օրելիային ուղղուած վերջին տողերն էին։ Ժերար զարմանքով նայեցաւ դէմը, ու ժպիտով մը մեղմացուց ձայնը ու ըսաւ.

— Որքա՞ն բարի ես. այս գիշեր ինծի այցելեցիր...

Ոտքի ելաւ։ Պաղէն ընդարմացած մարմինը ոչինչ կը զգար։ Քայլ առ քայլ իջաւ ասոիճաններէն։ Գարշահոտ հեղուկը ճկուն օձի մը պէս կը փաթթուէր ոտքերուն։ Գրպանէն հանեց բարակ չուանի կտորը, Մարկերիթ Թագուհիին սեղմիրանին կապը։ Մօտեցաւ ձախ կողմը գտնուող վանդակապատ լուսամուտին ու ձեռքը բարձրացուց։ Հորիզոնական երկաթէ ձողը, որուն պիտի կապէր չուանին ծայրը, իր հասակէն բաւական բարձրը էր։ Սոիզուեցաւ յատակաքար մը զետեղել ոտքերուն տակ, ու չուանին ծայրը ամրօրէն կապեց երկաթէ ձողին, միւս ծայրը վերածեց սահող օղակի մը ու անցուց վիզը։

Պահ մը սպասեց։ Վերը, ախոռին մէջ ձայներ կը լսուէին, մարդիկ սկսած էին արթննալ։ Ադռաւը կողմնակի կը դիտէր իր չարժուձեւերը եւ այլեւս չէր կրկներ իր ողորմելի յանկերգը։

Ժերարին աչքերուն մէջ կը տողանցէին անցեալի ազուոր յիշատակները եւ հոն, ասողերուն անդաստանին մէջ, իրեն կը սպասէր Առաջինը եւ Վերջինը...

Իսկապէս գիշերը մութ էր ու լուսաւոր։

Կոշիկին կրունկովը մէկ կողմ հրեց յատակաքարը, որուն վրայ կայնած էր։ Մարմնին ամբողջ ծանրութեան տակ ցնցուեցաւ պատուհանին երկաթէ վանդակը։ Ոտքերուն ծայրը տակաւին գետին կը հասնէր։ Վերջին ճիգով մը կընկեց սրունքները...

Անգին, Սուրբ Յակոբի զանգակատուներ ժամը վեց կը զարնէր ու լայն փոզոցի մը սալաքարերուն վրայ կը դատնային կառքի մը անիւները։

Ժերար տը Ներվալ, այլեւս չէր լսեր աշխարհի ձայները, անոր հոգին հասած էր արդէն լուսաւոր պարտէզին մուտքին առջեւ, ուր իրեն կը սպասէին բոլոր սիրուած ու կորսուած դէմքերը։

(Շար. 2)

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԿՈՒՏԵԱՆ

ԸՆԿԵՐԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՏԱԳՆԱՊԱՀԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Քաղաքակրթութիւնները սպաննեցին նախամարդուն մօտ նշմարուած ամէն չարժուժ ու բնազդ։ Սակայն այդ բոլոր անմեռ նախատարրերը կը վերածնին այսօր։ Արդիական պարերը ուրիշ բան չեն, եթէ ոչ մեր չարժելու հին բնազդներուն ազատ ու անքողարկեալ արտայայտութիւնները։

Այսօրուան ճիգը մերրաղատումն է ընկերային ամէն կեղծ կապանքներէ եւ մարդկային մեր բնախօսութեան հակասող բարոյական պարտադրանքներէ։ Այդ ճիգը հաւաքական ենթակիտակցութեան վերյայտնութիւնն է։

Այս բոլորը բացատրելի եղան ենթադիտակցութեամբ, մարդկային թաքնուած եսին դիւտով։ Հասկնալի դարձաւ վերջապէս, թէ կարելի չէ արհամարհել ա՛յն, որ մեր մէջ կը կոչուի կենդանական կամ բնազդական։

Տոստոյեւսկիով պեղուած, Ֆրէյտով տեսակէտ ու վարկած դարձած այս անհանդարտութիւնը, այս բնականութիւնը թապու էր երէկ, ստգիլուած մարդ։

Երկու տերունդներու միջեւ ստեղծուած է համբերու լեղու մը, ա՛յն պատռով, որ երկու տերունդներուն միջեւ այսօր գոյութիւն ունին խմաստասիրական, տնտեսական, ընկերային եւ այլ թեքնիք տարբերութիւններ, որոնք յառաջացած են քաղաքակրթութիւններու աննախընթաց յառաջդիմութիւններէն։ Ո՛րքան արագ եղած է զարգացումը, ա՛յնքան խոր բացուած է խրամատը երկու տերունդներու միջեւ, և ո՛րքան բարձր ըլլայ քաղաքակրթութիւնը, ո՛րքան բարձր ըլլայ ժողովուրդի ընկերա-տնտեսական մակարդակը, ա՛յնքան բուռն ու ուժեղ կ՚ըլլայ պոռթկումը, հակադրեցութիւնը։

Հոս նկատի պէտք է առնել երեք կարեւոր ադդակներ.

1.— Տնտեսական փիթռումի կարելիութիւններ եւ տանելի կեանք մը ապրելու բաւարարութիւն։

2.— Քաղաքական եւ ընկերային ազատ կեանք, ուր անհատին ազատութիւնը ըմբռնուի իր բացարձակ իմաստով։

3.— Ընկերային զանգուածին զիտակցութեան ու քաղաքացիական որոշ մակարդակ։

Այս երեք պայմանները կարծէք կը

յարդուին Արեւմտեան Եւրոպայի մէջ, ուր, 1950ական թուականներէն սկսեալ, խենթութեան արշաւը դարձած է յորձանք։

Մինդդոյին կարծիքը, մամուլը եւ աւանդապահ դեկավարութեան բոլոր պաշտօնական գաղափարախօսները միահամուռ խստութեամբ դատապարտեցին եւ կը շարունակեն դատապարտել այդ շարժումները։ «Առանց պատճառի բմբոստութիւն, խենթութիւն, չփացածութիւն» եւ նման դատապարտութեան խօսքեր արտասանելէ յոգնած, իրենք զիրենք պաշտպանելու եւ երիտասարդութեան արտառոյգութիւններուն դէմ իրենց իշխանութեամբ, իրենց ուժով եւ ստեղծած հեղինակութեամբ պայքարելէ յուսախաբ, ընկերութիւնը նոր միայն յանձն կ'առնէ ուսումնասիրել ճանճրոյթը, կատարել առարկայական վերլուծումներ։ Մեր ընկերութիւնը նոր սկսած է համոզուիլ, թէ այդ տղաքը միմիայն անառակներ չեն, եւ թէ՝ անոնց այս ժխտական զիւրքուորումը բուռն զայրոյթի մը արդիւնք է, որ կու դայ նեղքին դատապարտութենէ մը, բարոյական արժէքներու սնանկութենէն։

Անոնք, արդարօրէն, «ոչ» կ'ըսեն չրջապատին, որ զիրենք չի հասկնար։ Եւ որովհետեւ չեն կրնար ուրիշ բան ընել՝ կը մերժեն ճանչնալ իրենց անմիջական չրջապատը, ա՛յն չրջապատը, որ իր հակակշռին տակ առած է ամբողջ ընկերային կեանքը։

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿՐՕՆԸ

Ի՞նչ են այն մեղքերը, որոնցմով կը դատապարտուին այսօրուան երիտասարդները.

1.— Ընդհանուր անհետաքրքրութիւն՝ հոգեւոր կեանքի եւ, առհասարակ, հոգեւոր արժէքներու հանդէպ։

2.— Շեշտուած անհատական եւ եսասիրական ձգտումներ։

3.— Հաճոյամոլութիւն եւ ամէնէն դիւրին միջոցով, ամէնէն դիւրին ու մակերեսային վայելքին իսկ հասնելու ձգտում, նոյնիսկ արուեստական միջոցներով։

4.— Ոչնչապաշտական ձգտումներ։

5.— Սեռային վայելքներու ազատութիւն։

6.— Ամէն տեսակ պատասխանատուութեան մերժում։

Այս բոլորը կարելի է խտացնել «նիւթապաշտութիւն» բառին մէջ։

Այս բոլորը կարելի է կոչել հակակրօնական ձգտումներ։

Բայց այս դատումները ընկերութեան կը պատկանին։ Ընդունելով հանդերձ վերոյիշեալ վերագրումները՝ երիտասարդը զանոնք մեղք չի կոչեր, կը դատանի իրականութիւններ, որոնք մեր մարդկային էութեան անրաժանելի մասերը ըլլալով հանդերձ, փորձած են խեղդել կրօնն ու բարոյական արդելքները։

Երիտասարդութիւնը այս բոլորը ո՛չ միայն կը մերժէ իբր մեղք ընդունիլ, այլեւ իբր նպատակ։ Նիւթապաշտական ձգտումներ՝ այո՛, սակայն անոնք ոչնչ է հակադրուին իրենց դրական սեպուած ծայրայեղութիւններուն, անոնք հակադրեցութիւններ են քաղաքներու դէմ, նախապաշարումներու, արդելքներու, կեղծիքներու դէմ։

Ու անոնք, իրենց կարգին, հարց կուտան ծնողներուն.

— Անկեղծ եղէք ըսելու, որ դուք, մեր տարիքին, ի՞նչ զգացումներ, ի՞նչ ապրումներ եւ ձգտումներ ունեցած էք եւ ինչպիսի՞ զոհողութիւններ պատրաստ չէիք ընելու ձեր երազները իրականացնելու համար։ Այսօր մենք ուրիշ բան չենք ըներ, եթէ ոչ դրսեւորել մեր ներքին ապրումները, որոնք երէկ ձերն էին։ Եթէ ծայրայեղութենց կ'երթանք, պատճառը դո՛ւք էք, ձեր պայքարին դէմ մեր դատը պայքարելու մեր կիրքն է ու զայրոյթը։

Աւելի բուռն է երիտասարդութիւնը կրօնական դեռնի վրայ իրեն ուղղուած քննադատութենց հանդէպ։ Ամբողջ կրօնական պատմութեան ընթացքին, երի-

տասարդութիւնը կը փնտռէ տիպար ընկերութիւն մը, տիպար դաստիարակ մը, տիպար ղեկավարներ, զորս կարելի ըլլայ ճշմարիտ քրիստոնեաներ կոչել։ Երիտասարդները կը փորձեն կեանքին մէջ, մեր աւօրեայ մէջ գտնել մարդիկ, որոնք իսկապէս մխիթարութիւնը տային աստուածաշունչ թելադրութիւններ ապրելու։ Անոնք յոգնած են ճառերէն ու քարոզներէն, յոգնած են խրատականներէն։ Ճշմարիտ դաստիարակութիւնը խօսքը չէ այսօր, արարքն է, կենդանի օրինակը։

Այո, կրօնը կրնայ երիտասարդին ներքին պարապը լեցնել իսկապէս, պայմանաւ սակայն, որ կրօնական ուսման ուսուցիչը իր դժոխքով, իր դժոխային ահռելի չարչարանքներով չփոխանցուի սերունդներուն։ Պայմանաւ, որ երիտասարդին չպատկերացուի Աստուծոյ տիպար մը, անողորմ, անզիջող, ինչպէս իր հայրը, որ զոյգն սայթաքման մը առիթով կը խժռուի եւ, պատժելու իր հեղինակութիւնը պահելու համար, սորբակային խոնարհութիւն կը պահանջէ։

Այսպէս ներկայացուեցաւ Աստուած ու Կրօնական հեղինակութիւնը երիտասարդին մինչեւ այսօր։ Մինչեւ այսօր քրիստոնէութիւնը քարոզողները միայն ու միայն ըսին, թէ ինչ պէտք է չընել եւ ընկերային, հանրային ամէն պարտադրանք ներկայացուցին կրօնական դոյնով, այդպէսով պատճառ դառնալով, որ ընկերութեան դէմ իր ըմբոստութեան մէջ երիտասարդը նաեւ նիզակ ճօճէ կրօնին դէմ, ա՛յն կրօնին, որ դժբախտաբար իր ծնունդէն մինչեւ այսօր դարձած է իշխանութիւն, դարձած է հեղինակութիւն, հաստատած է արդելքներ եւ, վերջապէս, դարձած է հանրային կեանքը կառավարելու կոչուած ղեկավարութեան ձեռքը բաւական ազդու ղէնք։

Կրօնական զգացումներուն բարոյական ուժ տրուեցաւ։ Քիչեր միայն մարդկային իրականութեան մէջ բարտը ունեցած են կրօնին մօտենալու ենթակայական մղումով։ Բոլոր հաւատացեալներուն ջախջախիչ տոկոսը կրօնքը ընդունած է իբրեւ բարոյական պարտադրանք, պարտականութիւն, եւ ասիկա ստեղծած է բնական հակազդեցութիւն մը։

Ահա թէ ինչու երիտասարդութիւնը դէմ ելաւ նաեւ կրօնին։

Այսօր այն տագնապը, որուն մէջ է կրօնը արեւմտեան աշխարհէն ներս, խորքին մէջ տագնապն է քաղաքակրթութեան, որովհետեւ կրօնի պահանջը մեր մէջ ի ծնէ դոյութիւն ունի, որովհետեւ մենք հաւաքական ենթագիտակցութեան ժառանգականութեամբ կրօնական ուժեղ զգացումներ ունինք, բայց տարբեր հարց, թէ հիւլէական այս դարուն, կոտորածներու, անարդարութիւններու այս դարուն որքան կարելի է հարազատօրէն դրսեւորել մեր էութեան մաս կազմող այդ զգացումը եւ մնալ հաւատացեալ։

Ասոր պատասխանը կու տայ երիտասարդը կտրուկ ձեւով։ Ան կարծէք լռելեայն կ՚ընդունի, որ մենք իբրեւ տկար ու մահկանացու էակ՝ անհրաժեշտութիւնը ունինք կրօնին, եւ ասիկա՝ կամայ թէ ակամայ, բայց կը պահանջէ, որ կրօնը դուրս բերուի վերացական ոլորտներէն, չափով մը առարկայանայ, մատչելի դառնայ նաեւ անհատին ընկերային ձգտումներուն եւ պատշաճի ասոր կարելիութիւններուն։ Պէտք է վերջ գտնեն արգելքներն ու պարտադրանքները, որոնք մանրամասնօրէն բացատրուած չըլլալով, պարտադրուածի տպաւորութիւնը կը թողուն երիտասարդին վրայ։

Եկեղեցին երկար ատեն ինքն իր մէջ ամփոփուելէ ետք, երկար ատեն իր գոյութիւնը պարտադրելու եւ պահելու ճիգեր ընելէ ետք, այսօր կը փորձէ վերլուծել այն պատճառները, որոնք երիտասարդական մեծ զանգուածները հեռու կը պահեն իրմէ։

Այսօր եկեղեցին երկու մասի կը բաժնուի։ Տգիմաթիկները կամ պահպանողականները կ՚ուզեն հաստատ մնալ եկեղեցւոյ աւանդական սովորութիւններուն վրայ եւ որոնց համար դարաւոր

աւանդութիւններէն անդամ մը գիջիլ՝ կը նշանակէ որդեգրել գիջումներու սկզբունքը, որ կրնայ մինչեւ իսկ եկեղեցւոյ ամբողջական կառոյցը խնդրոյ առարկայ դարձնել։

Փոփոխութեան կողմնակիցները, ընդհակառակն, կը պնդեն, որ կրօնը թանգարանային հաստատութիւն մը չէ, իսկ իր արժէքները պատմական իմաստ մը չէ, որ կը ներկայացնեն միայն, այլ կեա՛նք իսկ են, հետեւաբար անհրաժեշտ է, որ անոնք ենթարկուին ընկերային կեանքի մեր առօրեայ պահանջներուն եւ անհրաժեշտ է նոյնպէս փոփոխութիւններ մտցնել նաեւ եկեղեցիէն ներս եւ մարդկրօն յարաբերութիւնները դնել հոգեբանական-ընկերային արդի ըմբռնումներուն հիման վրայ։

ԻՏԷԱԼԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Մարդ էակը ընկերային անհատականութիւն դարձնողը, բազմաթիւ ազդակներու շարքին՝ անոր իտէալապաշտութիւնն է։ Ամէն մարդ իտէալ մը ունի։ Այսպէս, կան կրօնի, քաղաքականութեան, գիտութեան ու արուեստի բազմաթիւ ճիւղեր, որոնց հոգիին կապուածութեամբ մարդիկ ստեղծած են իրենց աշխարհները, իտէալները։

Իրրեւ ընկերային անհատ, ամէն մարդ որոշ չափով կ'ունենայ ազգային քաղաքական մտահոգութիւններ։ Այս մտահոգութիւնները եւրոպական ընկերութեան պատկանող անհատներուն մէջ այնքան չեշտուած չեն, որքան Մերձաւոր Արեւելքի ժողովուրդներու երիտասարդներուն մէջ, որոնք շարունակ խոցուած կը նկատեն իրենց հաւաքական գիտակցութիւնը։ Ոմանք անկախութիւն ունին, բայց անկախութիւն մը, որ վիրաւոր է արտաքին զօրաւոր ճնշումով, ներքին ընկերային սիսթեմներու անկայունութեամբ։

Երիտասարդը ո՛րքան կապուած մը-նայ քաղաքական, ընկերային կեանքին, ա՛յնքան իր անհատական փիթռումը կ'իմաստաւորուի դրական նախաձեռնութիւններով։ Ո՛րքան մխրճուի ընկերային, միութենական կեանքին մէջ, ա՛յնքան նուազ ժխտական կը դառնայ։

Երիտասարդին մէջ պէտք է ստեղծել հանրային ջիղ, պէտք է զինք ամէն գնով մղել կուսակցութիւններու, մարզական թէ որեւէ կազմակերպութեան կամ ակումբներու անդամակցութեան։

Ընկերային հաւաքական կեանքով նաեւ պատասխանատուութիւններ կարելի է ասանձնել, ղեկավարութեան գաղափարով կարելի է մեծնալ եւ ղեկավարութեան նուիրապետութեան կորելի է վարժուիլ։ Այս բոլորին կարելի է հանդուրժել, որովհետեւ ընկերային կամ հաւաքական ծառայութիւնը կը դառնայ հաճելի եւ սփոփարար խէալ մը։

Պէտք է օգտագործել խէալներու համար երիտասարդական բուռն ու ստեղծագործ զայրոյթը՝ զայն հաւաքական կեանքին մղելով եւ անոր մէջ առաջացնելով ընկերային գիտակցութիւն։

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ընկերային չափանիշները մերժող, մարդկութեան արժէքները դատապարտող, կեանքէն խուսափող ու դժգոհ երիտասարդը դիւրութեամբ կարելի է պատշաճեցնել մեր կեանքի հրամայականին, եթէ զայն վարժեցնենք աշխատանքի։ Աշխատանքը ընկերային կարեւոր ազդակ մըն է ա՛յնքան, որքան ապրուստը շահելու միջոց մը։ Անո՛վ է, որ առաւելաբար մարդիկ կը դանեն իրենց լինելութիւնը, կը բաւարարուին, իմաստ կու տան իրենց գոյութեան։

Սակայն այս աշխատանքը տառապանքի կը վերածուի, եթէ մարդիկ չկարենան իրենց ձգտումներուն եւ ապրումներուն պատշաճեցնել զայն, կամ հաճոյքի բաժին մը հանել անկէ։

Այսօրուան երիտասարդութեան արտադրութիւններուն պատճառներէն մէկը աշխատանքի դժուարութիւնն է։

Երբ գաղափարապաշտ ոգան նախակրթարանը կամ երկրորդական վարժարանը աւարտած՝ կը փորձէ մուտք գործել կեանքի ասպարէզը, կը բախի զանազան դժուարութեանց։

1.— Շատ քիչ անգամ հիղեր կը թափուին երիտասարդին բացատրելու առեւել աշխատանք մը եւ քննելու իր ֆիզիքական կամ հոգեբանական յարմարութիւնը անոր։ Տղան գործի կը լծուի, բայց շուտով կը լքէ զայն եւ կը ձեռնարկէ այլ գործի մը։ Պատանեկան չրջանը բոլորելէ ետք՝ քիչ անգամ երիտասարդը պիրով կը լծուի իրեն համար իսկական գործին եւ կապուած կը մնայ անոր։

2.— Դպրոցական ժպտուն կամ գորովալի ուսուցիչներուն փոխարէն՝ երիտասարդը իր դէմ կը գտնէ օրէնքին եւ իր հաստատութեան չահուն կոչած զործատէրը։ Եւ միջավայրի այս փոփոխութիւնը, յարաբերութիւններու այս նոր ոճը, բնական է, առաջին տիրթով կը խլաչեցնեն զինք, ու կը ցնցեն։

3.— Անձնական ուժերու որոշ համարումով մը զինուած երիտասարդը ակնկալութիւններով գործի կը լծուի, բայց նիւթական ճնշիմ վարձատրութիւնը կու գայ խորտակելու իր ակնկալութիւնները։ Տկար վարձատրութիւնը երիտասարդին համար այնքան նիւթական մտահոգութիւն չէ, որքան հոգեկան բեկում։

Ցարմար գործ մը ճարելու այս տարւայտումը շատ յաճախ երիտասարդը կ'առաջնորդէ անընկերայնութեան, փողոց կը նետէ զայն, ըմբոստներուն կը միացնէ, ժիտականութիւնը կը գորգացրնէ անոր մէջ։

Վիճակագրութիւնները ցոյց կու տան, որ մասնագիտացած եւ գործին մէջ որոշ տաղանդ ու ձեռներէցութիւն ցոյց տուող երիտասարդը քիչ անգամ կ'իյնայ ըմբոստներու խումբին միանալու փորձութեան մէջ։ Ան իր աշխատանքին մէջ միտք ու հոգի դնելով, անկէ հոգեկան բաւարարութիւն առնելով ժամանակ պիտի չունենայ նման անհեթեթ շարժումներու հետեւելու։

Ուրեմն, աշխատանքին մէջ ձախողութիւնը մարդս կ'առաջնորդէ ընկերային ձախողութեան, իսկ ընկերային ձախողութիւնը ինքնին արդէն անհատական քայքայում կը նշանակէ։

Իրենց գործին մէջ ձախողածներն են դատարկապորտները։

Աշխատանքի վրայ հաստատուած է նմանապէս թէ՛ ընտանեկան եւ թէ անհատական բարոյականը։ Ի զուր չէ ըսուած, որ ծուլութիւնը մայրն է բաղմաթիւ մեղքերու։ Աշխատանքը փրթումն է մարդու անհատական կարողութիւններուն եւ իր եսին իրականացման։

Աշխատանքի, ստեղծագործական ճիգի վարժուած օրեւէ անձի համար մահ է յանկարծ գրկուիլ անոնցմէ։

Թափառող ու անգործ երիտասարդներու մեծ մասը այսօր կարելի է աշխատանքի դարմանման ենթարկել, ընկերայնացնելով եւ անոնց մէջ գոյութիւն ունեցող կիրքը շինարար ու ստեղծագործ արդիւնքի վերածելով։

Այս փորձը արդէն կիրարկութեան մէջ է եւ ուսած արդիւնքը՝ մեծապէս զոհացուցիչ։

ԻՆՉՈ՞Ի «ԱՆԱՒԱԿ» Է ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Անառակ, յանցաւոր, ստահակ կոչուած է երիտասարդութիւնը այսօրուան մեր ընկերութեան կողմէ։ Բայց բոլոր այս պոռթկումները, գործուած յանցանքները ունին իրենց պատմա-ժառանգական, կենսա-ընկերային եւ հոգեբանական պատճառները։

Ամէն բանէ առաջ, երբ կը խօսինք յանցանքի մը մասին, անհրաժեշտօրէն պէտք է ճշդել անոր չափանիշը՝ առնեալ

ժողովուրդի մշակութային եւ ընկերային ըմբռնողութեան լոյսին տակ։

Ընդհանրական են բոլոր այն յանցանքները, թեքումները, որոնք հաւասարապէս դատապարտելի են բոլոր ընկերութիւններու կողմէ։

Յանցանքներուն առաջինը գողութիւն է։ Մեր խօսքը մանկական եւ անդիտակից գողութեան մասին չէ։ Գիտակից եւ դատապարտելի գողութիւնը կը սկսի 12 տարեկանին։

Այլ մարդոց մէջ ամէնէն տարածուած անառակութիւնը գողութիւնն է, իսկ կիներուն մէջ՝ անբարոյականութիւնը։ Յանցագործ այրերու 90 առ 100ը կու գայ աղքատ շրջանակներէն, իսկ անբարոյական կիներուն 50 առ 100ը անբարոյականութեան կը դիմէ իբրեւ ահռելի լուծի մը փոխարէն, կամ իբրեւ հետեւանք դժբախտութեան եւ թշուառութեան։

Այս գլխաւոր պատճառներէն եւոք կու գան միայն բրուտիւնն ու յարձակունակութիւնը, որոնք յանցագործութեան 10 առ 100ը միայն կը կազմեն։

Այս պատճառները առաւելապէս ընկերային եւ տնտեսական էին։ Այժմու ընկերութիւնը կը հաւատայ եւ փառտերով կը փորձէ ապացուցանել, թէ հողեբանական իսկ պատճառները իրենք եւս կրնան մարդիկ այս թեքումներուն մղել։ Ֆրանսացի մեծ իմաստասէր, գրագէտ Ժան-Փոլ Սարթր անհատին ազատութեան մէջ կը գտնէ անոր գոյութեան իմաստը։ Անհատը ազատ է եւ իր գոյութիւնը կրնայ պարտադրել ա՛յն ատեն միայն, երբ կարեւոր նշանակութիւն ունեցող արարք մը կը գործէ։ Այդ կարեւոր արարքով է, որ ան ինքզինք կը պարտադրէ իր շրջապատին եւ անհատականութիւն կը դառնայ, ընկերութեան մէջ իր սեփական դիրքը կ'ապահովէ։ Ասիկա կ'իրագործուի, ըստ իրեն, առաջին հանգրուանին՝ Աստուծոյ ուրացումով եւ մարդուն վախճանականութեան ճանաչումով, որոնց կրնան յաջորդել ժխտական արարքներն ու նոյնիսկ անձնասպանութիւնը։

Յանցագործութեան օրըստօրէ աճած ծաւալը, բազմապատկուող անբարոյական արարքներն ու յանցանքները կը մղեն կարգ մը ընկերաբաններ եզրակացընելու, որ ազատութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ արգելք մը բոլոր յառաջդիմութիւններուն։

Դարերէ՛ շարունակ մարդկութեան բարիքին համար առաջ եկած քաղաքակրթութիւններ կորսուեան մատնուեցան ազատութեան, առաւելագոյն ազատութեան ի խնդիր։ Այսօր ամէնէն շարշարուած, ամէնէն քաշկռտուած բացառութիւնն է այդ ազատութիւնը։ Արդար է Գամիւ, երբ կը գրէ. «Այսօր, ամէնէն չարչարուած արժէքը ազատութեան արժէքն է։ Հարիւր տարուան ընթացքին վանառականամիտ ընկերութիւնը միակողմանի եւ երեւութական կերպով օգտագործեց ազատութիւնը եւ ընկատեց զայն ուելի իրաւունք, քան պարտաւորութիւն...»։ Ճաթոտեցաւ ամբողջ ըմբռնողութեան այդ կառոյցը, որովհետեւ, երբեմն իրաւունքը դերազաս մնաց պարտաւորութենէն, կամ ճիշդ հակառակը, պարտաւորութիւնը կուլ տուաւ ամէն իրաւունք։

Այսօր, արդէն իրաւունքի եւ պարտաւորութեան հարցը կը ծեծուի տրդարութեան ընդհանրական որոնումներու համբով։ Արդարութիւնը, ինքնին, փընտրտուք մը է։ Այսօր անիկա, օրինակ, չի բաւարարուիր գողութեան մը պարագային տրուած վճիռներով միայն, այլ խոշոր փինչուչներով առաջնորդուելով՝ պատրաստակամութիւն ցոյց կու տայ երթալու յանցանքին ակնաղբիւրը, պատիժէն առաջ կը փորձէ երթալ ընկերութեան, անոր պայմաններուն, որոնց մէջ այդ պատիժը ծնունդ առած է։ Ծնունդ առած է, նախ՝ իբրեւ կարելիութիւն, ապա՝ իբրեւ մտածում եւ երրորդ հանգրուանով՝ իբրեւ արարք։

Նոյն գործընթացով պէտք է լուծել վայրագութեան հարցը։

Կարգ մը ընկերութիւններու մէջ ժապաւէններու եւ պարբերական մամու-

լի էջերուն մէջ յայտնուող տեսային ծայրայեղ եւ դրդռիչ տեսարաններուն վրայ խիստ արգելքներ կը դրուին։ Հաւանաբար արդար է այս գրաքննութիւնը, բայց նոյնքան եւ աւելի վնասակար չէ՞ն վայրագութեանց տեսարանները, դողութիւնները, կողոպուտի եւ սպանութեանց զազրելի fաբագործութիւնները, որոնք կու գան երիտասարդին հոգին կարծրացնելու եւ անոր երեւակայութիւնը ժխտական արարքներու մղելու։

Տեղեկատուութեան արդիական միջոցներու աւերը այս ուղղութեամբ անդարմանելի է։ Իւրաքանչիւր տխուր ու սղբերզական լուր՝ — առեւանգում թէ ոճիր, դողութիւն թէ ահարեկչութիւն այնպիսի՛ աշխուժութեամբ, այնպիսի՛ ազդեցիկ յուզականութեամբ կը տրուի, որ ակամայ, ընթերցողը կը տպաւորուի եւ կը ցնցուի։ Կը կարդան կամ կը դիտեն պատկերասփիւռէն այդ դէպքին մանրամասնութիւնները եւ կ՚իւրացնեն զանոնք՝ օր մը օգտագործելու համար դուցէ։

Ուրեմն, մեր քաղաքակրթութեան ընծայած բարիքներն ու տեղեկատուութեան թեքնիքները, այսպէսով, իրենց հոգեբանական խոր ու լուրջ անդրադարձները ունին երիտասարդութեան յանցագործութեան վրայ։

Այս ուղղութեամբ պէտք է յիշել նաեւ արդի գրականութիւնը, շարժապատկերն ու շաբաթաթերթերը, որոնք հակաընկերային եւ հակադաստիարակչական իրենց ձգտումներով ամէն խոչընդոտ կը սպաննեն երիտասարդութեան մէջ։

(Շար. 2)

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՑԵԱՆ

ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻՆ

ԺԱՆ ԺԸՆԷ

ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ՍՐԱՀ ՄԸ

●

ՀԱՅԱՑՈՒՑ
ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ

Ժընէի երկրորդ թատերախաղը՝ «Աղախիններ»ը (Les Bonnes), իրմէ ներկայացուած առաջին թատերախաղն է, որ մեզ կը տանի հայելիներու այս սրահին շատ աւելի խորերը։ Ասիկա առաջին գործն է, որուն մէջ Ժընէ ազատագրած է ինքզինք բանտարկեալներու աշխարհին նեղ արգելարաններէն, առնուազն երեւութապէս։

«Աղախիններ» խաղը կը բացուի Լուի ԺԵ-ի ոճով կահաւորուած ննջասենեակի մը մէջ, ուր չնորհալի տիկին մը կը հանդիպուի իր սպասուհիին կողմէ։ Սպասուհին Գլէր կը կոչուի։

Տիկինը կը պատկանի ազնուական դասուն։ Աղախինը՝ խոնարհ։

Բայց երկուքն ալ, թէ՛ տիկինը, թէ սպասուհին յայտնապէս կը հեղնեն զիրար... Թատերախաղի վերջաւորութեան սպասուհին կ'ապտակէ տիկինը։ Ցանկարծ ահազանգ մը կը հնչէ, ակնթարթի մը մէջ ամբողջ տեսարանը կ'այլակերպուի։ Տիկինը իր նախկին կերպարանքով չի ներկայանար այլեւս, այլ կը փոխակերպուի երկու սպասուհիներէն ա՛յն մէկուն, որ տիկինին բացակայութեան կը խաղար այս վերջինին դերը։ Եւ իրականութեան մէջ Գլէր կոչուող սպասուհին Գլէրը չէր, այլ՝ Սոլանժն էր, մինչ Գլէրն էր, որ տիկնոջ մասը կը խաղայ եւ կը վարուի իր պաշտօնակցուհիին հետ ա՛նպէս, ինչպէս տիկինը պիտի վարուէր սպասուհի Գլէրին հետ։

Ամէն անդամ երբ իրենց տիկինը դուրսն է, երկու սպասուհիները կը խաղան ստրկութեան ցնորային այս խաղն ու վերջնական ապստամբութեան արարքը անոր դէմ, փոխ առ փոխ տիկնոջ դերը խաղալով։ Քաղաքականութեան, էրոթիք սիրոյ եւ խոր ատելութեան ժխաւուլոյժով մը՝ անոնք կապուած են իրենց տիկնոջ, որ իրենցմէ աւելի երիտասարդ ու գեղեցիկ է։ Անոնք պատճառ դարձած են Գարոնին՝ տիկնոջ սիրահարին ձերբակալման, ստրկանութեան յղելով անընտրողիր նամակներ։ Հեռաձայնը կը հնչէ, իմացնելով, որ Գարոնը երաշխաւորութեամբ ազատ կ'արձակուի բանտէն։ Սպասուհիները կը սարսափին այն հաւանականութեան համար, որ իրենց ամբաստանութիւնը երեւան պիտի ելլէ։ Կ'որոշեն սպաննել տիկինը՝ երբ

ան վերադառնայ։ Անոնք թոյն կը լեցնեն տիկնոջ թէյին մէջ։ Տիկինը կը ժամանէ։ Պարոնը ձերբակալման լուրը զայտնի պահած է իրմէ, ու հիշդ այն պահուն, երբ կը պատրաստուի խմել թունաւորուած թէյը, կը նկատէ, որ հեռաձայնին ընկալուչը վերցուած է, եւ սպասուհիներէն մէկը, Պարոնին ապատարձակման լուրին չուրջ անզգոյշ ակնարկութիւն մը դուրս կու տայ։ Տիկինը թէյը խմելու ժամանակ չ'ունենար, կը փութայ դուրս, հանդիպելու համար իր սիրահարին։ Սպասուհիները առանձին կը մնան։ Անոնք կը վերցնեն տիկնոջ եւ սպասուհիի խաղին։ Քլէր դարձեալ կը ստանձնէ տիկնոջ դերը եւ կը պահանջէ, որ բերուի իրեն բաժակ մը թունաւորուած թէյը։ Սոլանժ նախապէս անգամ մը ձախողած էր տիկինը սպաննելու իր փորձին մէջ։ Հիմա Քլէր կը ջանայ ցուցաբերել ի՛ր ուժը։ Ան կը խմէ թէյը եւ կը մեռնի տիկնոջ դերին մէջ։

Երկու սպասուհիները կը տարուբերին ոչ-ատելութեան մէջ, ըլլալով մէկը միւսին հայելին, ցոլացնելով իրական պատկերը։ Քլէր արդէն կ'ըսէ. «Հայելիի մը խարէն դրսեւորուող իմ պատկերս դիտելէն հիւանդ դարձած եմ ես, նման զարշահոտութեան մը»։ Տիկնոջ դերը կատարող Քլէր միաժամանակ կը տեսնէ սպասաւորներու ամբողջ ցեղը՝ իբրեւ բարձր խաւին ձեւագեղծուած հայելին։ «Ձեր սարսափահար, յանցաւոր դէմքերը, ձեր կնճռոտած արմուկները, ձեր հընձեւ հագուստները, ձեր ոտքերի մարմինները արժանի են միա՛յն վանտալու։ Դուք մեր ձեւագեղծուած հայելիներն էք, մեր զզուելի ձեզմը, մեր ամօթը, մեր մուրը»։ Այսպէսով, իրենց տեսածը իրարու մէջ դրսեւորուած տեսնելու պարագան՝ ապահով տէրերու աշխարհին թորտակուած անդրադարձն է, զոր իրենք կը պաշտեն, կը կապկեն եւ որմէ կը զզուին նոյն ատեն։

Բայց Ժընէի հայելիներու սրահը առաւել քան մանուածապատ է։ 1947ին, երբ Լուի Ժուվէ յանձն առաւ ներկայացընել «Ազախինները», Ժընէ նախ պրնդեց, որ երեք կիներու դերերը ստանձնեն այր մարդիկ։ Անգամ մը արդէն յիշած է իր առաջին արձակ երկին՝ «Մադիկներու Տիրամայրը»ին մէջ, որ «եթէ երբեմ խաղ մը բեմ պիտի հանեմ, ուր հերոսները կիներ են, ապա ուրեմն հարկադրուած եմ պնդելու, թէ այս մասերը պէտք է խաղցուին երիտասարդ այրերու կողմէ, եւ ես պէտք է ասոր մասին տեղեկութիւն տամ հանրութեան յայտարարութիւններով, որոնք փակցուած պիտի մնան բեմին աջ կամ ձախ կողմը՝ ներկայացման ամբողջ տեւողութեան»։ Եւ այսպէս, ուրեմն, իրականութեան մէջ աղախինները եւ իրենց տիկինը երիտասարդ այրեր են։

Ինչպէս որ Սարթր մատնանշած է «Ազախիններ»ուն մասին գրած իր փայլուն մերլուծումին մէջ, թատերախաղը զրեթէ ամենայն ճշգրտութեամբ կը վերարտադրէ ա՛յն կացութիւնը, զոր մենք կը գտնենք «Մահաժամ»ին մէջ։ «Ազախիններ»ու Պարոնը, այսինքն՝ բուգակայ մեծ ոճրագործը կը համապատասխանէ «Մահաժամ»ի բացակայ ոճրագործ հերոսին, Ջինազնդակին։ «Ազախիններ»ու տիկինը, որուն գեղեցկութիւնը եւ հարստութիւնը Պարոնին փառքին ցոլացումներն են, կը փոխարինէ «Մահաժամ»ի Կանայ Աչքերը, եւ երկու ազախինները կը ներկայացնեն նախորդ թատերախաղին երկու աւելի երկրորդական տիպարները՝ Մորիսը եւ Լէֆրանը, որոնք, երկուքն ալ, կը սիրեն եւ կ'ատեն տեսնել իրենց սեփական անընդունակութիւնը՝ ցոլացուած իրենց հերոսին աւելի մեծ փառքին մէջ։ Այնպէս, ինչպէս որ Լէֆրան կը սպանէ Մորիսը՝ ինքզինք իրագործելու եւ Կանայ Աչքերուն հաւասարելու ձգտումով, նոյնպէս եւ Քլէր կը զիմագրաւէ մահը, սոխպելով Սոլանժը, որ հրամցնէ իրեն թէյի թունաւոր բաժակը։ Մենք կը վերադառնանք բանտարկեալի ցնորքին, ա՛յն վտարեալին, որ ամուլ փորձեր կ'ընէ՝ հասնելու համար ակընկալութեան եւ պատկանելիութեան աշխարհին։

Բայց տիկինը եւ իր հոմանին, այսինքն՝ աղախիններուն տէրերը, չեն ներ-

կայացներ ոճրագործներու նուիրապետութեան աւելի բարձր դասը միայն, ինչպէս էր պարագան «Մահաժամ»ի Զիւնուզնակին ու Կանաչ Աչքերուն։ Անոնք նաեւ յարգալիր ընկերութեան մը պատկերն են, արդարներուն (les justes) փակ աշխարհը, որմէ որբացած ընկեցիկը, ծընէ, ինքզինք արտաքսուած եւ մերժուած կը զգայ՝ իբրեւ հրէշայնութեան մը զոհը։ Իրենց տէրերուն դէմ ազատիններուն ապստամբութիւնը ընկերային արտայայտութիւն մըն է, այսինքն՝ յեղափոխական արարք մը, որ երանգաւորուած է հայրենաբաղձութեամբ ու կարօտախտով, նման ա՛յն ապստամբութեան, զոր կը մղէ երկինքէն վռնտուած Սատանէլը՝ լոյսի աշխարհին դէմ, որմէ ինք զրկուած է յաւիտենապէս։ Ահա թէ ինչու այս ապստամբութիւնը իր արտայայտութիւնը չի գտներ բողոքին մէջ, այլ կը գտնէ ծիսականութեան մէջ։ Ազատիններէն իւրաքանչիւրը հերթով կը խաղայ տիկնոջ դերը, տիկին մը ըլլալու իրենց ցանկութիւնը արտայայտելով, եւ իրենցմէ իւրաքանչիւրը, իր կարգին, պարտականութիւն կը զգայ ըլլալ միւս ազատինը, պաշտամունքի եւ ծառայամատութեան կացութենէն անցնելով, հասնելու համար հետզհետէ վայրագ վախճանին — ասիկա առելութեան եւ նախանձին դրսեւորումն է ա՛յն թափառականին, որ ինքզինք կը տեսնէ իբրեւ մերժուած սիրահար մը։ Այս ծիսականութիւնը, ինչպէս մատնանշած է Սարթրը, տեսակ մը Սեւ Զանգուած (Black Mass) է, այսինքն՝ փափաքը սիրելի ու նախանձելի զարձած առարկայ մը սպանելու, ոտնած եւ յաւիտենապէս կրկնուող նման արարողութեան մը, նման հաստատակամ արարքի մը։ Այսպիսի ծիսականութեան մը եղծումը ուղենիշի կը վերածուի — գործողութիւն մը, որ բնաւ պիտի չներկայացուի իրական աշխարհին մէջ եւ որ կը կրկնուի շարունակաբար, իբրեւ պարզ խաղ մը։ Եւ մինչեւ իսկ այս ծիսակատարութիւնը չի հասնիր իր բնական գագաթնակէտին։ Տիկինը միշտ ալ կը վերադառնայ անոր՝ գագաթնակէտին հասնելէ առաջ։ Ինչպէս Սարթր կը նշկատէ, այս ձախողութիւնը, ենթագիտակցութեան մէջ։ Խաղը կը խաղցուի այնպիսի եղանակով մը, որ այն ժամանակը, որ կը վատնուի նախնական պատրաստութիւններուն համար՝ միշտ աւելի երկարատեւ կ՚ըլլայ, քան այն ժամանակամիջոցը, որ կը հատցնէ գագաթնակէտին։

Փափաքին զոհացում տալու ծիսակատարութիւնը ամբողջութեամբ անհեթեթ արար մրն է — ասիկա ինքզինք ցոլացնող ունայնութիւնն է, այսինքն՝ ցանկութիւնը կատարելու բան մը, որ բնաւ չի կրնար կամրջել իրականութիւնը երազէն բաժնող կամուրջը, չի դրսեւորեր նախնականին համակրալից կախարդանքը, որ անկարող է դիմադրաւել ցուրտը, իրական աշխարհին անդեւեղելի կարծրութիւնը։ Նման ծիսականութիւն մը կը պատկանի ջղագարութեան եւ անխուսափելի մտասեւեռումներու աշխարհին։ Ասիկա կեանքէն հրաժարիլու արտայայտութիւնն է։

Ծիսական արարին յղացքը, ուրիշ խօսքով՝ իրականութենէն կորուած գործողութեան մը մոգական կրկնութիւնը, ծընէի որեւէ մէկ թատերգութիւնը հասկընալու բանալին է։ Ինք անձնապէս նկարագրած է ծիսականը եւ թատերականը նոյնացնելու իր դադափարը՝ հրատարակիչ Փովերթին ուղղուած իր մէկ նամակին մէջ, որ իբրեւ յառաջաբան կը ծառայէ «Ազախիններ» թատերախաղին մէկ հրատարակութեան.

«Գրեթէ մեր բեմին նմանող բեմի մը վրայ եռք ու հարցը կը վերաբերի ճաշի մը աւարտը վերակառուցանելու գաղափարին։ Մեկնելով այդ ելակէտէն, ուր դժուար թէ անձ մը կարելի ըլլայ երեւան հանել այլեւս, արդիական ամենաբարձր թատերախաղն իսկ իր արտայայտութիւնը գտած է երկու հազար տարիներէ ի վեր ու ամէն օր՝ զոհաբերելու համար զանգուածին։ Խորքը կ՚ամերեւութանայ զարդեղէններու եւ խորհրդանիշներու ծանրութեան տակ... Ներկայացում մը, որ ի վիճակի չէ ներգործելու

իմ հոգիս վրայ, արժէք չունի ինծի համար... Կասկած չկայ, թէ արուեստի պարտադիր օրէնքներէն մէկն է փոխարինել կրօնական հաւատքը գեղեցիկին բաղկացուցիչ եւ ազդու տարրերով: Այս գեղեցիկը առնուազն պէտք է ունենայ բանաստեղծութեան մը զօրութիւնը, այսինքն՝ ոճիրի մը զօրութիւնը: Բայց աւելի լաւ է չխօսիլ այդ մասին»:

Ժրնէի կը մերժէ ընդունիլ թատրոնը իբրեւ պարզ զբօսավայր մը: Ան չի հաւատար, որ Արեւմտեան աշխարհին մէջ թատրոնը երբեւիցէ կրնայ ունենալ իրաւ հաղորդակցութեան մը ուժը, դառնալ իրաւ օղակ մը մարդ էակներուն միջեւ: Ան կը մտաբերէ, որ Սարթր անգամ մը ըսած է իրեն, թէ ինք մէկ անգամ միայն ունեցած է ազդեցութիւններու նման փորձառութիւն մը թատերական ներկայացման մը ընթացքին, ուրիշ խօսքով՝ Մենդեան թատերախաղի մը ընթացքին, պատերազմական բանտարկեալներու ճամբարի մը մէջ, երբ Ֆրանսական թատերախաղի մը կարօտախտը բեմին վրայ յանկարծ վերստեղծեց նոյնինքն Ֆրանսան, հայրենիքը եւ անոր մոգական միութիւնը, ո՛չ միայն բեմին վրայ, այլեւ հանդիսականներուն մէջ եւս: Բայց, կ՚ըսէ Ժրնէ.

«Ես չեմ գիտեր, թէ թատրոնը ինչ բանի պիտի նմանի Ընկերվարական աշխարհի մը մէջ: Ես աւելի լաւ կրնամ հասկնալ, թէ ինչի՛ կրնայ նմանիլ անիկա Մաօ Մաոներուն միջեւ, բայց Արեւմտեան աշխարհին մէջ, աւելի եւ աւելի մտեռուան գաղափարով տարուած՝ անիկա պարզապէս կրնայ բիւրեղացնել ինքզինքի կատակերգութեան «անդրադարձումին» մէջ, ցոլացումին ցոլացման մէջ, որ ծիսական արտայայտութեան մը կրնայ վերածել ընտիրը ու մերձենալ անտեսանելիին: Եթէ անձ մը ընտրած է քաղցրօրէն մեռնելու հայեցողութիւնը, ապա ուրեմն ան պէտք է անաչառօրէն համոզուի եւ դասաւորէ թաղման խորհրդանիշները: Կամ ալ, պէտք է ընտրէ ապրիլը եւ երեւան հանէ թշնամին: Ինծի համար թշնամի բնաւ գոյութիւն պիտի չունենայ, հայրենիքի՝ նոյնպէս, ոչ իսկ վերացական կամ ներքին հայրենիք մը: Եթէ ես ցնցուիմ, ատիկա պիտի ըլլայ իմ անցեալի հայրենիքիս կարօտախտին միջոցաւ: Միմիայն ստուերներու թատրոն մը կրնայ տակաւին գրաւել զիս»:

*Ժրնէի թատրոնը, չատ իրաւ առու

փորձէ ընել ինք՝ «Աղախինները» թատերախաղին մէջ։

«Ես փորձեցի հաստատել տիպանոսիասիոն մը, ուր ճաւ թոյլ տուի ինքզինքիս ճարտասանական ոճի մը կիրարկումը. թատրոնը պիտի առաջնորդուէր դէպի թատրոն։ Այսպէսով, ես յուսացի ապահովել ճաւ տիպարներուն բնաբնոյումը... Հեռաւոր ճամբով փոխարինելու համար զանոնք խորհրդանիշներով, նախ՝ նկատի ունենալով իրենց բուն էութիւնը, եւ դեռ հաւատարիմ մնալով հեղինակին եւ հանդիսականին միջեւ այս միակ միջոցով կապ հաստատելու սկզբունքին. կարճ, դպրեցի բեմին վրայ տիպարները դառնան պարզապէս այն փոխարերութիւնները, զորս անոնք պէտք է ներկայացնէին...»։

Այսպէսով, իրենք իրենց մէջ առած՝ տիպարները երեւութապէս միայն տիպարներ են — անոնք պարզ խորհրդանիշներ են, հայելիի անդրադարձներ, երազներ՝ երազի մէջ։

Երբ 17 Ապրիլ 1947ին, Փարիզի Ալթէնէ թատրոնի բեմին վրայ «Աղախինները» թատերախաղին առաջին ներկայացումը տեղի ունեցաւ, Ժրանսայի ամէնէն նշանաւոր դերասան Լուի Ժուվէի բեմադրութեամբ, ժրնէ այն տպաւորութիւնը ձգեց, որ ինք այլեւս ինքզինք պարտադրած է թատերական աշխարհին։ Իր արձակը արդէն շրջադայութեան դրուած էր հրատարակչական տուներու մասնաւոր հրատարակութիւններով։ Իրականութեան մէջ, Ժուվէն էր, որ թելադրած էր ժրնէի գրել այդ թատերախաղը։ «Այդ օրերուն, հոչակաւոր դերասանի մը կողմէ յանձնարարուած իմ թատերախաղը գրուած էր ո՛չ թէ ունայնամտութեամբ, այլ ծանրոյթով»։ Զգլխիչ գեղեցկութեամբ մը մեկնաբանուած Քրիսթիան Գէյարի կողմէ՝ «Աղախինները» թատերախաղը ունեցաւ նկատուելի յաջողութիւն։ Այսուհանդերձ, ժրնէ ամբողջովին բաւարարուած չէր ասկաւին։ 1948ին, ան դատապարտուած էր ցկեանս բանտարկութեան։ Այս դատավճիռը բեկանուեցաւ չնորհիւ այն ազդեցութեան, զոր ստորագրած էին խումբ մը գրական մեծ դէմքեր, ի շարս որոնց՝ Սարթրն ու Քոքթոն։ Այսպէսով էր, որ ի վերջոյ, կրցան համոզել Հանրապետութեան նախագահը, որ ներում չնորհէ ժրնէի։

Պէտք է ենթադրուի, որ այդ նոյն ժամանակաշրջանին է, որ պատրաստուած էր ժրնէի առաջին ֆիլմը։ «Սիրոյ երգ մը» («Un chant d'Amour»), անխօս ժապաւէն մը, կէս ժամուան տեւողութեամբ, որ յստակօրէն կը վերահաստատէ ժրնէի արձակին կարդ մը գլխաւոր թեմաները։ Անիկա այնքան ուժեղ կերպով էրոթիք էր, որ կարելի չէր զայն իր ամբողջութեամբ ներկայացնել հանրութեան։ Արդարեւ, երբ ժապաւէնը պիտի ցուցադրուէր Սան Ժրանսիսքոյի մէջ, արգիլուեցաւ։

«Սիրոյ երգ մը» ժապաւէնը կը բացուի բանտի մը ճակատին զարնուող փամփուշտով. այդ բանտը ունէր երկար ձեռքերով պատուհաններ։ Հոն, երկու յարակից պատուհաններէ՝ երկու ձեռքեր կ'երկարին առաջ, ջանալով բռնել զիրար։ Բանտապահ մը, որ գիտած էր այս տեսարանը, վեր կ'ելլէ խուզարկութեան համար։ Խումբ մը խուցերու դաղանաձակերէն ան կը տեսնէ զանազան բանտարկեալներ՝ ինքնաէրոթիք (auto-erotic) վարժութիւններու զանազան ձեւերուն մէջ։ Հետեւած ըլլալով երկու ոմբապարտներու, տարեց մարդ մը եւ տղեկ մը, (որոնց փորձերը իրարու հետ հաղորդակցելու եւ ցոփ երեւակայութիւններ ընելու վկայութիւն կու տան), բանտապահը կը մտնէ խուցերէն մէկուն մէջ եւ վայրագօրէն կը հարուածէ տարեց մարդը, բայց, հակառակ ատոր, ցաւը պարզապէս կը բարձրացնէ զոհին հաճոյքը, իր էրոթիք քմայքներուն յանձնուած զոհին հաճոյքը։ Դարձեալ բանտի մեծ բակին մէջ, պարտուած բանտապահը կը նկատէ, թէ ինչպէս երկու ձեռքերը նորէն կ'երկարին դէպի առաջ յարակից պատուհաններէն։ Անոնցմէ մէկը բռնած է ծաղկեփունջ մը։ Այս գործողութիւնը առիթ կու տայ, որ հա-

զորդակցութիւն մը ստեղծուի երկու սիրահարներու միջև։ Բարձրօրէն տիպարային յատկութեամբ եւ զգայնոտ միասեռականութեան երեւակայութիւն մը պատկերուած է հոն, այսինքն՝ ծննդական գործարանները կը վերածուին վարդի փունջերու, ծաղիկներու դափնիներ կը միացնեն բաժնուած զոյգը։ Այսուհանդերձ, ասիկա ուշագրաւ ժապաւէն մըն է, լաւ պատրաստուած սարսափազդու փաստաթուղթ մը՝ բանտարկեալներու սեռային թշուառութեան մասին։

Ժընէի բախտը օգնած է իրեն։ Ֆըբանոայի առաջնակարգ հրատարակիչներէն մէկը սկսած էր լոյս ընծայել իր գործերը կոթողական հրատարակութիւններով, որոնց առաջին հատորը լոյս տեսաւ 1951ին, Սարթրին ներածական մեծ ուսումնասիրութիւնը, 1952ին, առաւել ուրիշ հատոր մը՝ 1953ին։ Բայց կը թուի, թէ Ժընէ գաղրեցաւ թատերգութիւն գրելէ։ Իրականութեան մէջ՝ իրեն համար ըսուեցաւ, թէ «Աղախինները» եւ «Մահուան» թատերախաղերու կապակցութեամբ ունեցած իր փորձառութենէն ետք (առաջինը ներկայացուած Մաթիւրնի Թատրոնին մէջ, 1949ի Փետրուարին), ան կ'ուրանայ թատրոնը։ «Աղախինները» թատերախաղին մասին, Փօլէրթի ուղղած իր նամակին մէջ, ան կը խօսի թատրոնին եւ այդ ալիարհի շուրջ ունեցած իր տհաճութեան մասին. «Բանաստեղծը, որ (իր բախտը պիտի փորձէ ասոր մէջ), իր դէմ պիտի գտնէ դերասանները ու թատրոնին հասարակութեան վանողական ապուշութիւնը։ Մարդ չի կրնար բան ակնկալել մասնագիտութենէ մը, որուն հանդէպ այնքան քիչ լրջութիւն ու ակնածանք ունի։ Անոր մեկնակէտը, գոյութեան իմաստը (raison d'être), ցուցամոլութիւնն է։

Բայց 1956էն սկսեալ, Ժընէ գրել սկսած էր ուրիշ թատերախաղ մը՝ «Պատշգամբը» («Le Balcon»)։

(Շար. 2)

ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻՆ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

●

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ — Ա. ՀԱՏՈՐ, Պէյրութ, 1972:

ՀՐԱՇԱԼՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, Նշաձ Պէշիկ-թաշլեաձ, Պէյրութ, 1972:

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

مدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

●

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

●

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՎԱՐՉ ԽՄԲԱԳԻՐ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՄԲԱԳԻՐ

Պ. ՍՆԱՊԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ

Ց. ԳԵՂԱՐԴ

Տ. ՊՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ

Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ

† ԵՊ. ՊՕՅԱՃԵԱՆ

խմբագրութեան հասցէ

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

Հեռաձայնի թիւ 296898

ՏՊ. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՓԱՆՈՍԵԱՆ . . . . . Ժամանց

Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ . . . . . Մղձաւանջ

Ն. ՎԻՐԱՊԵԱՆ . . . . . Փարձուքեան լեռ

Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ . . . . . Ժաղ Փրէվէր

Ց. ՁՈՐԵՑԻ . . . . . Հայկական ուղեւորավէպ

Ա. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ . . . . . Ինչպէս ծաղիկն առաւօտեան

⁂ . . . . . Անգամ մը եւս...

Զ. ԵՍԱՅԵԱՆ . . . . . Պետրոս Դուրեանի շիրիմը

Ա. ԵՐԿԱԹ . . . . . Մահերգ Պետրոս Դուրեանի համար

Վ. ԴԱՒԹԵԱՆ . . . . . Հանճարեղ տրտունջ

Ա. ԱԼԻՔԵԱՆ . . . . . Իմ Դուրեանը

Ն. ՁԱՐԽՈՒՏԵԱՆ . . . . . Ժերար տր Ներվալ

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ . . . . . Բազմատարրութեան եւ բազմակենտրոնութեան հարցերը արդի պայմաններում

Ա. ՏՕՆՈՅԵԱՆ . . . . . Տագնապահար էքիտասարդութիւնը

Մ. ԷՍԼԻՆ . . . . . Ժան Ժրնէ (թարգմ. Է. Սարաճեան)